

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԱՆՈՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՈՎ ՇԱՂՈՒԱԾ ՆՈՐԻ ՀՄԱՑՔԸ ԸՆԴՈՒՆԻԼ ՈՐՊԷՍ ԻՆՔՆԱԿԵՐՏՈՒՄԻ ՀՐԱԻԷՐ

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի սեմին, այս տարի կրկին, Նորի ընկալումը կասկածանքով լեցուց մարդ անհատի անճանկան եւ ընկերային ներաշխարհը: Անցնող տարիները յարգած չէին իրենց տուած խոստումները: Ոչ միայն չէին յարգած, ընդհակառակը՝ առանցիկապես հիասթափեցուցած էին զինք: Իրենց խոստումնադրուծ նախորդներէն ժողովրդած մտահոգութիւնները հետապնդել էին զինք մինչեւ Նորի՝ 2010-ի գալուստը:

Միջազգային մակարդակի վրայ, տարիներէ ի վեր աշխարհին սպառնացող ահաբեկչական գործողութիւնները կամ պատերազմական մագլցումները ոչ միայն չէին դադարած կամ նուազած (Աֆղանիստանի, Իրաքի եւ Միջին Արեւելի մէջ եւ այլուր), ընդհակառակը՝ նոր թիրախներ նշանակուած էին, կրկնակիօրէն վտանգելով մարդկութեան ֆիզիքական ապահովութիւնը եւ համաշխարհային խաղաղութիւնը:

Ահաբեկչական գործողութիւնները, կամ պատերազմական մագլցումները բառապատկած էին միջազգային ձգտումները: Պատճառ դարձած էին միջազգային տնտեսական եղեռնական նգնաժամին:

Այսօրուայ դրութեամբ՝ անելի մատնուած են աշխարհի տէրութիւնները, գերգոր կամ ոչ, հաւասարապէս բոլորը: Անոնք անտեսած էին այն բոլոր յորդորները, որոնք կը զգուշացնէին զիրենք՝ թէ զինու ուժի գործածութիւնը խաղաղարար լուծում չէ: Թէ՛ ան ժողովրդավար կարգերու հաստատման միջոց չի կրնար ծառայել, այլ՝ կ'առաջնորդէ դէպի փակուղի, անապահովութիւն, ամէնօրեայ սպանդ, ինքնաբռնականութիւն, ինչ որ այսօրուան դրութիւնն է քիչ մը ամէն կողմ:

Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, դիտել տանք, թէ միեւնոյնը մնաց Հայաստան աշխարհի պարգած իրավիճակը՝ ինչ որ էր 2009-էն առաջ կամ 2009-ի շրջանաւարտ տարին: 2009 շրջանաւարտ տարին, Հայաստան, դէմ յանդիման մնաց բազմաբնոյթ, ներքին թէ արտաքին տագնապներու, որոնք կը սպառնային անոր գոյութեան: Այսօր, ինչպէս անցեալ խոստումնադրուծ տարիներուն, Հայաստան ենթակայ մնաց թուրք իշխանութիւններու կողմէ հաստատուած շրջափակումին, որ դժուարութիւններ կը յարուցանէր անոր, տնտեսապէս կարենալ բացուելու համար արտաքին աշխարհին:

Կրկին անտեսուեցաւ հայոց Ցեղասպանութեան նանաչման, դատապարտման եւ հատուցման արդար պահանջատիրութիւնը, երբ նախաձեռնուեցաւ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ առեղծուածային բրոքոնոլի ստորագրութեան, կնքահայրութեամբ՝ գերգոր տէրութիւններու, գլխաւորութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու:

Հայաստանը այդ շրջափակումէն դուրս բերելու համար՝ գերգոր պետութիւններ, պարզապէս իրենց տնտեսական շահերէն մեկնելով, կը փորձէին ննչել կողմերուն վրայ՝ բանալու Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանները, ծանօթ բրոքոնոլներու ստորագրութեան նամբով:

Հայաստանի պարագային եւս պիտի գործէր գերգոր տէրութիւններու կողմէ ծրագրուած դասական, բար լոնկայն ձեւի ուժի սպառնալիքը, խտրական ֆաղափականութիւնը եւ նենգամիտ դիւա-

նագիտութիւնը, պիտի նպաստաւորէր Թուրքիան, որ կը փորձէր առանցիկապես օգտուիլ այս առիթէն:

Տարակոյս չունինք, այս սահմաններու բացման ծիծաղելի նախաձեռնութիւնը, վստահարար պիտի արժանանայ ձախողութեան, ինչպէս եղաւ ուրիշներու պարագային: Արդարութիւնը պիտի յաղթանակէ ամէն դէպքին:

Մեր ամանորեան մտորումները տարածելով մեր ազգային եւ հայրենական կառոյցներուն վրայ՝ Նորի ընկալումը, նոյնպէս, դարձաւ կասկածելի:

Հայրենի ներաշխարհական բատերաբեմէն ներս, իշխանութիւնները համարեցան իրենց հակաժողովրդավարական կարգավիճակին մէջ: Իշխանութիւն-ժողովուրդ անմիաբանութիւնը տկարացուց մեր հայրենական կառոյցները: Հակասահմանադրական եւ ապօրէն աշխատելաձեւերը սրեցին անվստահութիւնը ժողովրդական մակարդակի վրայ: Այս գործընթացը բնաւ չի խոստանար նպաստաւոր գալիք: Տնտեսական վերելք: Կրթական եւ մշակութային ծաղկուն եւ ժողովրդանուէր գործունէութիւն: Մեր եկեղեցական տագնապի լուծում, եւ վերջապէս, Հայրենիք-Սփիւռք կապերու սերտացում:

Թող որ, շրջանաւարտ 2009 տարեշրջանը հիասթափեցուց մեր ժողովուրդը, բայց պիտի չընկրկինք բնաւ՝ ոչ մէկ պարագային: Պէտք չէ գոհը դառնանք այդ բոլորին: Պէտք չէ յուսահատինք եւ տեղի տանք:

Ինչ ալ ըլլան միջազգային, շրջանային եւ ներազգային տուեալ պայմանները, պիտի չյուսահատինք բնաւ: Ամանորը, մեր անճանկան, հաւաքական, ազգային եւ հայրենական կառոյցներուն մատուցուած ոսկի պատեհութիւնն է: Պիտի վերանայինք մեր բոլորած տարուան ընթացքին կատարած թերիւններուն եւ անբաւարարութիւններուն: Պիտի սրբազրեմք գանձնք՝ եկող 2010 թուակիր նոր տարուան ընթացքին:

Ամանորի տօնախմբութիւններու փարթամ սեղաններու շուրջ տեղի ունեցող հանելի կերուխումներու, կենսայորդ երգ ու պարերու շարքին, շոյլուած բարեմադրութիւններու բացայայտ միտք բանին, հոգեբանական իմաստը եւ պատգամը՝ մէկ է. մնալ միշտ հաւատաւոր, լուստես, հետեւողական եւ պայքարի պատենէշի վրայ: Այս՝ յանուն բերհառատ, լուսաւոր եւ յաղթական գալիքին:

Արդա՛ր է, որ ունենանք այդ ակնկալութիւնը Նոր Տարուան սեմին

Արդա՛ր է Նորի վրայ դրած մեր գրաւը:

Արդա՛ր է Նորով պատգամուած հաշուեյարդարը, յանուն ինքնավերաբերումի, յանուն Ամանորի կառուցողական խորհուրդի պահպանման, յանուն լուսաշող ապագային:

Նորը՝ նոր լոյս ծագող արշալոյս ըլլալէ պիտի չհաղորի բնաւ: Նորը՝ նոր յոյս մուծող հրաշալիք պիտի մնայ միշտ:

Այս հաստատումներով դիմաւորենք 2010-ի Ամանորը:

Մաղթենք, որ ան բերէ խաղաղութիւն, բերէ արդարութիւն, համերաշխ կեանք եւ երջանկութիւն բոլորին, եւ խոովեալ ազգիս հայոց, ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս աշխարհի:

Շնորհաւոր Նոր տարի եւ Սրբ. Ծնունդ:



Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը



Կը շնորհաւորէ իր բոլոր ընկեր-ընկերուհիներուն, հայ ժողովուրդի եւ իր գոյգ հանրապետութիւններուն՝ Հայաստանի եւ Արցախի նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը

Այս բարեբաստիկ առիթով ան բոլորին կը մաղթէ, որ 2010 տարին ըլլայ փառաբանութեան, արեւշատութեան եւ յաջողութեան, ինչպէս նաեւ ազգային ձգտումներու նուիրագործման, Հայրենիքէն ներս բարօր կեանքի ստեղծման, Սփիւռք-Հայրենիք կապերու առաւել սերտացման, ազգային միասնութեան ձեռքբերման եւ աշխարհի իսաղաղութեան բախտորոշ տարի:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ



Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն ուրախ առիթով՝ «Մասիս» Շաբաթաթերթի վարչութիւնն ու իմբագրական կազմը ջերմօրէն կը շնորհաւորեն ողջ հայութիւնը, որ ի Մայր Հայաստան եւ ի չորս բոլորն աշխարհի:

Մասնաւոր շնորհաւորութիւններ «Մասիս»ի ընթերցողներուն, մեր թերթին մէջ ծանուցող հաստատութեանց, հովանաւորներուն եւ աշխատակիցներուն, մաղթելով առողջութիւն, յաջողութիւն եւ հայութեան արդար ցանկութեանց իրականացում:



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՔՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԱՐԻ ՄԸ ԵՒ Ս

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

2009 տարին անցավ պատմութեան ու հայ ժողովուրդը նոր տարին դիմաւորեց իր Հայրենիքի համար ոչ այնքան մեծ յոյսերով ու ակնկալութիւններով: Երկրի անկումը շարունակուեցաւ բոլոր մակարդակներու վրայ: Տնտեսական ճգնաժամ, քաղաքական բանտարկեալներ, մամուլի ու խօսքի ազատութեան կաշկանդումներ, հերթական կեղծ ընտրութիւններ, պատմական ու ազգային իրաւունքներու գծով անտեղի գիշումներ ու տակաւին կարելի է երկարել շարքը այն տազնապներուն, որոնք շարունակեց դիմագրաւել Հայաստանը անցնող ամիսներուն: Բոլորելով կորսուած տարի մը եւս, աշխարհացրիւ հայ ժողովուրդի իղձերն ու ակնկալիքները ոչ միայն մնացին անկատար, այլ նաեւ, տազնապահար կացութիւնը առաւել աւելի եւս խորանալով՝ մեր ազգը դրին դժուարին նոր կացութիւններու առջեւ:

ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՉ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Անկասկած տարուայ գլխաւոր իրադարձութիւնը Հայ-թրքական յարաբերութիւններու գծով արձանագրուած զարգացումներն էին՝ երկու Արձանագրութիւններու տեսքով:

Ապրիլ ամսուայ սկզբնաւորութեան թրքական մամուլը սկսաւ տեղեկութիւններ հաղորդել Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ընթացող գաղտնի բանակցութիւններու մասին, յայտնելով թէ, արդէն իսկ համաձայնութիւն գոյացած է դիւանագիտական կապեր հաստատելու եւ սահմանը բանալու շուրջ: Այս կանխատեսումները, կարճ ժամանակ ետք սկսան իրականութիւն դառնալ: Այն պահուն երբ Հայ ժողովուրդը կը պատրաստուէր նշելու Յեղասպանութեան 94-րդ տարելիցը եւ անհամբեր կը սպասէր Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի ապրիլեան յայտարարութեան, Հայաստանի իշխանութիւնները եկան մեծ հարուած հասցնելու մեր ազգային շահերուն: Ապրիլ 22-ի ուշ երեկոյեան յայտարարուեցաւ թէ, Հայաստան եւ Թուրքիա համաձայնութեան հանգամ են իրենց «երկկողմ յարաբերութիւններու կարգաւորման համապարփակ շրջանակի շուրջ՝ երկու կողմերուն գոհացնող եղանակով»:

Հայ-թրքական այս համաձայնութիւնը, իր ժամկետով եւ անորոշ բովանդակութեամբ, եկաւ խոր ընդգոյմ յառաջացնելու ե՛ւ Հայաստանի, ե՛ւ սփիւռքի տարածքին: Իշխանութիւնները նախ փորձեցին մեղմացնել յառաջ եկած մտահոգութիւնները, սակայն մի քանի ամիս ետք ազգը դրին կատարուած իրողութեան մը առջեւ՝ երկարատեւ իր բոլոր հետեւանքներով:

Հայ ժողովուրդի պատմական իրաւունքներու Հաշտոյն կատարուած միակողմանի գիշումներու շնորհիւ, ներառեալ Յեղասպանութիւնը կասկածի տակ առնող յանձնաժողովի ստեղծումը եւ սահմաններու վերջնական ճանաչումը Հայաստան եւ Թուրքիա համաձայնութեան եկան վեց շաբթուայ ընթացքին դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու շուրջ: Օգոստոս 31-ին հրապարակուեցան նախատորագրուած երկու արձանագրութիւններ՝ «Արձանագրութիւն երկու երկրներու միջ-դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման մասին» եւ «Արձանագրութիւն երկկողմ յարաբերութիւններու զարգացման մասին»:

Այս Արձանագրութիւններուն առթիւ Հայաստանի ու Սփիւռքի մէջ բարձրացաւ բողոքի լայն ալիք: Սակայն, այդ բոլորը չկրցան կանխել Արձանագրութիւններու ստորագրումը: Հոկտեմբեր 10-ին, բաւական դժուարութիւններէ ետք, Զուլիքերիոյ Զիւրիխ քաղաքի Համալսարանէն ներս երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները, շրջապատուած մեծ պետութիւններու եւ միջազգային կառույցներու բարձրաստիճան ներկայացուցիչներով, ստորագրեցին երկու փաստաթուղթերուն տակ: Սակայն, մեկանը չչորցած, թրքական կողմը սկսաւ առաջ մղել իր պայմանները, որոնցմէ գլխաւորը՝ «Ատրպէյճանի գրաւեալ տարածքներէն» հայկական զօրքերու հեռացումը էր: Արդարեւ, Արձանագրութիւններու ստորագրման յաջորդ օրն իսկ, Թուրքիոյ վարչապետ Ռէժեփ Թայիփ Էրտողան յայտարարեց, որ իրենք չեն վաւերացնէր Զիւրիխի մէջ ստորագրուած հայ-թրքական Արձանագրութիւնները, քանի դեռ հայկական զօրքերը դուրս չեն բերուած Ատրպէյճանի «գրաւեալ» տարածքներէն: «Հայ-թրքական սահմանը կը բացուի միայն Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան վերականգնումէն ետք», - ըսաւ Էրտողան:

Թրքական կողմէն հնչող այս նախապայմանները անտեսելու հայկական կողմի փորձերը մատնուեցան ձախողութեան: Թուրքիա շարունակեց առաջ քշել իր պայմանները, այս անգամ փորձելով համոզել նաեւ Միացեալ Նահանգներն ու այլ երկիրներ:

Ամիսները անցան ու թրքական խորհրդարանէն ներս Արձանագրութիւններու վաւերացումը տեղի չունեցաւ, իսկ հայկական դիւանագիտութիւնը անգամ մը եւս ձախողութեան մատնուած, կը փորձէ ելքեր գտնել ստեղծուած կացութենէն դուրս գալու համար:

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՎՏԱՆԳԱԴՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Արցախի հարցը շարունակեց մնալ հայութիւնը մտահոգող երկրորդ գլխաւոր հարցը: Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն միջեւ թէեւ տեղի ունեցան վեց հանդիպումներ, սակայն վերջնական համաձայնութեան մասին կանխատեսումները չարդարացան: Մինչ այդ, Ատրպէյճանի ղեկավար Իլհամ Ալիեւ շարունակեց հնչեցնել ռազմաշունչ յայտարարութիւններ՝ հարցը պատերազմի միջոցաւ լուծելու խոստումով:

Թէեւ շահաքրքիր հիմնական երկու կողմերը մնացին իրարմէ հեռու, սակայն մեծ պետութիւնները եկան յստակեցնելու այն շրջագիծը, որու մէջ պէտք է լուծուի Լեռնային Ղարաբաղի հարցը:

Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի եւ Ֆրանսայի նախագահները Յուլիսին հանդէս եկան յայտարարութեամբ մը, ուր Պարաք Օպամա, Տիմիթրի Մետվետեւ եւ Նիքոլա Սարքոզի ներկայացուցին ղարաբաղեան հարցի լուծման համար իրենց կողմէ առաջարկուող կէտերը: Մինակի խումբի անդամ երեք երկիրներու ղեկավարները կոչ ըրին կողմերուն՝

- Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքները վերադարձնել Ատրպէյճանի վերահսկողութեան.

- Լեռնային Ղարաբաղին տալ միջանկեալ կարգավիճակ, որ կը տրամադրէ անվտանգութեան եւ ինքնակառավարման երաշխիքներ.

- Ստեղծել Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք.

- Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակը որոշել հետագային, իրաւականօրէն պարտաւորեցնող կամքի արտայայտութեան միջոցով.

- Ներքին տեղահանուած անձերու եւ փախստականներուն տալ իրենց նախկին բնակութեան վայրերը վերադառնալու իրաւունք.

- Տալ անվտանգութեան միջազգային երաշխիքներ, որոնց մէջ կ'իյնան նաեւ խաղաղապահ ուժերը:

Երեք նախագահները աւելցուցին, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի կողմէ այս սկզբունքներու սատարումը առիթ կու տայ մշակելու հարցի լուծման ամբողջական ծրագիր:

Առաջարկուող այս կէտերուն շուրջ Հայաստանի քաղաքական տարբեր շրջանակներու մօտ յառաջացաւ մտահոգութիւն: Ղարաբաղի կարգավիճակի հարցը դուրս կը հանուէր քննարկումներէն, օրակարգէն դուրս կու գար նաեւ հանրաքուէի դրոյթը. փոխարինուելու համար աւելի անորոշ ձեւակերպումներով, Լեռնային Ղարաբաղը հայաստանին կապող Լաչինի միջանցքի կարգավիճակի հարցը եւս կը մատնուէր անորոշութեան:


Հայաստանի կողմէ այս վտանգաւոր ծրագիրը որպէս հիմք ընդունելով, Արցախի ժողովուրդի ապահովութիւնն ու ինքնորոշման իրաւունքը կը դրուէր հարցականի տակ:

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տարուայ կարեւորագոյն իրադարձութիւններէն էր նաեւ, Մաչիսին կայացած Երեւանի քաղաքապետական ընտրութիւնները: Ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսը այս ընտրութիւններուն որոշեց մասնակցիլ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած ցուցակով: Ընդդիմադրութիւնը յայտարարեց, որ Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութեան առաջադրումը «քաղաքական ուղերձ է» ամբողջ հասարակութեան, ոչ միայն որպէս գոյտ Երեւանի քաղաքապետի ընտրութիւններ, այլ, որպէս բռնապետական համակարգը փոխելու լուրջ հնարաւորութիւն:

Երեւանի քաղաքապետական ընտրութիւններուն մասնակցելու յայտ ներկայացուցին Հայ Ազգային Գոնկրէսին անդամակցող

Շար.ը էջ 4



**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏԱԺԱՄԸ ԿԸ ԾՆՈՐՀԱԻՈՐԵՆ
ԻՐԵՆՑ ՀԱՄԱԿԻՐՆԵՐՈՒՆ,
ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ
ՀԱՅՈՒԹԵԱՆ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԱՐԻ ՄԸ ԵՒՍ

Շարունակում է 3-էն

կուսակցությունները դաշինքը եւ 6 իշխանամէտ կուսակցություններ՝ Հանրապետական, Բարգաւաճ Հայաստան, Օրինաց Երկիր, ՀՅԴ, Ժողովրդական եւ Հայաստանի Աշխատակողմնական Սոցիալիստական կուսակցությունը: Ազգային ժողովէն ներս ներկայացուած միակ ընդդիմադիր կուսակցությունը՝ «Ժառանգություն» որոշեց չմասնակցել ընտրություններուն:

Մայիս 31-ին տեղի ունեցած Երեւանի քաղաքապետական ընտրություններուն, անգամ մը եւս «յաղթողը» կեղծիքն էր: Հայաստանի իշխանությունները կազմակերպեցին համատարած կաշառքներով յատկանշուող հերթական ընտրությունները: Յայտարարուած պաշտօնական արդիւնքները ոչ մէկ ձեւով կը համապատասխանէին իրականութեան: Նախընտրական հարցախոյզներու ճիշդ հակառակ պատկեր ներկայացնելով, պաշտօնական տուեալները եկան յայտարարելու, թէ իշխող Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացած է ձայներու 47 տոկոսը, իշխանություններու կցորդ՝ Բարգաւաճ Հայաստան կուսակցություն 23 տոկոսը եւ ապա միայն Հայ Ազգային Գոնկրէս՝ ձայներու 18 տոկոսը:

Ընտրություններու յաջորդ օրը տեղի ունեցած ժողովրդային հանրահաւաքի մը ընթացքին Լեւոն Տէր-Պետրոսեանն յայտարարեց, որ Մայիս 31-ի ընտրակեղծիքներով Սերժ Սարգսեան այրեց բոլոր կամուրջները: Գոնկրէսի անդամ կուսակցությունները որոշեցին հրաժարել Երեւանի աւագանիի 65 անդամներէն իրենց բաժին ինկած 13 մանտաթներէն:

Այսպիսով իշխանությունները կորսնցուցին երկրէն ներս քաղաքական առողջ մթնոլորտ ստեղծելու ուղղութեամբ դրական քայլ մը առնելու առիթ մը եւս:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ՄԵԿ ՄԱՍԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

Հայաստանի Ազգային ժողովի կողմէ համաներում յայտարարուելէ ետք, Յունիսն սկսան ազատ արձակուելի 2008-ի նախագահական ընտրություններէն ետք ձեռքազրկուած քաղաքական բանտարկեալները: Առաջին ազատ արձակուողները եղան նախկին արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանեան, պատգամաւորներ՝ Միսանիկ Մալխասեան ու Յակոբ Յակոբեան: Մէկ այլ պատգամաւոր՝ Սասուն Միքայէլեան արժանացաւ իշխանություններու վրէժխնդիր վերաբերմունքին եւ դատապարտուելէ ետք 8 տարուայ բանտարկութեան, դուրս մնաց համաներման օրէնքէն:

Քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը կապուած էր Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովէն ներս (ԵՆԽՎ) Հայաստանի իրավիճակի շուրջ կատարուող քննարկումներով:

Յուլիս 2-ին Մատենադարանի մօտ կայացաւ Հայ Ազգային Գոնկրէսի արտահերթ հանրահաւաքը, որու ընթացքին բազմությունը հերոսներուն նման ընդունեց ազատ արձակուած քաղաքական բանտարկեալները:

Քաղաքական բանտարկեալներու ազատ արձակման յաջորդեց Մարտ 1-ի դէպքերէն ետք ընդլայնուող «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի ինքնակամ ներկայանալը իրաւապահ մարմիններուն: Յաջորդող ամիսներուն տեղի ունեցաւ Փաշինեանի դատաւարութիւնը, որ աւարտեցաւ Դեկտեմբերի վերջերուն: Դատաւորը յայտարարեց, որ վճիռ պիտի յայտարարէ Յունուար 19-ին: Մինչ այդ, Փաշինեան թեկնածու է Յունուար 10-ին տեղի ունենալիք Ազգային ժողովի մասնակի ընտրություններուն:

ՍԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՈՏՆԱՅԱՐՈՒՄՆԵՐԸ

Տարուայ ընթացքին միջազգային իրաւապաշտպան կազմակերպություններու կողմէ հրապարակուած զեկոյցներն ու տեղեկագրերը եկան անգամ մը եւս Հայաստանը դասելու քաղաքական ազատություններու եւ մարդկային իրաւանց առումով անկումի մէջ գտնուող երկիրներու շարքին:

«Ազատութեան Տուն» (Freedom House) եւ Մարդկային Իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) միջազգային հեղինակաւոր կազմակերպությունները հերթաբար հրատարակելով իրենց տարեկան զեկոյցները, խիստ գնահատականներ տուին Հայաստանի մէջ տիրող կացութեան: Անոնք եկան փաստելու, որ նախագահական ընտրություններուն յաջորդած իրադարձություններու պատճառաւ, Հայաստան ապրած է անկումի նոր շրջան մը:

«Քաղաքացիական ազատություններ» աղիւսակի վրայ, Հայաստան վերստին յայտնուեցաւ մասամբ ազատ երկիրներու շարքին:

Միջազգային իրաւապաշտպան կազմակերպություններու տուած այս ժխտական գնահատականը անգամ, չէր կրնար բաւարարել շատերուն, որոնց կարծիքով Հայաստան ոչ թէ մասնակի ազատ երկիր է, այլ ընդհանրապէս անազատ երկիր՝ բոլոր տեսանկիւններէն դիտած: Ընդդիմութեան դահլիճներ չտրամադրելը, երթերն ու ցոյցերը արգիլելը, խօսքի ազատութեան եւ մասնաւորապէս զանգուածային լրատուական միջոցներէն օգտուելու սահմանափակումները, խոչտանգումները, քաղաքական բանտարկեալներու առկայությունը բաւարար են, որպէսզի Հայաստանը դասուի ոչ ազատ երկիրներու շարքին:

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովը շարունակեց օրակարգի վրայ պահել Հայաստանի քաղաքական իրավիճակը: Յունուար 27-ի լիագումար նիստի ընթացքին եւ նախքան պատժամիջոցներու կիրարկումը, որոշուեցաւ առիթ մը եւս տալ Հայաստանի իշխանություններուն՝ քաղաքական դրդապատճառներով

ձեռքազրկուածներու հարցը լուծելու համար:

2009-ի Մարտ 1-ին, Հայ Ժողովուրդը նշեց տարի մը առաջ քոչարեանական աւագանիներուն կողմէ ի գործ դրուած սպանդի առաջին տարելիցը: Հակառակ իշխանություններու գործադրած բոլոր ջանքերուն, տասնեակ հազարաւոր Երեւանցիներ մասնակցեցան Մատենադարանի առջեւ Հայ Ազգային Գոնկրէսի կազմակերպած հանրահաւաքին ու անոր յաջորդած երթին:

Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ հաստատուած «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցությունը որոշեց դադարեցնել Հայաստանի մէջ ճանապարհներու շինարարական ծրագիրներու ֆինանսաւորումը: «Հայաստանի կառավարութեան կատարած քայլերը չեն համապատասխանէր «Հազարամեակի Մարտահրաւէր» ընկերակցութեան ժողովրդավարական կառավարման չափանիշերուն», ըսուած էր այս առիթը հրապարակուած յայտարարութեան մը մէջ, որոշումի պատասխանատուութիւնը դնելով Հայաստանի կառավարութեան վրայ:

Այս բոլոր բացասական գնահատականներուն դիմաց, իշխանությունները մերժեցին որեւէ քայլ առնել՝ երկրէն ներս տիրող մթնոլորտը բարելաւելու ուղղութեամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՅԱՎԵԹ ԱՆԿՈՒՄ

Տարուայ սկզբնաւորութեան կառավարութեան կողմէ կատարուած կանխատեսումներ, թէ միջազգային տնտեսական տագնապը շրջանցած է Հայաստանին, սխալ դուրս եկան: Միջազգային կազմակերպություններու տրամադրած վարկերու հաշտոյն պիւտձէի բացը գոցող երկիրը, տարուայ վերջաւորութեան մօտեցաւ 18 տոկոս տնտեսական անկում արձանագրելու սահմանները:

Շինարարությունը, որ նախորդ տարիներուն կը ներկայացուէր որպէս տնտեսական աճի հիմնական աղբիւրը, մասնուեցաւ անգործութեան: Ժողովուրդէն յափշտակուած գումարներով Երեւանի մէջ կառուցուած նոր շէնքերը մնացին դատարկ՝ արտասահմանցի գնորդներու բացակայութեան պատճառաւ:

Մեծապէս նուազեցան արտասահմանէն ուղարկուող անձնական փոխանցումներու ծաւալները, ժողովուրդի մեծ մասը մատնելով առաւել մեծ թշուառութեան:

Ազատ տնտեսութեան հիմնական սկզբունքներէն մին նկատուող մրցակցությունը շարունակեց բացակայիլ Հայաստանի մէջ: Իշխանություններ կայացուցիչներու հովանաւորությունը վայելող գործարարները շարունակեցին պահել իրենց ունեցած մենաշնորհները եւ մի քանի տասնեակ ընտանիքներու ձեռքերուն մէջ կեդրոնացած տնտեսությունը արձանագրեց գահավէժ անկում:

Այս բոլոր իրադարձություններու լոյսին տակ եւ դրական տեղաշարժերու բացակայութեան պայմաններուն մէջ, չափազանցություն պիտի չըլլայ 2009 տարին նկատել՝ Հայաստանի համար կորուստներու եւ ձախողություններու տարի մը:



**Հ.Մ.Մ.Ի ՏԻԿՆԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆ
ԻՐԵՆՑ
ԱՆԴԱՄ-ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐՈՒ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ**

ՎԱՏՆՈՒԱԾ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Ազգերու յառաջխաղացքը կը պարտինք անհատներու, որոնք բարձր իտեյալներու հետապնդումով իրենց անձնական կեանքերը արժեևորելու ձգտումէն անդին, նոյն ոգիով կը համակեն ժողովրդային լայն շրջանակները, նպաստելով նաեւ անոնց վերելքին: Յառաջխաղացք հարձանագրուելի հոն, ուր կը կաշկանդուի վերելքի ու արժեևորման հիմք հանդիսացող՝ խօսքի ու մտքի արտայայտման ազատութիւնը:

Այս իրականութիւնը նկատի ունենալով էր, որ 1999ի վերջաւորութեան, երբ կը փակէինք ոչ միայն այդ տարին, այլ 1990-ական տասնամեակը, 20րդ դարը եւ երկրորդ հազարամեակը, «Ապագան գուշակելու լաւագոյն կերպը զայն կերտելն է» խորագիրը կրող մեր յօդուածը կ'աւարտէինք հետեւեալ յաստատումով. «Պէտք է կուսակցական ու համայնքային մտածողութիւնը փոխարինել պետական մտածողութեամբ, որովհետեւ մենք վերջապէս նուաճած ենք մեր անկախ պետականութիւնը եւ պէտք է ըստ այնմ բարեփոխենք մեր մտածելակերպը... բանավէճերու եւ հրապարակային քննարկումներու միջոցաւ հայ քաղաքական մտքի զարգացումն ու հասունացումը լաւագոյն ապաւենը պիտի դառնայ դիմազրաւելու մեր առջեւ ցցուող մարտահրաւէրները եւ ապրելու այն ներկան ու կերտելու այն ապագան, որուն արժանի ենք ազգովին»:

Այդ յօդուածէն տաս տարիներ ետք, երբ այս օրերուն կը փակենք 21րդ դարի առաջին տասնամեակը, յետադարձ արագ ակնարկ մը իսկ բաւարար է համոզուելու որ ազգային յառաջխաղացքի իմաստով, այն եղաւ վատնուած տասնամեակ մը: Եղաւ բոլորովին անյարի 20րդ դարի վերջին տասնամեակին, որ յատկանշուեցաւ երկու անկիւնադարձային նուաճումներով՝ հայկական անկախ պետականութեան վերականգնումը եւ Արցախեան հողամասի ազատագրումը: Դժբախտաբար այն յատկանշուեցաւ նաեւ այդ հոյակապ յառաջխաղացքները խարխիղ Հոկտեմբեր 27ի ահաւոր ոճրագործութեամբ, որու ժխտական հետեւանքները կը քաշենք տասը տարիներէ ի վեր:

ԻՆՉՈՂՎ ՅԱՏԿԱՆՇՈՒԹԵԱՒ ԱՆՑՆՈՂ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ

Փոխանակ դիմելու գրաւոր աղբիւրներու, նշենք միայն այն իրադարձութիւնները որոնք տպաւորած են մեզ, ու անմիջապէս կը ցցուին մեր յիշողութեան պատասխին վրայ: Նկատելով որ տասնամեակի 8 տարիներուն Հայաստան կը գտնուէր Ռոպերթ Քոչարեանի իշխանութեան տակ, ուրեմն սկսինք իրմով:

ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ «ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ»

Սահմանադրական խախտումներով եւ օրինազանցութեամբ նախագահական աթոռը գրաւած (1998-2008) Քոչարեանը փաստեց, որ պարզապէս թաղային հեղինակութեան մակարդակի տէր անհատ մըն է, շատ հեռու երկրի յառաջընթացը ապահովող ղեկավարի շնորհներէն: Թուարկելն է իր մի քանի գլխաւոր «նուաճումները»:

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը դուրս մղեց Արցախեան հիմնահարցի բանակցային գործընթացէն եւ այդ մասին անապաշտ հպարտութեամբ արտայայտուեցաւ Ստեփան Դեմիրճեանի հետ կապած նախագահական ընտրապաշարի հրապարակային բանավէճի ընթացքին: Այդ քայլի վնասակարութիւնը այսօր փաստացի իրականութիւնն է: Ուշացումով փորձեր կ'ըլլան դարմանելու սխալը, բայց աւերը գործուած է:

2) Հայաստանի արտաքին քաղաքականութեան հիմքերէն մին դարձուց հայկական Յեղափոխութեան ճանաչման գործընթացը, թուրքիոյ վրայ ճնշում բանեցնելու անհիմն մտադրութեամբ: Այս սխալ քայլի որպէս արդիւնք, այսօր հայկական Յեղափոխութիւնը դարձած է սակարկութեան առարկա: Չմոռնանք յիշել իր վատահամբաւ յայտարարութիւնը թէ Հայաստանը թուրքիայէն հողային պահանջներու իրաւական հիմքեր չունի:

3) Հայաստանի համար ռազմավարական նշանակութիւն ունեցող հիմնարկներու յանձնումը Ռուսիոյ, «Գոյք պարտքի դիմաց» վատահամբաւ համաձայնութեամբ: Նոյն վիճակին մէջ գտնուող նախկին սովետական հանրապետութիւններէն ոչ մէկը այդպիսի ծայրայեղ զիջման չզնայց, հակառակ անոր որ Հայաստանէն տասնապատիկ ու աւելի շատ պարտքեր ունէին:

4) ԱՊԿ-ի հեռուստակայանի փակումը եւ ազատ խօսքի կաշկանդման պատճառած ահաւոր վնասներ կրի բնականոն զարգացման գործընթացին:

Կը բաւականանանք այսքանով, առանց մտահան ընելու նախագահական թէ խորհրդարանական ընտրութեանց կեղծարարութիւնները, երկրի իրաւական համակարգի խեղճացումը, շարունակուող արտագաղթը, կաշառակեցութեան եւ մենաշնորհեալ օլիգարխներու սանձարձակութեանց մթնոլորտի զարգացումը եւայլն:

Չմոռնանք յիշել այս տասնամեակին անմիջապէս նախորդած 1999ի Հոկտեմբեր 27ի ահաւոր ոճիրը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ «ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ»

1. Հոկտեմբեր 27ի ոճիրով իշխանութեան տիրացած Ռոպերթ Քոչարեանը իր շրջանը կ'աւարտէր Մարտ 1ի սպանդով, երբ Սերժ Սարգսեան «ընտրեալ» նախագահ էր: Այս վերջինը կրնար շարժիլ այնպէս, որ Մարտ 1ը դառնար Քոչարեանի կարապի երգը: Չուզեց: Հետեւաբար համահաւասար պատասխանատուութիւն վերցուցած եղաւ: Եթէ Հոկտեմբեր 27-ն այս պետականութեան գլխուն (ղեկավարութեան) հասցուած ահաւոր հարուած նկատենք, ապա Մարտ 1-ը մարմինն (ժողովուրդին) տրուած նոյնքան ահաւոր հարուած մըն էր: Հայաստանի թէ Սփիւռքի հայութեան մեծամասնութեան մօտ առաջացած յուսախաբուցութիւնն ու հիասթափութիւնը, այդ ոճիրային արարքներու արդիւնք է:

2) Հայ-թրքական ծանօթ փրօթոքներու պարունակութիւնը որքան ալ որոշ շրջանակներ ջանան դրականօրէն ներկայացնել, յատկապէս, որ արդէն իսկ իր ժխտական

անդրադարձը ունեցած է, տկարացնելով մեր դիրքերը եւ սեպ մը խրելով Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ: Թուրքիան արդէն իսկ շահաւոր դուրս եկած է այս գործընթացէն, մինչ Հայաստան կը փորձէ սահմանափակել իր վնասները:

3) Միայն այս տարուան ընթացքին, Հայաստանի արտաքին պարտքը գրեթէ կրկնապատկուած է, մօտ 1.8 միլիարդ տոլարի նոր վարկերու յաւելումով: Առանձնաշնորհեալ վերնախաւի մը հարստացման հաշույն, Հայաստանի պետութիւնը տնտեսական գահավիժման ճամբան բռնած է:

4) Ազատ խօսքի կաշկանդումներուն դէմ բողոքող ու իրենց անկախ քաղաքական հայեացքները բարձրաձայնող մարդիկ, դատական ձեւակաւութիւններով անիրաւաբար կը բանտարկուին: Իշխանութեան այս վարուելակերպին պատճառաւ, դատական համակարգը ողբալի վիճակի մատնուած է, ծնունդ տալով հրամաններ կատարող կամակոր ստրուկներու խաւի մը, փոխան պետական շահերը հետապնդող անշահախնդիր նուիրեալներու:

5) Ի տարբերութիւն Ռ. Քոչարեանի մեծամիտ ու արհամարհոտ մտայնութեան (զոր կը դրսևւորէր կոպտօրէն ու քինախնդրօրէն), Ս. Սարգսեանը նոյն մեծամիտ ու արհամարհոտ մտայնութիւնը կը փորձէ քողարկել գեղեցիկ խօսքերով, բայց քամահրանքը (cynicism) ակներեւ է:

Վերելի 4րդ եւ 5րդ կէտերը փաստող լաւագոյն օրինակն է Հանրապետական Կուսակցութեան վերջերս կապած համագումարին Ս. Սարգսեանի կատարած մէկ յայտարարութիւնը, զոր փոխանակ յիշողութեամբ վերարտագրելու,

կ'արժէ բառացի մէջբերել այստեղ, որպէս զի մեր ընթերցողները կասկած չունենան անոր բովանդակութեան մասին:

«Քաղաքական կայունութիւնը չի՛ նշանակում ոսկրացած միտք, լճացած գաղափարախօսութիւն կամ անվիճարկելի հեղինակութիւն: Քաղաքական կայունութեան մեր պատկերացումը ենթադրում է մտքի ազատութիւն: Կայունութեան գործօնը սահմանափակում է ձեւաչափը, ոչ թէ բովանդակութիւնը, դրոշմ է ստեղծելու եւ ստեղծագործելու եւ ոչ թէ լուր... Սուր բանավէճը երբեք չպէտք է թերագնահատել, սակայն մեր երկրի քաղաքական կայունութիւնը ապահովելու ենք հենց քաղաքական երկխօսութեան ուղիւն ընտրելով: Կարելի է կոշտ լինել մտքերի, բայց ոչ դրանք արտայայտողների հանդէպ»: Նկատելով որ այս խոսքերը խօսքերը որեւէ առնչութիւն չունին այս իշխանութեանց գործելակերպին հետ, հետեւաբար կը վիրաւորեն հայ մարդու գիտակցականութիւնը:

Աւելի ակներեւ դարձնելու համար «վատնուած տասնամեակ» մեր բնութագրումը, հաճեցէք պատասխանել հետեւեալ հարցումներուն:

- Ինչո՞ւ աճեցաւ արտագաղթը, երբ տարեց-տարի «Երկնիչ տնտեսական աճ» կ'արձանագրուէր:

- Ո՞ւր անհետացաւ 90-ականներու «ժողովրդավարութեան կղզեակ Հայաստանը»:

- Ի՞նչ պատահեցաւ, որ Արցախեան հարցով «ոչ մէկ զիջում» ի պահանջով իշխանութիւնը գրաւողները, այսօր փոխ-զիջումներու ջատագով դարձած են:

- Ինչո՞ւ համար թուրքիան նեղութեան մատնել յոխորտացողներ

Շար.ք էջ 33



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ս. Գ. Հ. Կ. ՓԱՍՏԻՆԱՅԻ «ՓԱՐԱՄԱՁ»

ՄԱՍՆԱԳԻՒԼԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ

ՄԱՂԹԷ ՅԱՉՈՂ ԵՒ ԵՐՉԱՆԻԿ ԱՄԱՆՈՐ

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

ՏՈՒՑԻ. ԵՂԻԿ ԶԵՐԵՃԵԱՆ

ՄԻՋԿ 19-րդ համագումարը, 2009 Սեպտեմբերին, յետ մահու կ'արգարացնէ Գրիգոր Եղիկեանը ու կը բեկանէ անոր հանդէպ սահմանուած վտարման պատիժը: Սա, Հնչակեան պատմութեան առաջին դէպքն է, երբ կուսակցական մը ներման կ'արժանանայ իր մահէն 58 տարիներ ետք: Ո՞վ է Գրիգոր Եղիկեան, ինչու ան ենթարկուած է կուսակցական պատիժի եւ ի՞նչ պատճառով տարիներ անց այդ պատիժը այսօր ենթարկուած է վերատեսուքեան:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Գրիգոր Եղիկեան ծնած է 1880-ին, Սեբաստիոյ (Սվազ) նահանգի Տիվրիկ գաւառի Կրասն գիւղը: Կը յաճախէ գիւղին դպրոցը: Հազիւ 10 տարեկան, կը մեկնի Կ. Պոլիս, ուր պանդխտած էր հայրը: Կ. Պոլսոյ մէջ պատանի Գրիգոր ակնաստեա կ'ըլլայ Պոլսոյ ցոյցերուն, յեղափոխական ելոյթներուն եւ անոնց հակադարձութիւնը եղող համիտեան ջարդերուն: Կարճ ժամանակով մը ինք ալ կը բանտարկուի: 1896-ին կը ստիպուի անցնիլ Կովկաս:

Կովկասի մէջ Գ. Եղիկեան մօտէն կը ծանօթանայ 1895-1896 թուականներու համիտեան ջարդերէն ճողոպրած հայ գաղթականներու տառապանքներուն: Կը շրջի Սեւ Մովսէս Կապուցի քաղաքները՝ Ռոստով, Եկատերինատար եւ այլն: 1897-ին Թիֆլիսի «Տարազ»-ին մէջ լոյս կը տեսնէ իր առաջին յօդուածը: 1899-ին կը հաստատուի Պաքու:

Գ. Եղիկեանի վրայ խոր ազդեցութիւն կ'ունենայ 1902 Մայիս 26-ին Պաքուի Պարսկաստանի հրապարակին վրայ կայացած բանուորական ցոյցը՝ կազմակերպուած ՄԴՀԿ-ի եւ ՌՄԴԿ-ի (Ռուսական Սոցիալ Դեմոկրատ Բանուորական Կուսակցութիւն) կողմէ:

ԴԵՊՈՒ ՄԴ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

1902-ին Գ. Եղիկեան կը մեկնի Պարսկաստան, ուր, 1903-ին, տըքթ. ԅարութիւն Շէքէրճեանի (1) շնորհիւ կը մտնէ Հնչակեան կուսակցութեան շարքերը:

1904-ին Պարսկաստանի Ռաշտ քաղաքին մէջ կը հիմնէ ՄԴՀԿ Ռաշտի մասնաճիւղը՝ միաժամանակ աշխատակցելով «Նոր Դար», «Մշակ», «Տարազ» եւ «Երիտասարդ Հայաստան» թերթերուն:

1904-ին կուսակցական առաքելութեամբ կը մեկնի Պաթում, ուր մէկ տարի կեցութենէ ետք կը վերադառնայ Պարսկաստան:

ԻԲՐԵՒ ԽՄԲԱԳԻՐ

1906-ին Գ. Եղիկեան կը հրաւիրուի ԱՄՆ՝ իբրեւ «Երիտասարդ Հայաստան» խմբագրապետ, ուր շուրջ մէկ տարի կը խմբագրէ թերթը: Իր այդ պաշտօնին մէջ Գ. Եղիկեան հանդէս կը բերէ հեռատես մտաւորականի մը յատկանիշերը: Ան, Պ. Անդրիասեան գրչանունով, «Կովկասեան Նամականի» ընդհանուր խորագրի տակ հանգամանօրէն կը մեկնաբանէ Ռուսաստանի եւ Անդրկովկասի մէջ տեղի ունեցող քաղաքական, յեղափոխական եւ ազգային իրադարձութիւնները: Իր խմբագրապետութեան ժամանակաշրջանը կը գուցադիպի արտասահմանի մէջ երիտթրքական շարժման աշխուժացման տարիներուն: Գ. Եղիկեան կ'անդրադառնայ նաեւ այս երեւոյթին. «Հայ Յեղափոխական Գոնկրէսի Շուրջ» (2), «Անդակտ Գործունէութիւն» (3) եւ «Բաւական է» (4) խմբագրականներով Գ. Եղիկեան կը գտնէ, թէ նախքան օսմանեան ընդդիմադիր ուժերու համաժողովին մասնակցիլը, պէտք է կայացնել հայ յեղափոխական կուսակցութիւններու համաժողովը: «Մէջերէն Յօդուածի Առիթով» գրած յօդուածին մէջ, Գ. Եղիկեան կ'ըսէ. «Մենք մինչեւ այսօր նրանց (երիտթուրքերուն. - Ե.ձ.) մէջ տեսել ենք համիսլամական գաղափարների արտայայտութիւնը եւ նրանց դաւանանքն է եղել Օսմանեան երկրում ապրող եւ նրա սահմանակից բոլոր ժողովուրդներին ի մի ձուլել, միացնել մահմետական կուլտի դրօշի տակ եւ դարձնել միահեծան իսլամական ազգ այդ բոլորը միասին» (5): Իր մէկ այլ «Կովկաս եւ Տաճկահայաստան» յօդուածաշարքին մէջ, Գ. Եղիկեան կը գրէ. «Վաղը կամ միւս օր իսկ նոյն «յեղափոխական» թուրքերը չպիտի կասին կառավարութեան գործերի հետ յարձակում գործել հայերի վրայ եւ նորից ջարդ տալ սրանց, ինչպէս արին 1895-1896 թուերին» (6):

Այդ շրջանին Պաքու հրատարակուող թրքերէն »Իրշատ« թերթին մէջ եւս ան կը գրէ յօդուածներ երիտթրքական շարժման եւ փանիսլամիզմի առնչութիւններուն մասին (7):

ԻԲՐԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՅ

1907-ին Գ. Եղիկեան կը մեկնի Փարիզ, ապա Պարսկաստան, ուր կարճ ժամանակ մնալէ ետք կ'անցնի Պաքու, ուր կը նշանակուի ՄԴՀԿ Ռուսաստանի եւ Կովկասի Գործադիր Յանձնախումբի նախագահ: Պաքուի մէջ ան կ'ունենայ կուսակցական արդիւնաւէտ գործունէութիւն՝ միաժամանակ խմբագրելով Պաքուի Հայոց կուլտուրական Միութեան օրկաններ «Չանգ»-ը եւ «Պատանեկան Գրադարան»-ը: Կը շարունակէ աշխատակցիլ «Երիտասարդ Հայաստան»-ին:

1908-ին, Երեւանի մէջ կ'ամուսնանայ Աստղիկ Սարգսեանին հետ: Օսմանեան Սահմանադրութենէն ետք, 1909-ին, կը մեկնի Կ. Պոլիս: Իբրեւ կուսակցական գործիչ, կ'այցելէ Պրուսա (ուր կը կազմէ մետաքսագործներու արհեստակցական միութիւն), Մարզուան եւ Փոքր Հայքի շրջաններ: Կ'աշխատակցի «Կոհակ»-ին: 1909-ին կը մասնակցի ՄԴՀԿ Կ. Պոլսոյ Զ. Համագումարին, ուր Մեծն Մուրատի, Աչքաչաշեանի եւ Սաքոյի հետ կը գլխաւորէ կուսակցութեան օրինական գործելաձեւ տալու տեսակէտը պաշտպանող հոսանքը՝ ընդդէմ Սապահաբեկի եւ Փարամագի կողմէ գլխաւորուող յեղափոխական գործելաձեւը շարունակել պահանջողներուն: Կը մասնակցի նաեւ Տաճկաստանի շրջանի Ա. Պատգամաւորական ժողովին (8):

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ

1910-ին, իբրեւ ՄԴՀԿ կեդրոնական վարչութեան լիազոր ներկայացուցիչ Գ. Եղիկեան կը վերադառնայ Պարսկաստան՝ էնգէլի: Սա, Պարսկաստանի

Սահմանադրական Յեղափոխութեան վերջին հանգրուանի շրջանն էր: Հրապարակ եկած էին բազմաթիւ կուսակցութիւններ, որոնք կը գտնուէին գաղափարական որոնումներու մէջ: Գ. Եղիկեան պարսկերէնի կը թարգմանէ ՄԴՀԿ-ի ծրագիրը, որ 1910 Հոկտեմբերին Պարսկաստանի առաջին Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան ծրագիրը կը դառնայ, որ սկզբնական շրջանին կը կոչուի «ՄԴ Հնչակեան Կուսակցութեան էնգէլի Մասնաճիւղի Իրանի Խումբ», կարճ ժամանակ անց, 1911 Յունուարին, խումբը կը դառնայ ինքնուրոյն եւ կը գործէ իբրեւ Պարսկաստանի Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութիւն (9): Նոյն շրջանին պարսկերէն «Գիւլան» թերթին մէջ լոյս տեսած Գ. Եղիկեանի «Ինչ Կ'ընեն Սոցիալ Դեմոկրատները» յօդուածաշարքը վերջիններու կողմէ լոյս կը տեսնէ առանձին գրքով: Պարսիկ սոցիալ դեմոկրատները, իբրեւ իրենց թիւ 3 հրատարակութիւնը, լոյս կ'ընծայեն նաեւ Գ. Եղիկեանի «Պարսիկ Սոցիալիստ-Դեմոկրատներու Տեսակէտները Այսօրուայ Դրութեան Մասին» գրքով (10):

էնգէլիէն ետք Գ. Եղիկեան կ'անցնի Ռաշտ, ուր կը կազմակերպէ կուսակցական մասնաճիւղը եւ կը տանի սոցիալ-դեմոկրատական քարոզչութիւն: Ռաշտէն ետք ան կ'անցնի Թեհրան, ուր կը գործակցի յեղափոխական ուժերուն հետ, որովհետեւ այդ շրջանին հակասահմանադրական ուժերը, գահընկէց եղած Մամէտ Ալի Շահին եւ արտաքսուած արքայազուններէն Սալար-օդ-Տօլլայի գլխաւորութեամբ, սկսած էին հակայարձակում նախապատրաստել (11): 1913-ին, «Ճշմարտութիւններ Պարսկաստանի Յեղափոխական Շարժման Մասին (Ականատեսի Վկայութիւններ)» ընդհանուր վերնագրի տակ, Գ. Եղիկեան «Երիտասարդ Հայաստան»-ին մէջ կը ստորագրէ արժէքաւոր յօդուածաշարք մը:

Յաջորդող տարիներուն Գ. Եղիկեան Ղազուլի մէջ կը հիմնադրէ Հնչակեան մասնաճիւղ, հայերէն եւ պարսկերէն լեզուներով հրապարակային դասախօսութիւններ կու տայ Ռաշտի, էնգէլի եւ Ղազուլի մէջ ու էնգէլի մէջ կը հիմնադրէ աղջկանց դպրոց: 1911-ին դարձեալ կ'այցելէ Կ. Պոլիս, եւ, վերադարձին, էնգէլի մէջ կը նշանակուի պարսկական միջնակարգ դպրոցի տնօրէն: Կը շարունակէ աշխատակցիլ «Երիտասարդ Հայաստան»-ին, «Կոհակ»-ին, «Դայլայլիկ»-ին եւ պարսկական «Րէտ» թերթերուն:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Համաշխարհային Ա. Պատերազմին, Գ. Եղիկեան համաձայն չի գտնուիլ կամաւորական շարժման: Աւելի ուշ, 1917 Յունիսին, Թիֆլիսի մէջ կը նախագահէ կուսակցութեան Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերուն խորհրդաժողովին: Խորհրդաժողովին, փոքրամասնութիւն մը կը պաշտպանէ ամբողջապէս պոլշեւիկներու քաղաքականութեան հաւանութիւն տալու տեսակէտը: Սակայն, մեծամասնութիւնը, Գ. Եղիկեանի գլխաւորութեամբ, կը պաշտպանէ ժամանակաւոր կառավարութեան հաւանութիւն տալու, պուրժուա-դեմոկրատական կարգերը պաշտպանելու, ազգերու ազատ ինքնորոշման սկզբունքը պաշտպանելու, ինչպէս նաեւ կուսակցութեան կեդրոնական

Շարք էջ 7



Ս. Գ. Հ. Կ. «ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ»
ՄԱՍՆԱԾԻՂԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԻՐԷ
ԻՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐՈՒՆ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ



ՄԱՍԻՍ - 2010

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

Շարունակում էք 6-էն

Վարչությունը Թիֆլիս տեղափոխելու տեսակետները: Խորհրդատուները նաև կ'որոշեն Թիֆլիսի մէջ հրատարակել կուսակցական «Նոր Աշխարհ» օրաթերթը, որուն խմբագրությունն անդամ կը նշանակուի նաև Գ. Եղիկեան: Սակայն այս ծրագիրը չ'իրականանար եւ Գ.Եղիկեան կը վերադառնայ Էնգելի:

ՃԵՆԿԱԼԻՆԵՐՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

1914-1921 թուականներուն Պարսկաստանի Գիլան նահանգին մէջ յառաջ կու գայ ապստամբական շարժում մը, որ կը կոչուի ճենկալիներու ապստամբություն: Երջանը կ'անցնի Միրզա Բիւլէիկ խանի կողմէ ղեկավարուող յեղափոխական ուժերուն ձեռքը: Իրերայաջորդ շարք մը իրադարձություններու պատճառով՝ Պարսկաստանի Սահմանադրական Յեղափոխություն (1905-1911), Համաշխարհային Ա. Պատերազմ (1914-1918), ճենկալիներու Յեղափոխություն (1914-1921) Գիլանի շրջանը կը վերածուի ռազմական եւ քաղաքական անկայուն շրջանի մը: Յաջորդաբար շրջան մուտք կը գործեն տարբեր երկիրներու բանակներ՝ ցարական Ռուսիոյ, օսմանեան, անգլիական, Խորհրդային Ռուսիոյ եւ Պարսկաստանի կեդրոնական իշխանութեան: Այդ բանակները, ճենկալական յեղափոխութեան տարբեր հանգրուաններուն Միրզա Բիւլէիկ խանի հետ կ'ունենան բարեկամական կամ թշնամական յարաբերություններ: 1918 Ապրիլին օսմանեան բանակները կը մտնեն Պարսկաստանի սահմանէն ներս եւ կապեր կը հաստատեն ճենկալիներուն հետ, որոնց շարքերուն մէջ արդէն իսկ կային օսմանեան բանակի սպաներ: 1920 Մայիսին, ճենկալի-պոլշեկիկ դաշինքին շնորհիւ Գիլանի մէջ կը ստեղծուի Պարսկաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, որ կը գոյատեւէ շուրջ մէկուկէս տարի:

Այս խառնակ իրավիճակին մէջ կը վտանգուի Գիլանի հայութեան փրկիչական գոյությունը: Հայութեան վիճակը կը վատթարանայ նաև այն պատճառով, որ Ստեփան Ծահուճեանի կողմէ գլխավորուած Պաքուի կոմունայի օրերուն, հայութեան դէմ վրէժով լեցուած մեծ թիւով ազերիներ կ'ապաստանին Գիլան, իսկ Պաքուի կոմունայի անկումէն ետք, շրջանին մէջ կ'ապաստանին շուրջ 10,000 հայեր: Գ. Եղիկեան, իբրև Գիլանի միջ-կուսակցական մարմնի (ՀՅԴ եւ ՄԴՀԿ) նախագահ, ինչպէս նաև անձնական նախաձեռնություններով Միրզա Բիւլէիկ խանին հետ կ'ունենայ բազմաթիւ հանդիպումներ՝ շահելով անոր անկեղծ բարեկամությունը, որով ստեղծուած բարդ կացութեան մէջ կ'ապահովէ հայութեան անվտանգությունը: Այդ շրջանին Գ. Եղիկեանի խաղցած բացառիկ դերը մեկնաբանելու համար Արամ Արքուն կը գրէ. «Եղիկեան միջկուսակցական ժողովի տիրական դէմքն էր: Ան ՀՅԴ-ի տեղական մարմիններուն կողմէ կ'ամբաստանուէր որպէս ինքնազուլի գործող: Նաև ՀՅԴ-ի կարգ մը ղեկավարներ անոր հանդէպ կասկածներ ունէին, սակայն ան այս կուսակցութեան մէջ եւս բարեկամներ ունէր: Միւս կողմէ, ան շատ կարեւոր էր եւ կարելի էր անտեսել զինք: Ինչո՞ւ այդպէս էր: Եղիկեան պարսիկ լայն շրջանակներուն կողմէ հանրաձանօթ եւ յարգուած անձ մըն էր շնորհիւ իր նախապատերազմեան գործունէությունն՝ որպէս ուսուցիչ, հրապարակախօս, խմբագիր, թատերագիր, քաղաքական գործիչ եւ Գիլանի մէջ Պարսկաստանի Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան հիմնադիր: Ան, կովկասի, Ռուսիոյ եւ Պարսկաստանի մէջ ունէր քաղաքական ազդեցիկ բարեկամներ: Հակառակ որ Եղիկեան Պոլշեկիցիին հանդէպ հակակրօնութիւն կ'արտայայտէր, իր բարեկամներուն մէջ կայն հանրաձանօթ պոլշեկիկներ, ինչպիսիք էին Ստեփան Ծահուճեանն ու Նարիման Նարիմանովը: Եղիկեան կը խօսէր ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն ինչպէս նաև պարսկերէն, հայերէն եւ թրքերէն: Սա կը դիւրացնէր իր հաղորդակցությունը անգլիական, ցարական եւ սովետական ուժերուն հետ, ինչպէս նաև հնարաւորութիւն կու տար հետեւելու Գիլանին վերաբերող միջազգային նորություններուն: Ծատ մը այլ գործունէություններու կողքին, Եղիկեան թարգմանիչի դեր կատարեց ճենկալիներու եւ սովետական պաշտօնատարներու միջեւ կայացած կարգ մը կարեւոր հանդիպումներուն ընթացքին: Ան, Գիլանի Հնչակեան կուսակցութեան ամէնէն կարեւոր եւ ամէնէն գործունեայ ներկայացուցիչն էր: Ան միայն Բիւլէիկ խանին հետ մօտիկ էր, այլև մօտիկ էր աւելի արմատական Իհսանուլլահ խանին հետ՝ որուն կառավարությունն օրով, 1920-ի վերջաւորութեան, ան ստանձնեց պետական պաշտօն (Սովետական իշխանութեան օրով, Իհսանուլլահ խանի գլխավորութեան կառավարութեան կողմէ Գ. Եղիկեան կը նշանակուի լուսաւորութեան կոմիսարիատի կեդրոնական խորհուրդի նախագահ ու իր այդ պաշտօնով ան մեծապէս կը նպաստէ կրթական ցանցի վերելքին.- Ե. ձ.): Եղիկեան բարդ կերպար մըն էր, որուն համար առաջնահերթ էր օսմանեան հայութեան ազատագրությունն ու կովկասի եւ Պարսկաստանի հայութեան ճակատագիրը: Միեւնոյն ժամանակ ան կը գործէր ի խնդիր Պարսկաստանի ամբողջականութեան պահպանման եւ ընկերվարական նպատակներու համար»(12):

Պաքուի կոմունային, Գ. Եղիկեան Միրզա Բիւլէիկ խանին կը լիազօրուի Ս. Ծահուճեանի մօտ միջնորդություն կատարել՝ վերջինէն գինական օգնություն ստանալու համար: Գ. Եղիկեան Ս. Ծահուճեանէն հրաւեր կը ստանայ Գիլանի մէջ ըլլալ Պաքուի սովետական իշխանութեան ներկայացուցիչը կամ գալ Պաքու եւ ստանձնել Հնչակեան «Մեր Օրեր» թերթի խմբագրապետի պաշտօնը: Գ. Եղիկեան երկու առաջարկներն ալ կը մերժէ. («Մեր Օրեր»ու խմբագրապետ կը նշանակուի Սահակ Մուրատեան, որ կը նահատակուի Պաքուի պաշտպանութեան դիրքերուն վրայ): Անգլիական բանակներուն Պաքու մուտքէն ետք Գ. Եղիկեան կը կազմակերպէ նաև գաղթական հայութեան տունդարձը դէպի Պաքու եւ այլ ապահով վայրեր:

Ճենկալիներու շարժման, Բիւլէիկ խանին եւ հայութեան հետ իր ունեցած յարաբերությունն մասին Գ. Եղիկեան, 1919-1920թթ. «Բիւլէիկ Խանը Եւ Իր Գործը», «Մի Այցելություն Բիւլէիկ Խանին» եւ «Մի Տարի

Գիլանում» ընդհանուր վերնագիրներու տակ արժէքաւոր յօդուածաշարքեր կը գրէ Թաւրիզի կուսակցական օրկան «Զանգ»ին մէջ:

Պոլշեկիկներու Գիլանէն հեռանալէն եւ ճենկալիներու ապստամբությունեան գաղտնէն ետք, Գ. Եղիկեան Թեհրանի մէջ կ'աշխատակցի պարսկական «Մէթարի Իրան» թերթին, ուր կը հրատարակէ «17 Ամիս Յեղափոխություն Գիլանի Մէջ» յօդուածաշարքը, որ կեդրոնական իշխանութեան կողմէ կ'արգիլուի եւ Եղիկեան կը ստիպուի հեռանալ Թեհրանէն ու հաստատուիլ Ռաշտ:

ԿՈՄԻՆՏԵՐՆԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

1923թ.-ին, ՄԴ Հնչակեան կուսակցությունը պաշտօնապէս փախաք կը յայտնէ անդամակցիլ Գ. Միջազգայնականին (կոմունիստական Ինտերնացիոնալ-կոմիւնտերն) եւ այս կապակցութեամբ կեդրոնական վարչութեան ներկայացուցիչները Մոսկուայի մէջ բանակցություններ կը վարեն կոմիւնտերնի ղեկավարությունեան հետ: Վերջիններս յարմար պահը կը գտնեն Հնչակեան կուսակցությունը կոմունիստական կուսակցությունեան մէջ լուծելու համար (13): Խորհրդային Միությունեան տարածքին այս քայլէն խուսափում չկար: կոմիւնտերնի պահանջն էր որ արտասահմանի մէջ եւս Հնչակեան կուսակցությունը ձուլուի տեղական կոմունիստական կուսակցություններուն մէջ: Այս աշխատանքը կարճ շրջանի մը համար յաջողություն կը գտնէ ԱՄՆ-ի մէջ, ուր 1923-ին Հնչակեան կուսակցությունը կը միանայ «Ուորքըրզ Փարթի»ին (Աշխատաւորական կուսակցություն), այդ միացումը կը տեւէ միայն 6 ամիս, որ, սակայն, Հնչակեան կուսակցությունը վրայ կ'ունենայ կազմալուծիչ հետեւանքներ: Պարսկաստանի մէջ այդօրինակ աշխատանքներ կը տանին Խորհրդային Միությունեան ղեկավարատան գիւլանագէտները:

Գ. Եղիկեան արմատապէս դէմ կը կենայ ՄԴՀԿ-ը կոմիւնտերնին անդամ դարձնելու եւ գայն կոմունիստական կուսակցությունեան մէջ լուծելու բոլոր փորձերուն, ու կը պաշտպանէ կուսակցություն Ինքնուրոյնութիւնը եւ անկախութիւնը պահպանելու տեսակետը: Սկզբնական շրջանին ան այս ուղղութեամբ բազմաթիւ շրջաբերականներ (շուրջ 100) կը յղէ վարիչ Մարմիններուն եւ անհատ ընկերներու: Աւելի ուշ, այս նպատակին համար ան կ'օգտագործէ Փարիզի կուսակցական օրկաններ «Արձագանգ Փարիզի»ն եւ «Նոր Երկիր»ը: 1938-1940 թթ., Պոսթոնի դաշնակցական օրկան «Հայրենիք» ամսաթերթին մէջ Գ. Եղիկեան «Իմ Յիշողություններից» ընդհանուր վերնագիրի տակ կը հրապարակէ պատմական տուեալներով հարուստ յօդուածաշարք մը, որ իր օրին մեծ աղմուկ կը հանէ: Այդ շրջանին ան կը խմբագրէ նաև պարսկական «Իրանէ Խապրի», «Ասիայէ Ուրստա», «Սատաղէ Պաշար» եւ «Իրանէ Ղանուն» թերթերը: Իր գրություններուն մէջ Գ. Եղիկեան ոչ միայն կը պաշտպանէ Հնչակեան կուսակցությունեան Ինքնուրոյնութիւնը, այլև կը քննադատէ ստալինեան բռնարարքները ու կը պնդէ, որ Խորհրդային Միությունեան մէջ կիրարկուած իսկական սոցիալիզմ չէ, այլ՝ բռնատիրություն: Օրինակի համար, Թեհրանի մէջ իր սուած դասախօսություններէն մէկուն ընթացքին ան կ'ըսէ. «Պոլշեկիկեան շարժումները կարողացան լեւինին հասցնել

Շարք էք 8



ՄԱՍԻՍ - 2010

ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

Շարունակում է 7-էն

Իշխանութեան, բայց երբեք չպիտի կարողանան Ռուսաստանում տնտեսական բարօրութիւնը ապահովել եւ քաղաքացիական ազատութիւնը կրկին կեանքի կոչել եւ Ռուսաստանը պիտի ապրի տարիների մի թշուառ կեանք, մինչեւ որ Լենինի եւ իր ընկերների ստեղծած ռեժիմը սապալուի ժողովուրդի բարկութեան յորձանքի ճնշման տակ»(14): Գ. Եղիկեան կը քննադատէ նաեւ Պարսկաստանի մէկ հատուածին վրայ սովետական իշխանութիւն հաստատելու փորձերը, որովհետեւ այդ իշխանութիւնը ժողովրդային լայն խաւերուն նեցուկը չէր վայելեր ու միեւնոյն ժամանակ կը սպառնար Պարսկաստանի հողային ամբողջականութեան: Ան դէմ կ'արտայայտուի նաեւ խորհրդային դեսպաններու, հիւպատոսներու եւ պաշտօնակատարներու (որոնց մէջ՝ նաեւ հայեր) Պարսկաստանի (նաեւ պարսկահայութեան) ներքին գործերուն միջամտելու ճիգերուն: Բացի հայկական միջավայրէն, իր այս տեսակէտները ան կը պաշտպանէ նաեւ «Թերշիբ», «Փէրվէրէշ», «Ղէրնը Ջհարդահօմ», «Թլու» եւ «Էլբօրզ» պարսկական թերթերուն մէջ:

ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵՆԷՆ ՎՏԱՐՈՒՄԸ

Գ. Եղիկեանի հակապոլշեիկեան տեսակէտներն ու խորհրդային Միութեան մէջ կիրարկուած սոցիալիզմին քննադատութիւնը կը ջղագրգռեն խորհրդային իշխանութիւնները, որոնց Պարսկաստանի դեսպանատան գործավարները հրապարակ կը նետեն այն ամբաստանութիւնը, թէ՛ ան անգլիական իմբերիալիզմի գործակալ մըն է (15), ու այս ամբաստանութիւնը կը տարածեն հնչակեան շարքերուն մէջ՝ պահանջելով, որ ան արտաքսուի կուսակցութենէն (16): Աւելին՝ Ալեքսանդր Միասնիկեան Գ. Եղիկեանին կու տայ «դիակնացած» անականը(1): Գ. Եղիկեան իր դէմ նետուած ամբաստանութիւններուն կը պատասխանէ՝ ըսելով. «Անգլիացիներին օգտակար եմ եղել իմ ուժերիս չափով: Եթէ աւելի շատ ուժ ունենայի, աւելի շատ օգտակար կը լինէի նրանց, որովհետեւ նրանք մեր դաշնակիցներն էին թուրքերի դէմ: Ով որ թուրքիայի դէմ էր, բարեկամս է, եւ ես պատրաստ եմ ամէն կերպ նրան աջակցելու»(18):

Պատմական այդ ժամանակաշրջանին, Հնչակեան կուսակցութեան վրայ որոշակի ազդեցութիւն կ'ունենայ յանուն միջազգային յեղափոխութեան եւ յանուն պրոլետարիատի (բանուորութեան) ազատագրութեան արձակուած պոլշեիկեան վերամբարձ լոզունգներն ու անոնց գործելաձեւը: Խորհրդայիններուն կողմէ Գ. Եղիկեանին հանդէպ եղած «անգլիական իմբերիալիզմի գործակալ» ամբաստանութիւնը շատ սուղ կը կշռէ եւ ան կ'արտաքսուի ՄԴ Հնչակեան կուսակցութեան շարքերէն:

Ա. Կիտուր, այդ արտաքսումը կը տանի ու կը կապէ 1917-1918 թուականներուն (19): «Արարատ» օրաթերթը եւս, Գ. Եղիկեանի արտաքսման թուականը կը նշէ 1924-ը եւ գայն կը վերագրէ Թիֆլիսի մէջ գործող ՄԴ-ՀԿ Կեդրոնական վարչութեան (20): Մեր կարծիքով, սակայն, աւելի ճիշդ է «Պարսկական Հանրագիտարան»ին մէջ նշուած թուականը՝ 1938(21):

Մինչեւ իր կեանքին վերջը, Գ. Եղիկեան կը շարունակէ իր ազգային, քաղաքական, կրթական ու գրական գործունէութիւնը: Կը մահանայ 1951-ին:

ԻՔՐԵՒ ԳՐՈՂ

Իր ազգային, քաղաքական, յեղափոխական եւ խմբագրական գործունէութեան կողքին, ինչպէս նաեւ հրապարակագրական ու յուշագրական բեղուն գրչին գուգահեռ, Գ. Եղիկեան զբաղած է նաեւ գեղարուեստական գրականութեամբ: Իր գրիչին կը պատկանին շուրջ 30 անուն գրական ստեղծագործութիւններ. 3 վէպ, 2 վիպակ, շուրջ 10 թատրերգութիւն (որոնցմէ մի քանին թարգմանուած են պարսկերէնի ու բեմադրուած հայկական եւ պարսկական բեմերու վրայ), նոյն քան մըն ալ պատմուածքներ, ցրուած մամուլի տարբեր օրկաններու մէջ: Վերոյիշեալներու շարքին առանձին հատորներով լոյս տեսած են «Սաբիրէ» վէպը, «Թոյն» եւ «Համր» պատմուածքները՝ «Նոր Մարգարէն», «Յուզիդ», «Կին», «Արեան ձանապարհով» եւ «Հարազատներ» թատրերգութիւնները: Գ. Եղիկեան իր գրականութեան նիւթը ընդհանրապէս առած է հայ ազգային-ազատագրական պայքարի եւ յեղափոխական շարժումներու դրուագներէն: Անոր ամէնէն յայտնի երկը «Սաբիրէ» վէպն է, որ նուիրուած է հայ ազատագրական պայքարի ռահվիրայ ժիրայրի (Մարտիրոս Պոյաճեան) կեանքին ու գործունէութեան:

Գ. Եղիկեան գործածած է Գ. Մարգարեան, Վ. Թուրեան, Վ. Վասակունի, Պ. Անդրիասեան, Գ. Աստղունի, Մի Հնչակեան եւ, հաւանաբար, այլ գրչանուններ ու ծածկանուններ:

Անցնող 20 տարիները յատկանշուեցան քաղաքական կեանքի մէջ խոր շրջադարձերով: Վերատեսութեան ենթարկուեցան շատ արժէքներ: Շատ կուսակցութիւններ անուանափոխուեցան, ուրիշներ վերատեսութեան ենթարկեցին իրենց ծրագիրները եւ վերարժեւորեցին իրենց պատմութիւնը: Այդ առիթով կարգ մը իբր «դաւաճան» եւ «գործակալ» ամբաստանուածներ ու այդ պատճառով ալ գնդակահարուածներ յետմահու արդարացուեցան: Պատմական ժամանակաշրջանի մը եւ մտայնութեան մը զոհն էր նաեւ Գրիգոր Եղիկեան, որ արտաքսուեցաւ Հնչակեան կուսակցութեան շարքերէն, պարզապէս սեփական կարծիք ունենալուն եւ այդ խիզախօրէն արտայայտելուն համար՝ հակառակ տիրող ընդհանուր մթնոլորտին: Գ. Եղիկեան «դաւաճան» կամ «գործակալ» չէր: Իր պաշտպանած տեսակէտներէն շատերը այսօր իրականութիւն դարձած են, իսկ իր բազմակողմանի կարողութիւնները կազմակերպչական, հրապարակախօսական, քաղաքական եւայլն (անուրանալի) են: Ուստի, ՄԴ-ՀԿ համագումարը ճիշդ դիրքորոշուած է՝ յետմահու արդարացնելով Գ. Եղիկեանը: Այս որոշումով, Հնչակեան կուսակցութիւնը առաջին հերթին կը վերականգնէ ոտնահարուած Արդարութիւն մը:

Իսկ Արդարութեան վերականգնման համար, ժամանակ եւ վայր գոյութիւն չունին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ՍԴ Հնչակեան կուսակցութեան յեղափոխական առաջին սերունդին կը պատկանի Յարութիւն Շքերճեան: Ծնած է 1869-ին Արաբկիրի Քուշնա գիւղը:

1888-ին կ'աւարտէ Պոլսոյ Կեդրոնականը եւ վերադառնալով ծննդավայրը ուսուցչութիւն կ'ընէ Արաբկիրի, Խարբերդի եւ Կապէն-Մատնի մէջ, ուր կը տանի նաեւ յեղափոխական քարոզչութիւն: 1891-ին կը մեկնի ԱՄՆ եւ Ուստրի մէջ կը հիմնէ հնչակեան առաջին մասնաճիւղը եւ հայկական գրադարան մը: Ռուբէն Խանազատի ԱՄՆ այցելութեան ընթացքին, կ'ընկերանայ անոր շրջագայութեան: 1895-ին կը տեղափոխուի Լոնտոն՝ կուսակցութեան կեդրոնատեղին: «Ծիծաղ» գրչանունով կ'աշխատակցի «Ապտակ» երգիծաթերթին: 1898-ին կ'անցնի Կովկաս եւ ապա Պարսկաստան ու կուսակցական քարոզչութեան նպատակով կ'այցելէ տարբեր քաղաքներ: Կը վերադառնայ ԱՄՆ ու կը հաստատուի Շիքակո: 1910-ին կուսակցական առաքելութեամբ դարձեալ կը մեկնի Կովկաս, ուր հիւանդութեան պատճառով կը մահանայ 1917-ին, Թիֆլիսի մէջ: Իբրեւ բժիշկ-հիպոնոզիստ, ունի իր մասնագիտութեան վերաբերեալ անգլերէնով աշխատութիւններ:


2. «Երիտասարդ Յայաստան», 1907 Յունուար 16:
3. «Երիտասարդ Յայաստան», 1907 Յունուար 23:
4. «Երիտասարդ Յայաստան», 1907 Յունուար 30:
5. «Երիտասարդ Յայաստան», 1907 Յունուար 9:
6. «Երիտասարդ Յայաստան», 1907 Մայիս 8:
7. "Preparation For A Revolution", Shukru Hanioghlu, Oxford, 2001, pp. 192 & 437:
8. «Հնչակեան Տարեգիրք (Ամերիկայի Շրջանի)», Ա. տարի, 1931, Փրովիտենս, Մ.Ս. «Գրիգոր Եղիկեան», էջ 189:
9. "Encyclopedia Iranica", Eshhan Yarshatar, Costa Mesa, CA. Mazda Publishers, 1998, p. 364:
10. «Յուշարձան Լուիսուած Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Քառասնամեակին», Փարիզ, 1930, Գ. Աստղունի, «Ինչպէս Կազմուեց Պարսկաստանի ՍԴ Կուսակցութիւնը», էջ 193:
11. "Armenians And The Iranian Constitutional Revolution Of 1905-1911", Houri Berberian, 2001, Colorado, էջ 143:
12. "Iranian Studies", Volume 30, No. 1-2, Winter/Spring 1997", "Armenians And The Jangalis", Aram Arkun, էջ 36:
13. Այս մասին տես «ՍԴՀԿ-Կոմիստերն Յարաբերութիւնները», առանձնատիպ՝ Յայկազեան Յայագիտական Հանդէսի ԻԲ. հատորէն, Եղիկ Ճերճեան, Պէյրութ, 2002:
14. «Յայրենիք» ամսագիր, 18-րդ տարի, Յունուար, թիւ 3, 1940, Գ. Եղիկեան, «Հնչակեանները եւ Նրանց Պոլշեիկները Յետ Միանալու Փորձերը», էջ 101:
15. Նոյն, էջ 105 եւ 111:
- Այս տեսակէտը տեղ գտած է նաեւ Ա. Կիտուրի «Պատմութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան» Ա. հատորին մէջ, Պէյրութ, 1962, էջ 510:
16. Նոյն, 1940, Մարտ, թիւ 5, էջ 134 եւ 145-146:
17. «Կուսակցութիւնները Գաղութահայութեան Մէջ», Ալ. Մարտունի (Ալեքսանդր Միասնիկեան), Թիֆլիս, 1924, էջ 123:
18. «Յայրենիք» ամսագիր, 1940, Յունուար, թիւ 3, էջ 107:
19. «Յիւսնամեակ Երիտասարդ Յայաստանի», Պոսթոն, 1953, Ա. Կիտուր, «Յանուն Արդարութեան», էջ 75:
20. «Արարատ», 1947, Նոյեմբեր 14, «Վերյիշում Սը»:
21. "Encyclopedia...", p. 364:



**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ
ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ՝
ՄԵՐ ԶԵՐՄԱԳԻՆ ԾՆՈՐՀԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ,
ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ
ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐԸ
ՄԵՐ ՀԱՐԱՋԱՏՆԵՐՈՒՆ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
ԵՒ ԾԱՆՕԹՆԵՐՈՒՆ**

**ԹՈՂ 2010 ԹՈՒԱԿԱՆՆ ԸԼԼԱՅ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՆԱԻԱՐՏ ԵՐԱՋՆԵՐՈՒ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԻ**

**ՏՕՔԹ. ՍԱՐԳԻՍ ԵՒ ՓՐՈՖ. ՍԻԼՎԱ ԳԱՐԱՅԵԱՆ
ՏՕՔԹ. ԽԱԶԻԿ ԵՒ ԶԵԼԼԱ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ԵՒ
ԴՈՒՍՏՐԵՐԸ՝ ԹԱՄԱՐ ԵՒ ՓԱԹԻԼ**



ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿԻ ՕՐԱԳՐԷՆ

ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ

Մեր ընթերցողներուն կը ներկայացնենք կաղանդ պապուկի օրագրէն գաղտագողի փրցուած քանի մը էջեր: Ինք կը նախընտրէր իր կրած տարրուկներով չխանգարել տօնական այս օրերու մթնոլորտը: Սակայն մենք չարմար նկատեցինք անոնց լոյս ընծայումը:

1. ՎԵՐՉ ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ

Զրպարտութեան դէմ Ազգային ժողովի տուգանքներու օրինագիծը այնքան դուր եկած է կաղանդ պապուկին որ քիչ մնաց մարէր ինդալէն: Ան e-mail դրկած է Հայաստանի օրինապահներուն, անոնց չիռեցնելով որ այս խիստ օգտակար օրէնքի գործադրութիւնը կարելի է սկսիլ՝ մեծագումար տուգանքներու ենթարկելով բազմաթիւ դատաւորներ, ոստիկաններ, նախարարներ, նախորդ ու ներկայ նախագահներ – բոլորն ալ ապօրինաբար հարստացած – որոնք զանգուածային անկարգութիւններու կամ իշխանութիւնը բռնազաւթելու չեղելու զրպարտութիւններով ազատագրկած են արցախեան անձնագործ ազատամարտիկներն ու բազմաթիւ քաջարի քաղաքացիները: Կաղանդ պապուկը հաշուած է թէ այսպիսով գոյացած գումարը լիով պիտի բաւարարէր երկրաշարժէն աւերուած աղէտի գօտիի բոլոր կարիքներուն՝ ներառեալ անհրաժեշտ նոր բնակարաններու կառուցումը Սպիտակի, Կիւմրիի եւ այլ շրջաններու մէջ:

2. ՎԱՐՁԱՊԵՏԻՆ ՎՐԱՆԸ ԱՄՊԵՐՈՒ ՎՐԱՅ

Կաղանդ պապուկը ամպերու վերեւ ճամբորդելու պահուն ափի բերան մնացած է հոն տեսնելով Հայաստանի վարչապետ Տիրան Սարգսեանը որ, հետեւելով իր – ո՛չ իմ – նախագահի օրինակին, իր քարոզչական վրանը հաստատած է հոն ծփացող վերացական ոլորտի փափուկ ամպերուն վրայ: Ժամանակին, կեդրոնական դրամատան տնօրէն եղած ատեն, բնակչութեան բարօրութիւնը ան կը չափէր տնտեսութեան Համախառն Ներքին Արդիւնքի հետ: Հիմա ամէն ինչ փոխուած է: Ծանթ հեռուստատեսութեան տուած գրոյցին մէջ ան խօսեցաւ – տեսակ մը կէս հեզնական ժպիտով – Համախառն Երջանկութեան մասին: Հոգեւոր արժէքներու գովազդով՝ երկիրը բաժնեց նորովի մտածողներու եւ հինցած գլուխներու: (Անշուշտ ինքնային հասկնալի է թէ ո՛ւր տեղակայուած է իր սեփական իշխանական գլուխը): Հեռուստավար Նուէր Մնացականեան հարց տուաւ թէ կրնա՞ր շօշափելի իրագործումներու մասին ալ խօսիլ, թէ ե՞րբ աւելի լաւ պիտի ապրինք ու ե՞րբ դուրս պիտի գան անոնք որ աշխարհին կը նային գրասենեակներու եւ ինքնաշարժներու պատուհաններէն: Տհաճօրէն զգացուելով հանդերձ, վարչապետը խօսակիցին «չնորհեց» քննադատելու իրաւունքը, սակայն ինք վերստին ապաստանեցաւ ամպերուն վրայ: «Շնորհակալութիւն ձեր մտալոյցներուն համար», եզրափակեց Մնացականեան:

3. ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Կաղանդ պապուկի ականջին հասեր է թէ Սերժ Սարգսեանի եղբայրը՝ Լեւոն Սարգսեան, Երե-

ւանի Պետական Համալսարանի Աստուածաբանութեան Ֆակուտետի (սեւ շէնք) Հայ եկեղեցու պատմութեան եւ եկեղեցաբանութեան ամբիոնի վարիչն է: «Ահ-հա՛, ըսեր է պապուկ Սանթան, հի՛մա հասկցայ թէ Սերժիկը իր լացնելու չափ յուզիչ ծանրաքայլ ճառերուն մէջ ուրկէ՛ կը վերցնէ բարոյախօսական անարատ յղութեամբ բերուած իր աստուածահաճոյ բառերն ու միտքերը:» Կաղանդի խորհուրդէն փափկացած լեզուով, մենք ալ ամենայն անկեղծութեամբ կը մայթենք որ աստուածաբանական ու սիրային իր սնամէջ յանկարկումներուն Սերժ Սարգսեան աւելցնէ քիչ մը բովանդակութիւն՝ միս ու ոսկոր, եւ այս վերջիններէն բաժին հանէ իր կնքահայր Ռոբերտ Քոչարեանին:

4. ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ ԱՐՑԱՆԻ ՄԷՋ

Մէկիկ-մէկիկ այցելելով բոլոր արցախահայոց խրճիթները, կաղանդ պապան հայրաբար անոնց յայտնած է իր խոր յուսախաբուցութիւնը: «Դուք ինչպէ՞ս յայտնեցիք ձեր երախտագիտութիւնը ազատամարտիկներ Սասուն Միքայէլեանի, Սարգիս Հացպանեանի եւ միւսներուն հանդէպ որոնք իրենց կեանքի գինով ազատութիւնը բերին ձեր տուններուն, բայց որոնք վիրաւոր ու հիւանդ դեռ կը հիւծին հայանուն բռնատէրերու բանտերուն մէջ», սաստած է ան: Եթէ շարունակեն ապերախութիւնը եւ մէ՛կ մարդու նման արցախավարի՛ չպահանջեն բոլոր ազատամարտիկներու ազատ արձակումը, կաղանդ պապուկը կը սպառնայ գալիք տարիներուն այս կողմերը չգալ այլեւս: «Թո՛ղ Զօրի Բալայեանը կաղանդ պապ ընեն, կ'ըսէ, հերի՛ք է ինքզինք Քրիստափոր Գոլոմպոս կը կարծէ աշխարհի ծովերն ու ովկիանոսները շրջելով»:

5. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻՆ

Կաղանդ պապան կը պահանջէ որ «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանին դէմ ութը տարուայ ազատագրկում պահանջող Կորիւն Փիլոյեանը, որ արհեստավարժ դատախազ չէ, վերադառնայ իր բուն արհեստին որ մագործութիւնն է, եւ Փաշինեանը վերադառնայ իր խմբագրատունը: Նոյն ատեն, ան Սերժ Սարգսեանէն կը պահանջէ որ սիրոյ եւ եղբայրութեան յուզիչ քարոզաճառ մը արտասանէ այն յանցագործներուն որոնք ծեծի ենթարկած են Փաշինեանի ընտրական արշաւի երիտասարդ աշխատողները:

6. ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2009՝ «ՄԵՐ ՇՈՒՇԻՆ» ԿԱՐԳԱԽՈՍՈՒՎ

Կաղանդ պապուկը զարմացումով սկսած է գլուխը քերել երբ «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրէնը հաւաստիացած է թէ Հայաստանի եւ Արցախի բոլոր պաշտօնեաները (?) մասնակցած են դրամահաւաքին: Նախագահական աշխատակազմէն հաւաքուած է 8,000 տոլար՝ ներառեալ Սերժ Սարգսեանի նուիրատուութիւնը: Իսկ ընդհանրապէս գումար չէ ստացուած հայաստանցի եւ սփիւռքահայ խոշոր գործարարներէ: Այս առնչութեամբ, գործարարներու մօտ յամառօրէն շրջող

գրոյցներու համաձայն, Շուշիի վերակառուցման համար դրամահաւաքը անօգուտ եւ խախուտ ներդրում նկատուած է, քանի անոր տէրերը արդէն հաշտուած են ամբողջ Ղարաբաղը Ատրպէյճանին ծախելու «ուզմովարութեան» հետ: Տայ Աստուած որ այս գրոյցները անհիմն ըլլան:

7. ՍԵՐՇԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ ՀԱԿԱՆԻՇՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ

Հայաստան աշխարհ իր նախկին ուղեւորութեան ընթացքին, կաղանդ պապուկը չէ կրցած հասկնալ երկրի պետական այրերուն կողմէ ներկայիս գոծածուող սերժերէն լեզուն: Խնդրի լուծման նպատակով պատրաստուած է պարզ մահկանացուներու համար յատուկ բառարան, ուր Սերժ Սարգսեանի ճառախօսութեան մէջ շոյջուած սիրոյ, բարութեան ու համագործակցութեան չնաշխարհիկ տերմինները սահմանուած են իրենց իսկական, հակադիր իմաստով: Ստորեւ կը հրամցնենք պարագայական նմոյշներ այդ սահմանումներէն՝ այբուբենական կարգով.

Ազատութիւն – Առանց պայմանի անձնատուութիւն ազատ-անկախ իշխանութեան:

Ազգային ժողով – Թաթար-մոնղոլական համակարգէն ժառանգուած թալանակառօյց ուր ազգին հատընտիր «կորիլլա»ները իրար միջեւ կը բաշխուին ազգին հարստութիւնը, քանի երկրի բոլոր քաղաքացիներն ալ անօթի պիտի մնային եթէ բաշխուէր ամենուն:

Ապրիլ 24 – Հայկական հիւստումարով վտանգի ուղենիշ մը որ թուրք դիւանագէտները ամէն գարնանամուտին կը զգուշացնէ շուտով գալիք վտանգաւոր դարձուած քի մը մասին՝ ցեղասպանութիւն ան-

ուամբ: Դէպի Հայաստան ֆուլթայոլային այցելութեան եկող թուրք զբօսաշրջիկները անազանգելու բարի նպատակով, Սերժիստանի թուրիստական սպասարկութիւնները, այդ ուղենիշէն ալ առաջ, ճամբեցրին գետեղած են ճանապարհային խոշոր քարտէս մը:

Արդարութիւն – Վերացականացուած հասկացութիւն – կամ անհասկացութիւն – մը գոր կարելի է բռնել որեւէ ծայրէն: Իշխանաւորներուն արտօնուած է բռնել ծուռ կողմէն՝ պոչէն, մինչեւ որ փրթի եւ ինչայ ցեխին մէջ:

Արձանագրութիւններ – Քաղաքական խաչբառ որու տողերուն միջեւ տառերն ու բառերը գտնելու համար անհրաժեշտ է դիմել էրտողանի աստղագէտներուն ու մահիկագէտներուն կամ Նալպանտեանի աստղագուշակներուն:

Դիւանագիտութիւն – Ֆուլթայոլի նորատեսակ մրցում ուր հայերը հեռատեսակապես իրարմամբ կը կորսնցնեն որպէսզի թուրքերը կարծեն թէ իրենք են շահողը...: (Աւելի խորախորհուրդ միտք բանին չհասկցողներուն կը թելադրենք՝ առեղծուածի բանալին ստանալու համար դիմել Նալպանտէտուկին կամ իր վարպետին):

Ժողովրդավարութիւն – Տեսակ մը տաք օդի հոսանք որ ներայիս ուժգնօրէն կը փչէ նորանկախութեան կամ ներքին գաղթատիրութեան սանձարձակ լուծին տակ գլուխին վեր պահել փորձող ժողովուրդներու վրայ: Մեզ մօտ առհասարակ կը գործածուի որպէս հոմանիշ «հարստապետութիւն» եւ «սակաւապետութիւն» տերմիններու, քանի անոնք ալ ի վերջոյ ժողովուրդ են:

Շար.ը էջ 33



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՕՀԱՆՆԷՍ ԵՒ ՇՈՒՇԻԿ ՄԿՐԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2010

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՇԵՄԻՆ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

2008 թ. Յունիսի 24-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Թուրքիայի առաջարկի մասին՝ ձեռնարկել մի յանձնախումբ պատմական փաստերն ուսումնասիրելու համար եւ նշեց, որ ինքը դէմ չէ այդպիսի յանձնախումբի ստեղծման, եթէ Հայաստան-Թուրքիա սահմանը բացուի: ՀՀ նախագահի խօսնակ Սամուէլ Ֆարմանեանը հաստատելով այդ լուրը նշեց, որ մենք դէմ չենք որեւէ ուսումնասիրութեան, անգամ՝ ակնյայտ փաստերի և լայնօրէն ընդունուած իրողութիւններին, ուսումնասիրութիւնը չի նշանակում փաստերի իսկութիւնը կասկածի տակ առնել:

Սոցիալ յայտարարութեան առթիւ ես գրեցի «Հայերի ցեղասպանութեան փաստը վիճարկման ենթակայ չէ» յօդուածը (տե՛ս «Մասիս», շաբաթ, Օգոստոս 2, 2008, էջ 6), քանի որ այն հարցականի տակ էր դրուում ՀՀ նախագահի կողմից, որի հետեւանքով սառեցուցեց Հայերի ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը, եւ այդ հարցը քննարկող բոլոր պետութիւններն ու առանձին կազմակերպութիւններ սպասում են հայթրքական յարաբերութիւններում դրա քննարկման արդիւնքին:

Յօդուածում ես ակնարկել էի Հայաստանի կողմից քննարկման դնել նաև գոնէ Արեւելեան Հայաստանը Տրապիզոնի հետ միասին Հայաստանին վերադարձնելու հարցը՝ դէպի Սեւ ծով ելք ունենալու համար:

2009 թ. Օգոստոսի 31-ին Շուէյցարիայի միջնորդութեամբ Յիւրիխում Հայաստանի և Թուրքիայի հանրապետութիւնների միջև ստորագրուած՝ Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների՝ Էդուարդ Նալբանդեանի և Մահմեդ Դաուդթօղլուի կողմից «Հայ-թուրքական երկկողմ յարաբերութիւնների զարգացման եւ երկու երկրների միջև ղիւսանազիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւնները» (տե՛ս «Մասիս», Շաբաթ, Սեպտեմբեր 5, 2009, էջ 5) սառը ջուր լցրին հայ ժողովրդի տանամեակների ընթացքում ներդրած ջանքերի շնորհիւ Հայերի ցեղասպանութիւնը միջազգային հանրութեանը ճանաչելի դարձնելու ճիգերին: Այդ փաստաթղթի ստորագրմամբ ո՛չ միայն Հայերի ցեղասպանութեան ճանաչումն է լճացում արդուում, այլ նաև ընդունում է Հայաստանի և Թուրքիայի միջև գոյութիւն ունեցող ներկայ սահմանները՝ վերջ դնելով հայերի պահանջատիրութեանը Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիայի նկատմամբ:

Անկախ այն բանից, թէ ո՞ւմ ճնշման տակ է պատրաստուել եւ ո՞վ է պատրաստել արձանագրութիւնների տեքստը, նախքան ստորագրելը այն պէտք էր քննարկուէր Հայաստանի և սփիւռքի ամբողջ հայութեան կողմից, այնուհետեւ՝ Ազգային ժողովում, եւ միայն հաւանութեան արժանանալուց յետոյ ներկայացուէր ստորագրման, չէ՞ որ Հայաստանի ու հայ ժողովրդի ճակատագիրն էր որոշուում դրանով: Սա կարող էր անել միայն օրինաւոր ընտրուած նախագահը: Կեղծ ընտրութիւններով նախագահ դարձած Սերժ Սարգսեանը

Արդարութիւնը թող յարթանակի, Թող Յայոց հողը իր տիրոջ տրուի:

Հայաստանը վերածեց անիշխանական (անարխիստական) երկրի և բոլոր գերատեսչութիւններին՝ սկսած ՀՀ Գիտութիւնների Ակադեմիայից վերջացրած լրատուական գործակալութիւններով, դարձրեց իր հյուսիս-հարավ կամակատարները, որոնց պաշտօնեաները ճգնում են ապացուցել, որ արձանագրութիւնները Հայաստանի օգտին է՝ փորձում են ապացուցել, որ մածուներ սեւ է...:

Սահմանը բանալը ի՞նչ կապ ունէր վերոյիշեալ հարցերի հետ: Թուրքիան էր փակել սահմանը, թող նա էլ բանար: Որքա՞ն է թուլացել Հայաստանը, որ դարձել է գերպետութիւնների կամակատարը...:

Արձանագրութիւնների տեքստում ընդգրկուած գլխաւոր հարցերը՝ Հայերի ցեղասպանութեան եւ ներկայ սահմանների ընդունման մասին, իրենց մէջ ընդգրկում են մշտադատ հարցեր եւս՝ Արցախի, Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան եւ այլն, որոնք Թուրքիան յաջողութեամբ է իրագործում և առանց Լեւոնային Ղարաբաղի հարցի լուծման նա պատրաստ չէ սահմանները բանալու ու արձանագրութիւնները վաւերացնելու խորհրդարանում:

Արձանագրութիւնների ստորագրումը ընդգրկումով ընդունուեց Հայաստանի և սփիւռքի համարեա ամբողջ հայութեան կողմից: Գիտակցելով այդ, նախագահ Սերժ Սարգսեանը ձեռնարկեց այց կատարեց սփիւռքով մէկ, լսեց սփիւռքի կարծիքը, բողոքներն ու առաջարկութիւնները, սակայն ոչ մի փոփոխութիւն չկատարեց արձանագրութիւններում՝ յօգուտ հայ ժողովրդի շահերի: Սա կարող է խորացնել Հայաստանի և սփիւռքի միջև եղած ճեղքը:

Այցելութեան ժամանակ նախագահը համոզուեց, որ համակարգող մարմին չունենալով հանդերձ, սփիւռքն ամուր կանգնած է Հայերի ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան դիրքերում եւ նա չի կարող համոզել սփիւռքին նահանջելու այդ դիրքերից: Կարծում ենք նախագահի յիշողութիւնում երկար կը մնայ Սփիւռքի պատգամը եւ իր հեղինակագրութեան թիւնը: Սա մեծ փորձառութիւն էր նրա համար, որը միգուցէ մտքովն անգամ չէր անցնում: Դժբախտաբար ամբողջ պաշտութիւնն ու մեծամտութիւնը նրան հասցրեց այն բանին, որ հաշուի չառաւ Հայաստանի և սփիւռքի քաղաքագետների ու մտաւորականութեան գոյութիւնը՝ իրեն սեպելով ամենախելացիին, և ընկաւ Թուրքիայի սարքած ծուղակը, ինչպէս ժամանակին նախագահ Ռոբերտ Քոչարեանը յայտարարեց, որ Հայաստանում միակ տղամարդը ինքն է՝ Հայաստանը հասցնելով կործանման եզրին:

Հայ ժողովուրդը խելացի է: Վրդովուելով հանդերձ նախագահի գործունէութիւնից, որի մասին բազմաթիւ քննադատական յօդուածներ գրուեցին, հեռուստատեսային ելոյթներ ու ցոյցեր տեղի ունեցան, նա կատարեց իր պարտա-

Այս է խնդրանքը համայն հայութեան՝ Ամբողջ մարդկութեան, եկող Նոր Տարուան: «Սիրոյ դողանջներ»

կանութիւնները «Հայաստան» հիմնադրամի հանդէպ, որը կապուած չէ որեւէ նախագահի անձի հետ՝ նախագահներն անցողական են, իսկ Հայրենիքը՝ յարատեւող:

Արդե՞օք նա չգիտակցեց իր դաւաճանելը հայ ժողովրդին, երբ «հերոս» ձեւանալով յայտարարեց, որ նախորդ նախագահները չկարողացան մերձենալ Թուրքիայի հետ, բայց ինքը կարողացաւ: Արդե՞օք նա չի հասկանում, որ նման խոստումներով ցանկացած նախագահ կարող էր մերձենալ Թուրքիային: Զէ՞ որ Թուրքիան միլիոնաւոր տղարներ է ծախսում Հայերի ցեղասպանութիւնը դրժելու և երկու երկրների միջև եղած ներկայ սահմանը որպէս մշտական սահման ընդունելի դարձնելու համար Հայաստանին:

Որպէս գերպետութիւնների կամակատար (լինելով ոչ-օրինաւոր նախագահ), Սերժ Սարգսեանը Հայաստանը ուզում է վերածել կրկնակի, որը, հաւանական է, հետագայում դառնայ Թուրքիայի մի նահանգը: Ահա թէ ինչու. անշարժ գոյքի վաճառքի մասին Ազգային ժողովի ընդունած օրէնքի համաձայն, ցանկացած օտարերկրացի կարող է կալուածք գնել Հայաստանում: Այսօր բազմաթիւ ատրպատականցիներ և ատրպէյճանցիներ, որպէս Պարսկաստանի քաղաքացիներ, Հայաստանում գնել են տներ, խանութներ, կալուածքներ եւ այլն, որի վրայ կառավարութիւնը ոչ մի ուշադրութիւն չի դարձնում և չի նկատում Հայաստանին սպառնա-

ցող ապագայ վտանգը: Երբ Հայաստանի և Թուրքիայի սահմանը բացուի, հաւատացած ու համոզուած ենք, որ Թուրքիան արդէն մշակած ծրագիր ունի և ամէն միջոցի կը դիմի տիրանալու համար Հայաստանի ամբողջ անշարժ գոյքին ու կալուածքներին և Հայաստանը բնակեցնել աւելի շատ Թուրքերով, քան նրա հայ բնակչութիւնն է՝ խաղաղ կերպով տիրանալով նրան, ինչպէս այդ անում էր Ատրպէյճանը խորհրդային շրջանում: Զեյնա Յակոբեանը իր «Մէջքով դէպի Արարատը» յօդուածում (տե՛ս «Մասիս», Շաբաթ, Դեկտեմբեր 12, 2009, էջ 2) գրում է. «Այնպէս որ, Թուրքերի գալով, Հայաստանի անշարժ գոյքի շուկայում բնակարանների գները կը թանկանան, բայց փոխարէնը մեծ հաւանականութիւն կայ, որ կ'էժանանան վարձով տրուող բնակարանները: Թէեւ կայ իհարկէ մի լուրջ խնդիր: Բանն այն է, որ հայթրքական յարաբերութեան այդօրինակ ջերմացման հետեւանքը գուցէ լինի այն, որ Հայաստանում կը գայ մի ժամանակ, երբ բնակարան թէ վաճառողները, թէ գնողները, թէ վարձողները կարող են լինել առաւելապէս Թուրքեր»:

Հայաստանը գտնուում է փորձութեան շեմին: Ի՞նչ անել պետականութեան հիմքերը ամուր պահելու համար: Եթէ արձանագրութիւնների վաւերացումն իրականանայ երկու երկրների խորհրդարաններում, ապա պէտք է մոռանալ Արեւելեան Հայաստանն ու Տրապիզոնը Հայաստանին միացնելու առաջարկի մասին: Գոնէ ներկայ Հայաստանը փրկելու համար, անյապաղ օրէնք պէտք է ընդունել

Շաբ.ը էջ 34



ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏՕՔԹ. ԵՒ ՏԻԿ. ՀԱՄԲԻԿ ԵՒ
ՆԱՅՐԱ ՍԱՐԱՑԵԱՆ

ՍԱՍԻՍ - 2010

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԻՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ Ա. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«Զի ինձ կեանք Քրիստոս է» (Փիլիպպեցւոց 1:21)

Մեր Տիրոջ ու Փրկչին Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծնունդը՝ Աստուծոյ անչափելի եւ անսահման սէրը բացառապէս յաւիտենական ճշմարտութիւնն է, որ անգամ մը եւս իրական կը դառնայ մեր կեանքին մէջ: Եւ երբ հաւատքով կ'ըմբռնենք Աստուածային այս խորհուրդը, ապա Յիսուսի Ծնունդով մեր մէջ կը գտնենք նաեւ Աստուծոյ կողմէ մեզի շնորհուած կեանքը հրաշագործելու գործելու ժամանակը:

Մեր հոգիներուն մէջ աղօթք դարձած շարականին բառերը, երբ թուի՞ք կ'առնեն հաւատքի գագացողութեամբ, ապա այդ ժամանակ մեր մէջ կ'ապրինք նոր կեանքին ծնունդը:

«Այսօր տօն է Սուրբ Ծննդեան, աւետիս,

Տեառն մերոյ եւ յայտնութեան, աւետիս,

Այսօր արեւն արդարութեան, աւետիս,

Երեւեցաւ ի մէջ մարդկան, աւետիս»:

Քրիստոնէութիւնը զիտութիւն կամ փրկիստփայլութիւն չէ. Քրիստոնէութիւնը մատեմատիկա կամ տեխնիկա չէ: Քրիստոնէութիւնը Աստուծոյ կողմէ հաստատուած ճշմարիտ կեանքի ընթացքն է, որուն կոչումը բոլորս ալ ստացած ենք եւ բարոյական պարտք ունինք գործնականապէս պատասխանելու:

Հետեւեալը, երբ կը տօնախմբենք մեր Տիրոջ եւ Փրկչին հրաշալի Սուրբ Ծնունդը, ապա նոր ուխտ կը կնքենք Աստուծոյ հետ՝ շարունակ դառնալու համար Քրիստոնեայ, հետեւող Քրիստոսի եւ գործադրող Անոր Աւետարանի պատգամները: Որովհետեւ մարդ եւ Աստուած կապն ու յարաբերութիւնները պայմանաւորուած են մարդուն կողմէ ներկայացուած ուխտով, որուն գլխաւոր նպատակն այն է, որ մարդը իր էութեան մէջ պահպանէ Աստուծոյ պարզեւր: Ահաւասիկ կեանքի այս ընթացքով ալ կ'իմաստաւորուի Սուրբ Ծննդեան տօնախմբութիւնը: Սուրբ Ծնունդը պիտի դառնայ մեր կեանքին նոր նկարագիր պարզեւրող հոգեւոր ու ժամկետութիւնը, որուն հիման վրայ ալ պիտի կարողանանք մեր մէջ հաստատել Աստուծոյ շունչը, Քրիստոսի սէրը, խաղաղութեան ու ստեղծագործ կեանք մը ապրելու տեսիլքը, խոնարհութեամբ մեր էութիւնը լեցնող ձգտումը, յարգանքը՝ բնութեան հանդէպ եւ տակաւին այն բոլոր հոգեւոր ու բարոյական արժէքները, որոնցմով կեանքը կը դառնայ օրհնութիւն:

2010 թուականի սեմին ենք: Տարի մը եւս բոլորեցինք եւ ինչքան 2009 տարին իր լրումին կը հասնի, այնքան պարտ ենք մեր կեանքը հաշուելարդարի ենթարկել այն հարցադրումով, թէ ինչքանով մեր կեանքի ճանապարհը ուղղեցինք առ Աստուած, թէ ինչքանով Աստուծոյ սիրով կերպարանափոխեցինք մեր նմաններուն կեանքը, թէ ինչքանով մեր կեանքը դարձուցինք բարի միջոցն ու Աստուծոյ ձեռքերը

ժողովուրդներու կեանքին մէջ օրհնութիւն մատակարարելու համար, թէ ինչքանով ապրեցանք հայրենասիրութիւնը գործնական տեսակէտով դիտուած, թէ ինչքանով եկեղեցին դարձուցինք մեր կեանքի գերագոյն նպատակը:

Եկեղեցին Աստուծոյ ընծան է, որուն ծնունդը պայմանաւորուած ու երաշխաւորուած է մեր իսկ հաւատքի կեանքով: Այս նպատակով ալ 2010 թուականը մեր թեմական կեանքին ներս կը յայտարարենք «Եկեղեցւոյ Տարին», որովհետեւ թեմի ամբողջ տարածքին եկեղեցաշինութիւնը նոր թափ ստացաւ ու երկիրք բարձրացող զմբէթներն ու նոր խորաններուն վրայ մատուցող Սուրբ Պատարագները դարձան կենսաբաշխ վկայարանները նահատակաց: Հայց. Առաքելական Եկեղեցին Աստուծոյ Տունն է, մեր կեանքի տունն է, մեր կեանքի Սրբութիւն Սրբոցն է, ու ամենաազնիւ առաքելութիւնն է, որուն առջեւ մեր նախնիք խոնարհած են: Հերթը այսօր մերն է խոնարհումի:

Հայ Քրիստոնեայի համար Քրիստոսի Սուրբ Ծնունդը տօնախմբելը վաւերական է Սուրբ Էջմիածնի Խորհուրդին առջեւ խոնարհումով, քանզի Տիրոջ Ծնունդը հայ մարդը կատարելապէս ըմբռնեց իր պայպենական հոգին վրայ տեսնելով Միածնի էջքը, ուր կառուցուեցաւ առաջին կաթողիկէ Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածինը, անոր տալով բարոյական արդար իրաւունքը՝ Հայց. Եկեղեցւոյ Մայր Կեդրոնը դառնալու, հանգամանք մը, որ անփոխարինելի է Սուրբ Էջմիածնի նկարագիրն ու հանգամանքը հաստատող: Հայ Քրիստոնեայի համար Յիսուս Քրիստոսի Ծնունդը ապրիլ կը նշանակէ Փրկչի Ծնունդին մէջ տեսնել իր հոգեւոր կեանքի վերածնունդը: Ամէն անգամ երբ տօնախմբենք Յիսուսի Ծնունդը, խորքին մէջ ո'չ միայն կը խոնարհինք Աստուածայայտնութեան մեծ խորհուրդին առջեւ, այլեւ Անոր Ծնունդը կը դարձնենք մեր կեանքին Արմատը: Յիսուսի Ծնունդը տօնախմբելը հայ Քրիստոնեայի համար ունի բազում իմաստներ եւ հրաւերներ: Անոր Ծնունդին մէջ մենք կը տեսնենք մարդկութեան ծնունդը, նոր աշխարհի ծնունդը, խաղաղութեան Կոչը, բարիքն ու զեղեցիկին առաջնորդող Աստղը, մեր մայր երկիրը վերածննդեան առաջնորդող ձանապարհը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դէպի երկիրք տանող Ոսկի Կամուրջը:

Սիրելի հաւատաւոր հայրենակիցներ, Մանուկի մը մաքուր սրտով տօնախմբենք Յիսուսի Ծնունդը, եւ այդ Ծնունդով վերածնուած պիտի կարողանանք դիմաւորել կեանքի բոլոր մարտահրաւերները, մանաւանդ այս օրերու տնտեսական տագնապը եւ անոր յարուցած դժուարութիւնները: Խաղաղ ու բարգաւաճ ժամանակներու ընթացքին առաւել եւս պարտ ենք ցոյց տալ մեր հաւատքի գործելութեան եւ տոկոսնութեան չափը: Որով, էական է, որ մենք յաղթահարենք դժուար

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԻՐՇ. Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ Ա. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Ղուկասի Աւետարանը՝ շեփորի հզօր հնչիւնին նման՝ Ս. Ծննդեան պատմութիւնը կը սկսի ամբողջական պերճ ու սպաւորիչ շուքովը աշխարհային ուժին: Կ'իմանանք կայսերական հրամանի մը մասին՝ ուղղուած բովանդակ աշխարհին: Կը պատկառինք վերին իշխանութեան՝ որ կը հրահանգէ եւ հարկ կը սահմանէ: Կ'ապշինք Հռոմէական կայսեր անուան գրաւիչ յիշատակութեան ի լուր: Ասոնք ժամանակակից մարդոց վստահութիւնները նշող այն հենակէտերն էին, զորս Պատմութիւնը պիտի ընդգծէր՝ երբ կարեւոր գրքեր գրուէին:

Սակայն քանի մը բառերու սահմանէն անդին անցնելով՝ Ղուկաս Աւետարանիչ յանկարծ տեսարանը կը ըրջէ աշխարհատարած թատերաբեմէ մը դէպի կայսրութեան ծայրամասերուն վրայ գտնուող փոքրիկ գիւղաքաղաք մը, քաղաքական ուժի ոլորտէն դէպի ընտանեկան հոգեւոր տուայտող գոյգ մը: Տունէն շատ հեռու, տղաբերքի սպասման վիճակին մէջ՝ անոնք կը թուին ըլլալ անօգնական աշխարհի հսկայ ուժերուն դիմաց: Անոնց անպաշտպան վիճակը համարուած կեպով ներկայացուած է մէկ նախադասութեամբ. «Եւ ան ծնաւ իր անդրանիկ որդին, փաթթեց գայն խանձարուրի մէջ եւ դրաւ մատը, որովհետեւ իջեւանին մէջ իրենց համար տեղ չկար»: (Ղուկաս, Բ. 7)

Մինչեւ այս կէտը՝ մեզի նոյնիսկ չէ յայտնուած փոքրիկին անունը: Բայց հետագայ էջերուն մէջ եւ դարերու ընթացքին պիտի հետեւինք անոր պատմութեան: Այսօր, երկու հազարամեակ ետք, դեռ կը հետեւինք անոր: Իսկ շրջապատի աշխարհային ուժերը, որոնք յիշուած են Ղուկաս Աւետարանիչի սկզբնական տողերուն մէջ, հնագոյն շրջանի մը պատմութեան կը պատկանին, մինչ մենք այսօր, ինչպէս ամէն տարի, գիտակցաբար կը պատրաստուինք նշելու Բեթղեհէմի խոնարհ ծնունդը:

Ի՞նչ բանն է որ կը մղէ մեզ յիշելու այս փոքրիկը:

Յիշատակութեան արժանի է այն իրողութիւնը, որ աշխարհ միշտ չէ որ տօնած է Ս. Ծնունդը: Նոյնիսկ եկեղեցւոյ սկզբնական օրերուն՝ Ս. Ծնունդը չէր նշուեր որպէս տօնական օր: Սակայն տակաւ առ տակաւ մարդիկ վերանաստ դարձան, որ ամենէն խորիմաստ իրականութիւնը, մեծագոյն ճշմարտութիւնը աշխարհի վերաբերեալ, յայտնուած էր հարուստ եւ հզօր արքունիքներէ հեռու՝ թաքուն վայրի մը եւ ժամանակի մը մէջ:

Սրբազան աւետարանիչներուն նպատակը դարձաւ աշխարհին ծանուցանել այս անակնկալ դէպքին պատմութիւնը: Աւետարանական պատմութեան մեծ մասը, անշուշտ, կը ներկայացնէ դէպքեր մեր Տիրոջ կեանքի չափահաս շրջանէն՝ Անոր վարդապետութիւնը, հրաշքները, մահուան հանգամանքները եւ յարութիւնը. այն նպատակը՝ որուն Ան հաւատարմօրէն ծառայեց: Սակայն Ս. Ծննդեան պատմութիւնը կը շեշտէ, թէ այս նպատակը անձնական փորձառութեան մը չէր ծագած եւ աճած: Ընդհակառակն՝ Քրիստոսի նպատակը սկիզբէն կար. իր անմիջական գոյութիւնը, յղացումը, ծնունդը, եւ ամբողջ կեանքը,

ուղղուած էր դէպի այդ նպատակի լրման:

Անգամ մը եւս՝ Ղուկասի աւետարանը մեր ուշադրութիւնը կը հրաւիրէ այս կէտին վրայ: Քրիստոսի մկրտութեան իր նկարագրականին մէջ կը կարդանք երկիրքի բացուելուն, Ս. Հոգիի աղաւնակերպ իջման եւ երկիրքին որոտացող ձայնին՝ «Դու ես իմ սիրելի Որդիս, քեզի հաճեցայ»: Եւ ապա՝ Աստուածաշունչ մատենախմբման նրբիմաստ, եւ արդի լեզուներով անթարգմանելի, տողերէն մէկուն մէջ Ղուկաս Աւետարանիչ կ'աւելցնէ՝ «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ»:

«Եւ ինքն Յիսուս էր . . . սկսեալ» բացատրութեան իմաստը՝ համաձայն մեր հին մեկնիչներուն՝ ա'յն է, որ Ան ի մօրէ մուտք գործեց ժամանակէն ներս, բայց ի Յօրէ «ունի գանձամանկն»: Ժամանակէն ներս Ան իր կոչումը ամբողջացուց, յայտնելով իր իսկական նպատակը՝ սկսեալ կեանքի այս հանգրուանէն: Հաւանաբար ասիկա պատճառներէն մէկն է, որ Հայց. Եկեղեցին Քրիստոսի Ծնունդը եւ Մկրտութիւնը նոյն օրը կը տօնէ, քանի որ անոր գոյութիւնը եւ ծառայութիւնը խորհրդաւոր իմաստով մը նոյնն են: Արդարեւ՝ Քրիստոսի ոչ միայն գործերը որպէս չափահաս անձ, այլ եւ Անոր ծնունդը, եւ մուտքը ժամանակէն ներս, ցնծութեան առիթներ կը հանդիսանան մարդկութեան համար:

Այս հասկացողութեան մէջ պարտինք որոնել ուրուագիծը կոչումի քրիստոնէական իմաստին: Հայերէն կոչում բառը ունի «հրաւեր» նշանակութիւնը, որուն ներքին իմաստը այն է, որ Աստուած իւրաքանչիւր անձ կը ստեղծէ որպէս իւրաքանչիւր անհատ, որուն ամբողջ կեանքը կը ձգտի բարձրագոյն նպատակի մը:

Ի լրումն իր նպատակին՝ Քրիստոս այժմ կոչ կ'ուղղէ մեզի: Բովանդակ առումով՝ Ան կը կանչէ մեզմէ իւրաքանչիւրս, որպէս զի սկսինք ըլլալ ինչ որ ենք՝ կատարելու համար մեր դերը Աստուծոյ մեծ ստեղծագործութեան մէջ: Ոմանց համար այդ դերը մեր Տիրոջ հովուական ցուպը առնել եւ Անոր ծառայելն է՝ ծառայելով իր ժողովուրդին որպէս հոգեւորական: Յաւանաբար մեր թեմի տարածքին պիտի հետագոտենք եւ քաջալերենք այս չափազանց թանկագին կոչը՝ «Կոչման Տարի» կոչում Մառայնութեան» լողունգին ներքեւ:

Բայց իւրաքանչիւր արարածի համար, այն իրողութիւնը որ Աստուած մեզմէ իւրաքանչիւրը կը կոչէ իր մասնաւոր նպատակին՝ սքանչելի յայտնութիւն մըն է: Սա կը նշանակէ որ մեր անմիջական գոյութիւնը եւ մեր կոչումին գիտակցութեամբ ապրելը կը հաճոյացնէ զԱստուած: Քրիստոսի միջոցաւ մենք դարձած ենք Աստուծոյ որդեգիրները: Մենք եւս կարող ենք ըլլալ անոնցմէ, որոնց Ան հաճեցաւ:

Թող այս մեծ Աւետիսը ներշնչէ մեզ, մինչ մենք կը տօնենք Քրիստոսի Յայտնութիւնը: Այս Աստուածայայտնութեան տօնին բանանք մեր սրտերը իր հրաւերին առջեւ, երբ ցնծութեամբ իրարու կ'ըսենք՝

Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ: Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

ՄԱՍԻՍ - 2010

ԾՆՆՌԵԱՆ ՊԱՏԳԱՄ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆԻ ԻՆՉ ՓՈԽՈՒԱԾ Է ԵՐԿՈՒ ՀԱՋԱՐ ՏԱՐԻ ԵՏՔ

«Երբ ժամանակը հասավ, Մարիամ ծնաւ իր անդրանիկ որդին, խանձարուրով պատեց եւ մսուրի մը մէջ դրաւ, որովհետեւ տեղ չկար իջեւանին մէջ»:

Պարզ, ժուժկալ բառեր, աւետելու համար մեծագոյն եղելու թիւնը մարդկութեան պատմութեան՝ տիեզերքի ստեղծումէն ի վեր: Այդ ընելու համար, աւետարանիչը հարկ չէ տեսած պնտուած, ուռուցիկ նախադասութիւններու, ինչպէս սովոր են «մեծ» մարդոց աշխարհ գալը հաղորդող ծանուցումները:

Աշխարհ եկողը, այս պարագային, տիեզերքի տէրն է, մարդկութեան փրկիչը: Զայն աւետելու համար՝ բաւ է ըսել էակամ, որպէսզի մարդիկ գիտնան թէ դարեւ ի վեր իրենց սպասածը եկած է, լրացնելով մարգարէներու նախատեսութիւնները:

Երբ ժամանակը հասնի, շատ բաներ պիտի ըսուին ու պատմուին այդ երեխային մասին: Բայց առ այժմ ան, մարդկային բոլոր նորածիններուն նման եւ անոնցմէ այլ աւելի, կը ներկայանայ իբր տկար էակ մը, կարօտ ուրիշին: Եւ անծանօթ բոլորին: Ոչ ոք կրնայ մտքէն անցնել թէ այդ մանուկը Աստուածորդին է: Ան ուզած է ծնիլ ախոռի մը մէջ, իբր առաջին այցելուներ ունենալով հովիւներ եւ անասուններ: Աստուած զգայացունց երեւոյթներու չէ դիմած իր որդիին ծնունդը շունդալից դէպքի վերածելու համար:

Սակայն դէպքը հեռու պահելու համար առասպելական որեւէ երեւոյթէ, Ղուկաս աւետարանիչը կու տայ կարգ մը տեղեկութիւններ որոնք Քրիստոսի ծնունդը կը գետեղեն լիովին պատմական եղելութեան մը շրջագիծին մէջ: Ան կ'ըսէ թէ Հռոմայ Օգոստոս կայսրը կը հրահանգէ որ իր բոլոր հպատակները արձանագրուին իրենց բնագաւառին մէջ: Արդ, Մարիամ եւ Յովսէփ, բնակելով հանդերձ Նազարէթ բայց ըլլալով Դաւիթի ցեղէն, կը մեկնին Բեթլեհէմ ուր, ինչպէս կը նախատեսէր Եսայի մարգարէն, կը ծնի Քրիստոս, «Դաւիթի Որդին»: Զուգադիպութիւն կայսրին հրամանագրին՝ մարգարէութեան հետ: Ստուգաբար ոչ: Անգիտակցաբար եւ ակամայ, կայսրը կ'օժտնդակէ մարգարէութեան զուգադիպութեան իր արարքին հետ:

Կրնանք ուստի հաստատել թէ ի յաւիտենից ճշդուած են Քրիստոսի ծնունդին պարագաները, ժամանակը, վայրը, նոյնիսկ քաղաքական պայմանները: Ուստի կարելի չէ տրամաբանօրէն առարկել թէ այս դէպքը պատմութեան մշուշին մէջ թաղուած, առասպելային գոյներով զարդարուած, խանդավառ հետեւորդներու երեւակայութեանն էր թաւ զիցաբանութիւն է, որ երկու հազար տարիէ ի վեր կը շարունակէ օրօրել եւ պատրանքի ու ինքնախաբէութեան մէջ պահել միամիտ, դիւրահատ հետեւորդներու հոյքեր:

Աւետարանիչը չի խորհիր խորհրդապատ ու հրաշալի պարագաներով շրջապատել Քրիստոսի ծնունդը, ինչպէս կը տեսնենք դիցաբանութիւններու պարագային: Կը բաւեն մերկ ու անպաճոյճ բառեր՝ պատմելու համար անպատմելին. «Երբ Բեթլեհէմ հա-

սան, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասած ըլլալով, ծնաւ իր անդրանիկ որդին, փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրին մէջ»:

Եթէ ականատես ըլլայինք մսուրի տեսարանին, պիտի կարենայինք համոզուիլ թէ ներկայ ենք մարդկութեան մեծագոյն դէպքին, աւելի մեծ՝ քան ստեղծումը տիեզերքին, քանի որ աւելի դիւրին է որ Աստուած ոչինչէն ստեղծէ տիեզերքը քան համակերպի որ իր Որդին, Աստուած իրեն նման, իջնէ երկինքի փառքէն եւ մարդկային գոյութիւն գգենու: Եւ ի՞նչ նպատակով. փրկելու համար մարդը որ մեղանշած է՝ իր դէմ ըմբոստանալով, իրեն հաւասարելու յաւակնութեամբ:

Կ'իջնէ երկինքէն արարիչը տիեզերքի, տէրը երկինքի եւ երկրի: Եւ ո՞վ կը դիմաւորէ գինք: Ոչ ոք. ոչ կղերական կամ քաղաքական մեծամեծներ, ոչ ազգական, ոչ բարեկամ: Կ'իջնէ ամայութեան եւ բացարձակ չքաւորութեան մէջ, աւելի չքաւոր քան ամենէն չքաւորը մարդոց մէջ: Չ'արժանանար վայելուչ բնակարանի կամ պատուարանի մը իսկ, գէթ խրճիթի մը համեստ ուր պատուարուի ցուրտէն ու օտար նայուածքներէն: Կ'իջնէ քարայրի մը մէջ, ունենալով հովիւներ որպէս առաջին երկրպագուներ: Ո՞վ կրնայ երեւակայել թէ այդ տկար ու աղքատ երեխան Մեսիան է, այն՝ գոր մարգարէն հուշակած ու երգած է իբր «Աստուած հօր եւ իշխան խաղաղութեան»:

Ոչ ոք այդ գիշեր մտքէն անցուց անշուշտ թէ այդ օր մանուկ մը աշխարհ եկաւ՝ յեղաշրջելու համար մարդկութեան պատմութիւնն ու մարդոց ճակատագիրը: Ոչ իսկ անոնք՝ որ սուրբ Գրքի մասնագէտներ ըլլալով պէտք էին անդրադառնալ թէ եզակի բան մը պատահած էր, ինչպէս գիտցան եւ հեռաւոր երկիրներէն դէպի Բեթլեհէմ ճամբայ ինկան մոգերը՝ «Հրեաներու թագաւորը» մեծաբելու համար:

Ոչինչ, փոխուած է քսան դարէ ի վեր: Ամէն տարի Քրիստոսի Ծնունդը կը տօնէ մարդկութիւնը՝ առանց փնտռելու Քրիստոսը: Արտաքին երեւոյթները կը ծածկեն ու կը նսեմացնեն խորհուրդը որ իմաստ կու տայ այդ տօնին, վերածելով զայն ձեւային յիշատակութեան կամ առ առաւելն խրախճանքի առիթի:

Կ'արժէ հարց տալ մենք մեզի թէ որքանով մեր այսօրուայ տօնած ծնունդին մէջ ներկայ է Քրիստոսը: Այնքան խճողուած է աւելորդ բաներով որ կապ չունին Փրկիչին ծնունդին հետ, որ նոյնինքն Փրկիչը, եթէ զար եւ անկիւն մը փնտռէր մասնակցելու համար տօնին, օտար, անտեսուած՝ յուսախաբ պիտի մեկնէր:

Տեղը մը պահել Անոր համար, մեր տուններուն, բայց մանաւանդ մեր սրտերուն մէջ:

Եթէ կ'ուզենք իսկական Ծնունդ մը տօնել, ձերբազատենք զայն աւելորդ խճողումներէ, մաքրենք ու յարգարենք մեր սրտերը, ուր կրկին ու կրկին ծնող Աստուածորդին հիւրընկալ, մտերիմ անկիւն մը գտնէ, մեր ուրախութիւնը աւելի հարազատ, ամբողջական ու մնայուն դարձնելու համար:

Ս. ԾՆՆՌԵԱՆ ՊԱՏԳԱՄ ՀԱՅՑ. ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԿՈՂՄԷ

Ս. Ծնունդը Աստուծոյ մարդեղութեան, Անոր աշխարհ գալուստին տօնակատարութիւնն է: Աստուած՝ Յիսուս Քրիստոսով աշխարհ եկաւ մեղաւոր մարդկութիւնը փրկելու համար: Անոր աշխարհ գալը մեծագոյն նուէրն էր մարդկութեան: Բայց նուէրները անպայմանօրէն միեւնոյն կերպով չեն ընդունուիր: Այսպէս օրինակ, մարդկութեան մեծագոյն նուէր եղող Քրիստոսի աշխարհ գալու աւետար թէեւ ցնծութեամբ ողջունուեցաւ Արեւելքի իմաստուն մոգերուն կողմէ, սակայն Հրէաստանի Հերովդէս թագաւորին համար մեծ գոյժ մը նկատուեցաւ:

Իմաստուն մոգեր, գուշակած էին Յիսուսի Ծնունդը՝ Երուսաղէմ եկան Հերովդէս թագաւորին հարցնելու թէ ո՞ւր ծնած է նորածին Արքան: Ըստ իրենց ենթադրութեան, ան մայրաքաղաք Երուսաղէմ ծնած պէտք էր ըլլար: Բայց լուսափայլ աստղը գիրենք առաջնորդեց Հրէաստանի երբեմնի հօրապոյն Դաւիթ թագաւորի ծննդավայր Բեթլեհէմ աւանը:

Ի վերջոյ, յետ երկար ճամբորդութեան եւ ի գին մեծ գոհողութիւններու անոնք գտան, Նորածին Արքան եւ երկրպագելով Անոր՝ իրենց յարգանքի տուրքը ընծայեցին: Բայց կասկածամիտ Հերովդէս, որ կը վախնար թէ Բեթլեհէմի նորածին մանուկը ապագային կրնար մրցակից ըլլալ իրեն եւ լուրջ սպառնալիք մը իր գահը իր ձեռքէն խլելու: Մեծապէս վրդոված՝ Հերովդէսի համար Յիսուսի ծննդեան լուրը մեծ գոյժ կը համարուէր: Որոշապէս, Բեթլեհէմի մանկիկին ծնունդը փոթորկած էր իր ներաշխարհը: Այսպէս ուրեմն, իր ծննդեան օրէն սկսեալ Յիսուս սկսած էր փոխել մարդոց կեանքը: Մինչ Արեւելքի իմաստուն մոգե-

րուն համար «Նորածին Արքան» փնտռել եւ գտնել իրենց կարեւոր առաքելութիւնը եղած էր՝ Հերովդէս թագաւորին տիրահաշակ առաքելութիւնը եղած էր ոչնչացնել զայն: Մինչ մոգեր իրենց ընծաները կը մատուցանէին այդ հրաշալի մանուկին, Հերովդէս այդ մանուկը մեռցնելու առաջադրութեամբ՝ ջարդել կու տար Բեթլեհէմի համայն մանուկները: Բեթլեհէմի այդ չնաշխարհիկ Մանկիկը մարդոց իրավիճակը փոխած էր: Ան մինչեւ օրս միեւնոյնը կը շարունակէ ընել: Անոնք որ գինք կը փնտռեն խաղաղութիւն եւ հոգիի բաւարարութիւն կ'ունենան: Իսկ անոնք որ գինք կը մերժեն հոգիով կը վրդովին: Հերովդէս չէր գիտեր թէ Բեթլեհէմ ծնող «նորածին Արքայ»ին նպատակը գինք փոխարինելով երկրաւոր թագաւոր մը ըլլալ չէր, այլ մարդոց հոգիներուն եւ սրտերուն վրայ տիրապետող արքայ մը - արքայ մը, որ մարդոց կամաւոր հաւատարմութիւնն ու նուիրումը պիտի վայելէր: Ինչպէս անցեալին, այսօր ալ այդ է բաղձանքը Բեթլեհէմ ծնող եւ մարդկութեան Փրկիչ եղող Տէր Յիսուս Քրիստոսի:

Ս. Ծննդեան տօնը կ'ոգեկոչէ անոր հրաշափառ Ծնունդը, թող առիթ մը ըլլայ ամէնուն զԱյն ընդունելու որպէս Աստուծոյ մեծագոյն պարգեւը եւ զԱյն դարձնելու իրենց կեանքի Տէր Տէրանց եւ թագաւոր թագաւորացը: Յայնժամ բոլորովին նոր իմաստ կը ստանայ Ս. Ծննդեան մաղթանքը - «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, Ձեզի մեզի մեծ աւետիս»:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուքիկեան
Գործադիր Տնօրէն Հայ
Աւետարանական Համաշխարհային
Խորհուրդի



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԺԻՐԱՅՐ ԵՒ ՍԻՄԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՅԱՌԱՋԻԿԱՅ 365 ՕՐԵՐՈՒՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՀՄԱՐԱՆԵԱՆ

Կաղանդի ծառին առջեւ կամ Մսուրին դիմաց, մէկ վայրկեան յտնկայս լուծիւն, յարգելու համար 2009 տարուան մահացած 365 օրերու յիշատակը:

Տրամուծեամբ, սառնարանիս վրայէն հանեցի ու աղբաման նետեցի 2009 օրացոյցը եւ մեծ յոյսերով, անոր տեղ գետեղեցի նորածին 2010: Թերթատեցի անոր 12 պատկերագարդ ծալքերը, այն սկիզբէն թեամբ որ անոնք ամիսէ ամիս պիտի թաւային անվտանգ, առողջութեան յոյսերով լեցուն եւ յաջողութիւններու երազներով՝ յղի:

365 օրեր ունէր 2009 տարին: Իմ հարստութիւնս էր: Պատրաստ էի տիտղոս, ուրախութիւն, հանգիստ գոհելու ի սէր անոր պահպանումին: Այդպէս ալ եղաւ: Ու հիմա, գալիք օրացոյցը թողած, կը նստիմ քանի մը ըտպէ, ծնելիք տարուան մասին խորհրդածութիւններ կատարելու:

Յաճախ լսած ենք հետեւեալ արտայայտութիւնը. «Լա՛ւ ապրէ, որովհետեւ կեանքը կարճ է»: Գեղեցիկ մաղթանք: Սակայն կ'արժէ պահ մը անդրադառնալ կեանքի խորհուրդի, անոր կարճատեսութեան եւ մանաւանդ՝ անոր իմաստի մասին: Կեանքը, սկիզբէն մինչեւ իր աւարտիլը, ճիգ մըն է յարատեւ, ճիգ մը դարձնելու կարելին՝ իրականութիւն, վերածելու «ինչպէս որ է» դրութիւնը՝ «ինչպէս որ պէտք է ըլլայ» եղելութեան: Կեանքը փոփոխութիւն չէ միայն, այլ՝ յեղափոխութիւն. եւ «յեղ» կը նշանակէ անգամ: Ուստի, գալիք 365 օրերը յեղափոխութիւն պէտք է ենթադրեն, այսինքն, ամէն օր նորոգում, ամէն օր՝ վերածնելու կամք, ամէն օր վերսկսելու ճիգ: Կեանքին մէջ կենալ չկայ, չկայ յամենայ, սպասել, լճանալ: Կեանքին մէջ յառաջ չգացողը ետ-քայլ կ'առնէ, չփոխողը կը հիննայ, չնորո-

գուողը կը փճանայ:

Քիչ առաջ ըսի թէ՝ տրամուծեամբ բաժնուեցայ մահացած 365 օրերէս. բայց իրականութեան մէջ, անցնող տարին «երէկ» ըսուած ժամանակահատուածին կը պատկանի այլեւս, եւ առ այդ՝ պէտք չէ անով զբաղիմ, գինովնամ, եւ մտահոգութիւններու կեղրոնը դարձնեմ: Երէկը մեռաւ ու կեանքիս պատմութեան մէջ թաղուեցաւ: Իմ կեանքս այսօրն է, այս պահն է, ներկան է, հոգ չէ թէ «երէկ»ը ճնշող ըլլայ, եւ «վաղ»ը քաշողական:

Որպէսզի յառաջիկայ 365 օրերս լաւ ապրիմ, նախ՝ պէտք է ինքզինքս համոզեմ թէ տակաւին չեմ սկսած, չեմ յառաջացած, թէ ճամբայ նոր եմ ելած, որպէսզի չպարպուիմ ապրելու խանդէն: Երկրորդ՝ ինչ ալ Աստուած վերապահած է ինձի գալիք օրերուն, պիտի չյագնեմ կեանքի որեւէ յաջողութեամբ, միշտ ծարաւը պիտի ունենամ նոր թափով ապրելու: Երբեք պիտի չըսեմ. «ըրի, եղաւ, վերջացաւ, կեանքիս մէջ բան չմնաց ինձի ընելիք...»: Այս խօսքերով կախարդուիլը պիտի նշանակէ գալիք 365 օրերու կեանքս թաղել, որովհետեւ մէջս պիտի սպաննեմ ապրելու եւ գործելու ամէն դրդապատճառ:

Պիտի վերածեմ կեանքս յաջող ծրագրի մը որուն վրայ ամէն օր պիտի հսկեմ, ամէն վայրկեան, ամէն ըտպէ, ամբողջ կեղրոնացումովս եւ բոլոր սրտովս, ինչպէս զծագրիչը, որ ամէն օր բծախնդրութեամբ կը հետեւի իր արուեստի գործին:

Մեր կեանքին մէջ միւլթարականը այն է, որ կարող ենք ամէն օր արժէք տալ կեանքին: Այդ կը նշանակէ, թէ մեր կեանքը, ուր ալ եղած ըլլայ տուն թէ գործատեղի, նաւու վրայ թէ հանրաժողովի մէջ, ճաշ եփած ատեն թէ գրասեղանի դիմաց, կրնայ յաջող իրականու-

թիւն մը դառնալ որուն մէջ կ'արժէ դնել մեր ամբողջ ճիգը:

Իմ գալիք 365 օրերս սքանչելի կ'երեւակայեմ, պարզապէս որովհետեւ կ'ուզեմ որ սքանչելի ըլլան: Մեծաքանակ կեանքը չի ճանչնար հանգիստ չունի բարեկեցութիւն, չի յագնար: Որքան ալ երկար թուի, միշտ կարճատեւ է: Անոր համար պիտի չբաւարարուիմ կեանքի որեւէ յաջողութեամբ, քանի որ կեանքի մէջ բաւարարումը անձնապաշտութիւն է:

Առջեւս պիտի ունենամ 365 օրերու դրամագլուխ մը, եւ անոր վրայ ամէն օր պարտական պիտի ըլլամ վեհութեանէն բան մը աւելցնելու. եւ իրագրել պիտի դառնամ, թէ ճիգս, յոգնութիւնս, յարատեւութիւնս, դիմացս պիտի բանան առօրեայ նոր գագաթներ մագլցելիք եւ պայքարներ՝ ամէն ժամ շահուելիք:

Ինչպէս դուն, սիրելի հայ ընթերցող, ես ալ կեանքիս մէջ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ մը պիտի հետապնդեմ: Առաքելութիւնը նպատակն է որուն համար կ'ապրինք: Այդ նպատակը մենք մեզի համար որոշած ենք արդէն: Կրնայ ըլլալ իտեալ մըն է, արժէք մը, «բան» մը, անձ մը որ կեանքի չափ սիրելի է, որովհետեւ կը ներկայացնէ դրդապատճառ մը՝ կեանքը ապրուելիք դարձնող:

Նոր Տարուան առթիւ կատարելի մաղթանքներս շատ են, բայց հետեւեալ երեք կենսականները թուեմ:

Ես 64 տարեկան եմ: Իրականութեան մէջ այս տարիներու մէջ կուտակուած է բազմահարիւր տարիներու աշխատանք:


Հայ Եկեղեցին իմ մէջս ամփոփուած է 1700 տարուայ սուրբ հաւատք, 1700 տարուայ կրօնական ականդ, 1700 տարուայ սէր հանդէպ Յաւիտեանականին, Ամենակալին եւ Հայոց Աստուծոյ: Առաջին մաղթանք է ուրեմն, որ Հայ Եկեղեցին,

զոր Աստուած անսասան պահած է, շարունակէ անսասան պահել: Ոյժ ու կարողութիւն տայ անոր նաւապետին եւ անոր նաւատիրներուն: Ես 65 տարեկան եմ. այո՛, սակայն իրականութեան մէջ 4000 տարուայ Հայ Ազգիս շողախով խմորուած եմ: Իմ մորթիս ու աչքերուս գոյնը ազգիս կը պարտիմ. իմ ազգս 4000 տարիներու ազդեցութիւն թողած է իմ ֆիզիքական ու բարոյական կարողութիւններու վրայ, եւ ինձի նման, 9 միլիոն ցեղակիցներու վրայ աշխատանք տարած է:

Իմ երկրորդ մաղթանքս է որ իմ ժողովուրդս յառաջիկայ 365 օրերուն, տեսնէ լաւ օրեր. վայելէ համերաշխ ու խաղաղ օրեր: Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ հայտնութեան: Վերջապէս, մեր հայրենիքին, մեր բազմազարհար հայրենիքին կը մաղթեմ արեւշատութիւն. անոր արեւոտ օրերը շատ ըլլան: Հայրենիքը 2009 տարին ապրեցաւ անորոշութեան, սպասումի, ճակատագրական, յոյսերու եւ յոյզերու օրեր: Կը մաղթեմ որ Աստուած անոր դեկավարութեան շնորհէ իմաստութիւն ու կորով եւ անոր օրով տեսնէ աւելի բարգաւաճ վիճակ:

Կ'իմանամ թէ վանայ Մովի Ս. Խաչ եկեղեցին մէջ, մօտ օրէն պիտի սկսի հայկական աղօթք բարձրանալ: Մաղթանքս է որ Կարսի Առաքելոց Եկեղեցոյ մէջն ալ հայկական շարական երգուի: Եւ կամաց կամաց վանի՝ բարի նախանձով՝ վարակուին մեր մնացած ամայի կամ ախոռի վերածուած եկեղեցիները: Հիւսեցինք 4000 տարիներու պատմութիւն: Կը մաղթեմ որ յառաջիկայ 365 օրերուն, ազգովին շարունակենք մեր գոյութեան պատմուճանը հիւսել, առանց հանգուցներու:

Շնորհակալոր Նոր Տարի եւ Մ. Մնունդ:



Մ. Գ. Հ. Կ. ՎԵԼԻԻ «ՍԱՊԱՀ-ԳԻՒԼ»
ՄԱՍՆԱՃԻՒՂԸ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ
ԻՐ ԸՆԿԵՐ-ԸՆԿԵՐՈՒՅԻՆԵՐՈՒՆ
ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԷՆ ՄԻՆ
 ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ,
 ՄԱՂԹԵԼՈՎ ԲԱՐԳԱԻԱՃ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ,
 ԱՄԱՆՈՐԻ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ

ՄԵՐ ԲՈՒՈՐ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ
ԿԸ ՄԱՂԹԵՆՔ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

VREJ PASTRY

PASADENA
626-797-2331

GRANADA HILLS
818-366-2526

GLENDORA
626-914-1940



ՕՐԵՐՈՒ ՍԱՀԱՆՔԻՆ ՀԵՏ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ՏՕՔԹ ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Տարիներու սահանքին հետ ձեւ, տարածութիւն ու բովանդակութիւն ունեցան Համբիկ Նարեանի եւ հարազատներուն ընտանիքները: Համբիկի եղբօր, Վարանդի ամուսնութիւնը նոր, այլապէս հաճելի անակնկալ մը եղաւ, որ բերկրութեամբ յորդեցողց բոլորին սրտերը: Տակաւ կը մեծնային սողանքը, եւ ինչու՞ չէ, հասակները կ'անցնէին իրենցը: Գերդաստանը կը մեծնար:

Վահիկ առաւելաբար, առեւտրական հակումներ ունենալուն կանուխ թողուց դպրոցը եւ մտաւ քեռիներուն, Պրն. Երուանդին ու Պրն. Փարէնի ընկերովի վաճառատունը: Երբեմնի փոքր տարիքին շփացած, ներկայի գերհասակ, խիտ ու սեւ յօնքերուն տակ ջերմութիւնը բաշխող աչքերով երիտասարդը, արդէն իսկ թեւակոխած էր իր քսաներորդ գարունը: Կազմած էր իր ընկերական լայն շրջանակը, որուն յաճախակի գիշերային գօսանքները սկսեցին, ա'լ մտահոգել իր Բեռնին: Կը պատահէր, որ շատ ուշ գիշերներ, մտահոգ Բեռնին, ափ կ'առնէր Վահիկի ընկերներուն տան դռները, հարցնելու համար, թէ ու՞ր է ան, արդեօք տեսած են զինք:

Ինչ լաւն էին այն օրերը, երբ Վահիկին մետաքսեայ ձեռքէն բռնած կը շրջէր մօտակալ թաղերու մէջ, ուր իր հանդիպած մտերիմին, ծանօթին՝ հասկնալի բարեմտութեամբ կը յոխորտար ներկայացնելով Վահիկը:

Սանուկա է:
Ինչ լաւն էին այդ օրերը..., այդ ամառնային օրերը, գիւղը, Բէյֆուն կ'իջնէին՝ այգի: Կը քաղէին խաղող, թուզ ու սալոր, տանձ ու խնձոր: Վերադարձի ճամբու վրայ՝ Վահիկ կը մտնէր մորմենիներու թուփին մէջ, ծակծկելով ձեռք ու ոտք: Գլուխ գործոցը՝ կը մագլցէր ջրոտ, կարմիր թուփի ծառը..., ա'խ այդ թթենին. քիթ ու մոռթ, հագուստ ու գլուխ կը ներկուէին կարմիրով:

Ինչ լաւն էին այդ օրերը... երբ գնդակին ետեւէն կը վազէին միասին, Սաննիի գագաթին նայող Մրուժի գիւղական եկեղեցիին բակին մէջ:

- Even when we disregard all the sums looted by the oligarchs of Armenia, wouldn't those looted by Robert Kocharian and Serge Sarkisian alone have been enough to populate their native Artsakh, thus de-facto contributing to the solution of Nagorno Karabakh problem to our favor?

In conclusion we ask: having in mind the "achievements" of the past decade, at this rate where would we be at the end of the coming decade?

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայքայութեան բուժում:
Գլխացաւ, վզի, սեղքի, յոդադէն և սկոնային ցտեղի:
Բնականաբար վարքի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԳԱԼԻՓ ՏԱՐԻԱՅ ՍՊԱՍԵԼԻՓՆԵՐ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ամէն տարեփոխութեան սե- մին գնացող տարրուայ անցու- դարձն ենք քննարկում եւ մեր հայեացքը դէպի առաջ գալիքի համար ծրագրեր ենք մշակում եւ յոյսեր ենք փայտաշուծում իրակա- նացած տեսնելու մեր ցանկութիւն- ները ինչպէս օրինակ՝ հայրենա- կան, ազգային-հասարակական, ըն- տանեկան, ընկերային եւ աշխա- տանքային կեանքին առնչուող:

2009 թուականը իր բոլոր եղելութիւններով՝ հաճելի եւ անա- խորժ իրադարձութիւններով, պատմութեան գիրկն է անցնում մեզ թողնելով յուշեր՝ քաղցր ու դառն:

Ահա՛, հինը գնում է, այո՛, նա գնում է, ուրախանանք լաւով եւ ձեռք բերումներով, իսկ մոռանանք չար արարքները, գեղեցիկն ու բարեհոգութիւնը կեանքի նպա- տակակէտ դարձնելով ընդառաջ գնանք նորին ճիշտ ծրագրաւոր- ւումներով եւ կողմնորոշումներով:

Կեանքի ճակատագրական դէպ- քերը չեն մոռացում, նրանք սպում են մեր մտապատկերում եւ շարու- նակ յիշատակում են:

Անցնող տարուայ Հայաստանի քաղաքական կեանքն էր դա, որի վկան եղանք, թէ որքան կրքեր բորբոքեց եւ բոլորիս ուշադրու- թիւնը կենտրոնացրեց իր կողմը՝ կատարուած համաձայնութեան համար, որն էր իշխանութեան «Ֆուտպոլային դիւանագիտու- թեան» միջոցով թիւրքիայի հետ Զուրիխի ստորագրուած համա- ձայնագիրը ընդգրկելով՝ ցեղաս- պանութիւնը քննարկման յանձնա- խումբ կեանքի կոչել է ներկայ միջազգայնական հաստատել: Այս պատճառով Հայաստանի քաղաքա- կան իրավիճակը թէժացաւ եւ բո- դոքների ու ցոյցերի առիթ դար- ձաւ ընդդէմ հայրենի իշխանու- թեան այդ գործընթացին ըն- թացք տալու համար:

Հայաստանի նախագահն սփիւռքը տեղեկացնելու իր ծրագ- րերի մասին ճամբորդութեան ելած դէպի գաղթօջախներ նոյն- պէս հանդիպեց ցուցարարների բողոքներին: Ինչպէս համաձայնել հաստատուած եւ փաստարկուած ցեղասպանութիւնը դարձեալ քննարկման ենթարկել, այսինքն՝ կասկածանքի տակ առնել եւ երկար ձգձգումների անիմաստ խօսակ- ցութեան նիւթ դարձնել:

Զարդերին յաջորդող տարի- ների ընթացքում նիւթական եւ մարդկային անբեւեակայելի աշ- խատանք է տարւել՝ պայքարներ, գոհեր եւ նիւթական ահաբեկի ծախ- սեր, մինչեւ աշխարհով մէկ տա- րածել եւ տարբեր երկրների կող- մից ճանաչել ու պաշտօնականաց- ւել է ցեղասպանութիւնը: Էլ ինչ պատմաբանների յանձնախումբ կեանքի կոչել հարցը քննելու հա- մար, երբ բազմիցս հաստատուած ու փաստուած է:

Անհաւատալի է թւում մեզ որեւէ հայ պաշտօնաւոր սակարկու- թեան հարց դարձնի ցեղասպանու- թիւնը եւ Արցախի ազատագրուած տարածքները, հակառակ դէպքում նա կը նկատուի ազգի եւ հայրենիքի դաւաճան սերունդների անէծքը կապելով իր անուան հետ:

Ինչպէս կարելի է ազատագրու- ւած տարածքները գիշել կամ թողնել Աղբրբեջանի հողատարած- քում՝ իշխանութեան ներքոյ, էլի

հէնց նոյն վէրքն ու տառապանքը: Արցախ, որի համար դարեր շարունակ արիւն է թափել, ժողո- վուրդ է տառապել, չարչարանքի է ենթարկւել եւ հազար-հազարա- ւորներ նահատակել են:

Հայ ժողովուրդը անբեւեակա- յելի կորուստներ է տւել, 1.5 միլի- օն ցեղասպանուածներ, հսկայական հարստութիւն, ամենաթանկագի- նը՝ ծննդավայր հայրենիքն է բռնագ- րոււել:

Ինչպէս կարելի է մոռանալ այսքան արհաւիրք եւ կորուստ հայ ժողովուրդի նկատմամբ, այդուհան- դերձ հայ ժողովուրդը գիտակցում է, որ թշնամութիւնը յաւերժական չի կարող շարունակուել, կուրծքերը եւ պատերազմները ժողովուրդներ- ին իրարից հեռացնում են, թշնա- մական հրահրանքով երբեք չի կարելի բարեյոջող արդիւնքի հաս- նել, խելքով եւ ուղեղով պէտք է շարժուել, դիւանագիտական ար- ւեստի հմտութիւնները ամենալաւ միջոցն ու գէնքը նկատի ունենալ խաղաղութեան հասնելու համար:

Հայերը պատուաբեր հաշտու- թիւն են ցանկանում խաղաղու- թեան եւ փոխըմբռման բանակցու- թիւնների ճամբով, ոչ մէկ հայ դէմ չի բարի դրացիական յարաբերու- թիւնների, դա դրկից ժողո- վուրդների ցանկութիւնն է, հայ ժողովուրդը դա է ուզում իր արդար պահանջների իրականաց- ման ճամբով, որպէսզի թուրք եւ հայ կողք-կողքի խաղաղ եւ ապա- հով կեանք ապրեն:

Ահաւասիկ 2010 թւի սեմին մեր հոգուց եւ մտքից հանենք որեւէ պարտուողական հոգեբանու- թիւն եւ Արցախեան պատերազմի տարիների պէս քաջ ու անվեհեր կեանք ապրենք մարդկային ազա- տութեան վեհ գաղափարը եւ հայ- րենիքի անկախութիւնը եւ բար- գաւաճումը դարձնենք մեր կեանքի անխախտ օրէնքը:

Անյայտ եւ չղի է գալիք տա- րին: Անցնող տարին մեր հայերիս համար դժուար տարի եղաւ: Թուր- քերի եւ հայերի միջեւ փրոթոքոյլի ստորագրութեան հարցը հայ աշ- խարհը յուզեց, ալեկոծեց, քանի որ ամբողջովին ի վնաս հայերին էր մի որոշ տնտեսական յոյսեր խոս- տանալով, յոյս ունենք՝ հայոց իշխանութիւնը կանի այն, որ մեր ժողովուրդի կամքն ու ցանկու- թիւնն է՝ արդարութեան եւ իրա- ւունքի վերականգնումը:

Մյսորուայ պայմաններում մեր Ամերիկեան երկրի տնտեսական ճգնաժամը մտահոգութեան հարց է դարձել ընտանիքներում՝ աշխա- տանքի ու աշխատատեղիների նուա- գումի հետեւանքով: Այսպիսի վիճակներ երբեմն առաջանում են, պէտք է յուսահատուել: Մարդու կեանքը նման է ծովին, հեռատե- սութիւնը եւ ինայոգութիւնը լայն օրերին կարեւոր են յետագայ ճգնա- ժամերից նուազագոյն վնասով դուրս գալու համար: Այդուհան- դերձ մեր սպասելիքն է գալիք տարին իր հետ բերի նաեւ տնտե- սական բարելաւում, քանի որ մար- դու կեանքը կապուած է աշխա- տանքից, նկատելով որ՝ աշխատան- քը մայրն է բոլոր յաջողութիւննե- րի:

Քաջ գիտենք, որ հայերը աշխատասէր են, շինարար են, տար- բեր գործերում ձեռներէցութեան եւ մասնագիտութեան շնորհներ

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ահաւասիկ Ամանորը աղանակերպ մուտք է գործում իւրաքանչիւ- րիս բնակարանը: Նա խաղաղութեամբ, համեստութեամբ, արդարամ- տութեամբ, հրապուրանքով եւ խոհերով է ներս մտնում: Ամանորին յաջորդում է Յիսուսի Ս. Ծնունդը: Երկու ոգեւորութեան, վերանորոգ մտքի եւ հոգու տօներ, ընդառաջ գնանք նրանց եւ մէկու-մէկու շնորհաւորենք, քանի որ նրանք՝

- Ուրախութեան աւետաբեր են:
 - Մէկու-մէկու ոգեւորելու տօներ են:
 - Խաղաղութեան խորհրդանիշ են:
 - Մէկու-մէկու հաշտութեան տօներ են:
 - Հոգու մաքրութեան առաջնորդ են:
 - Մէկու-մէկու չարից հեռացնող տօներ են:
 - Յոյսի եւ հաւատքի երաշխիք են:
 - Մէկու-մէկու վստահելու տօներ են:
 - Հաճութեան յար միջոց են:
 - Մէկու-մէկու հաճելի լինելու տօներ են:
 - Ներողամտութեան յորդորիչ են:
 - Մէկու-մէկու ներելու տօներ են:
 - Կարեկցանքի սփոփիչ են:
 - Մէկու-մէկու օգնելու տօներ են:
 - Նուիրումի խորհուրդ են:
 - Մէկու-մէկու զոհողութեան տօներ են:
 - Պարտաւորութեանց առաջադրանք են:
 - Մէկու-մէկու խոստումը կատարող տօներ են:
 - Նոր արարութեան ներշնչանք են:
 - Մէկու-մէկու արարումով ուրախացող տօներ են:
 - Աշխատանքի մղիչ եռանդ են:
 - Մէկու-մէկու քաջալերող տօներ են:
 - Մեծարանքի գեր արժէք են:
 - Մէկու-մէկու արժեւորող տօներ են:
 - Հայրենիքն ու ազգը սիրելու տօներ են:
 - Մէկու-մէկու պատուելու տօներ են:
- Ահա այս մտորումներով շնորհաւորում ենք Ամանորը՝ 2010 թիւը եւ Ս. Ծնունդը, թող ժամանող տարին նորանոր յաջողութիւններով մեր կեանքը գուարթացնող ու ծաղկեցնող լինի:

ունեն, իրենց կարելին չեն խնա- յում գործի նկատմամբ բծախնդիր եւ սրտցաւ լինել, սփիւռքեան որեւէ երկրում էլ գտնուելիս լինեն, այս հոգեբանութիւնը պէտք է տիրա- կան լինի նաեւ մեր նոր սերնդեան մօտ: Նկատելով որ օր աւուր գիտութիւնը առաջաքայլ է ապ- րում նորանոր հնարումներով տար-

բեր բնագաւառներում, մեր փա- փազն ու խորհուրդը մեր երեխա- ներին այն է որ՝ ապագայ իմաստա- լից կեանք ունենալու համար ան- պայման բարձրագոյն ուսման եւ մասնագիտութեան հետեւեն:

Նկատելով երկրում յառաջա- Մար.ք էջ 33



ԱՄԱՆՈՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ ԿԸ ԾՆՈՐՀԱԻՈՐԵՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱՂԹԵԼՈՎ ՀԱՄԵՐԱԾԻ ՈՒ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԲԱՐԲԵՐ ՏԱՐԻ ՄԸ
ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌԻԹՆԵՐՈՎ ՄԵՐ ԼԱԻԱԳՈՅՆ
ՄԱՂԹԱՆՔՆԵՐՆ ՈՒ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՄԵՐ ԲՈԼՈՐ ՀԱՐԱԶԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

ԱՆՈՒՇԱՎԱՃԱՌ ՍԱՐԳԻՍ
Middle Eastern &
European Cakes
Delicious Pastry
For All Occasions
(Glendale, Anaheim & Pasadena)

ՃԱԿԱՏԱԳԻՐ, ՈՐԸ ՆՄԱՆ Է ԶԱԽԱԽՔԻՆ

ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Նոր տարուայ գիշերն է գալու: Երկու հազար իննը թուականի աւարտին մնացել են մի քանի օրեր, մի քանի ժամեր: Անհամբեր եմ դարձել: Ուզում եմ վարկեան առաջ տեսնել երկու հազար տասը թուականի դէմքը: Նայել նրա աչքերին: Շօշափել նրա մարմինը: Զգալ նրա ներկայութիւնը:

Ինչպէս ամէն տարի, ամէն տան մէջ, իմ տան մի անկիւնում էլ մի տօնածառ կայ: Լոյսերով բոցավառուած մի տօնածառ: Տղաներս եւ ամուսինս իմ շուրջն են բոլորում: Մի հրեշտակ աղջիկ, որ փոքր տղայիս միս ու արիւնից է ծնուած, երեք տարեկան իմ Մարինան միշտ իմ գրկում է, միշտ իմ կողքին: Նորից իմ փոքրիկին, ու մանկացայ մի պահ անջատուեցի ինձանից, աշխարհից, լաւից ու վատից ու մտքով տեղափոխուել էի մանկութեան օրերին:

Մանկութիւնս Ջաւախքում անցաւ: Զաւախք, մեր պատմական Գուգարաց աշխարհի ինը գաւառներից մէկն է: Բնակչութիւնը գրեթէ ամբողջութեամբ հայ: Զաւախքի, որի հրաշագեղ բնութիւնը ինձ միշտ ներշնչել է: Հմայել: Հոգուս վրայ ծփացել է կապտաջինջ մի լճի նման, լիճ, որի անունը Փարվանա է:

Հրաշալի մանկութիւն եմ ունեցել: Ծնողներս ինձ ոչնչից չէին գրկել: Միշտ թարմ ու իրական տօնածառ էր եղել մեր տանը նոր տարուայ օրերին: Տօնածառ, որ իր բնական բուրմունքով խենթութեան էր տարել իմ հոգին: Իմ մանկութիւնը զգեստաւորել էր գունազեղ երազներով: Իմ մանկութեան օրերը գեղեցիկ էին: Կեանքը հրապուշտ էր: Մարդիկ մաքուր ու պայծառ: Այսպէս անցան իմ մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան օրոշ տարիները: Այն ժամանակ ինձ միշտ առաջնորդում էր Տէրեանը «գերուած ենք մենք, ո՛չ ստրուկ, գերուած մի արծիւ, չարութեան դէմ վեհաբար միշտ, վատի դէմ ազնիւ»:

Յետոյ... Ամուսնացայ: Ընտանիք կազմեցի: Դարձայ երկու գաւազներ ի տէր: Հայրենիքում էի: Բայց ճակատագիրս ինձ նետեց օտար ափերի վրայ: Պանդխտացայ: Պանդխտութիւնս իր հերթին, հեռու մնացի նաեւ իմ ծնողներից, հարազատներից ու իմ ծննդավայրից: Իմ կողքին ոչ ոք չկայ, ոչ դասընկեր, ոչ մանկութեան ընկեր, ոչ էլ Զաւախքից: Նոյնիսկ չգիտեմ այս «մարդկային իրաւունքների երկրում» Զաւախքի կայ թէ չկայ: Մնացել եմ մենակ: Յոյսիս ու հաւատիս հետ եմ ապրում: Ապրում եմ Զաւախքի ճակատագրով: Ճակատագիր, որ ոչինչ անել չեմ կարող: Ուզեմ կամ ոչ, նրան պիտի ենթարկուեմ:

Մի պահ զգում եմ, որ շատ եմ հեռանում իմ առօրեայ կեանքից: Նոր տարուայ այսօրուայ խորհրդից: Տէր Աստուած անջատիր ինձ ու նորից վերադարձրու ինձ տուն:

Վերադարձայ տուն: Նայեցի տօնածառիս... եւ փորձեցի ուրախանալ: Զուրախանալ իրաւունք չունեմ: Չէ՞ որ ես նախկին մանուկը չեմ: Նախկին հեզաճկուն աղջիկը չեմ այլեւս: Ես մայր եմ: Կին եմ: Պարտաւոր եմ ինձ նուիրաբերել նրանց: Պարտաւոր եմ իմ յուշերի ընթացքը կասեցնել

ու ապրել այսօրով: Չէ՞ որ, կեանքը կարծ է եւ ունի զանազան հանգրուաններ: Ամէն մի հանգրուան բերում է իրեն հետ իրը: Իր նկարագիրն ու պահանջները:

Ես պարտաւոր եմ այսօրով ապրելու: Այսօրուայ իմ կեանքը գեղեցկացնել իմ ընտանիքով ու իմ փոքրիկով, որ նման է մանկական գրքի, որ երբ ուզեմ կը բացեմ ու կը փակեմ: Պարտականութիւններս անվերջ են: Պարտաւոր եմ հօրս, յիշել նրա օրհնանքն ու խրատները: Պարտաւոր եմ յիշել նաեւ Դեկտեմբերի 31-ը: Յայր օրհնանքդ եմ միշտ յիշում,

Խորհուրդներդ այնքան թանկ, Որոնք սրտիս մշուշում, Ինձ տուել եմ լոյս ու կեանք: Դու կարօտներս կարողայ, Որոնք բուռն եմ ու արթուն, Կեանքը կու գայ ու կ'երթայ Ինչպէս գարնան մի թռչուն: Ես քո առում քրքջան, Ես քո ծաղկած մասրենիս, Ես քո մեղուն ժրաջան, Քո արտասուող ուռնեմիս: Յայր իմ, արի այս գիշեր, Իմ հաց, իմ ջուր, իմ մշխար, Ինձ թողել եմ որբ, անտէր, Դու մեռած ես, ես անճար:

Ես պարտաւոր եմ յիշել բոլորին: Ծնորհաւորել բոլորին նոր տարին:

Վերջապէս... գալու է երկու հազար տասը թուականը: Գալու է զարմանահրաշ տեսքով: Կապոյտ աչքերով: Գեղեցիկ դէմքով: Բայց հոգին շատ խորն է ու խրթին: Նրա մէջ ուրիշ երեւոյթներ կան, որոնք ինձ ծանօթ չեն: Նրանց ես առաջին անգամ եմ հանդիպել:

Դէ, աշխարհի մարդիկ բոլորը միասին լցրէք բաժակները ու խմէք նոր Տարուայ կենացը: Ու մոռացէք հինը: Ու մոռացէք այն ինչը, որ կատարուել է հնում, բարեմաղթութիւններ արէք իրարու: Ողջագուրուէք:

Մակայն... յանկարծ մի տխրութիւն նորից եկաւ հոգուս վրայ: Հոգիս ճշալ ուզեց:

Յիշեցի... նորից սկսէի մտորել: Ինչո՞ւ իմ հայրենիքն ու ծննդավայրը հասան այսօրուայ դժբախտ ու անմխիթար վիճակին: Հայաթափուեց Հայաստանը: Լոյսից ու բարեկեցիկ պայմաններից զրկուեց Զաւախքը: Հայաստանի դեկավարութեան հոգն էլ չի, որ մարդիկ ապրում են քարանձաւային պայմաններում: Մեր տունն ու տեղը կոտորացող վէրք դարձաւ իմ հոգում: Իմ հեռաւոր հայրենակիցները հազիւ կարողանում են ուրախանալ Նոր Տարուայ առթիւ:

Նրանց մանկութիւնը վիրաւոր հաւքի պէս չի կարող թռչել: Նրանք կարօտ են ամէն ինչի: Եթէ մայր ես, եթէ իսկական հայրենասէր ես ու հայ, ինչպէ՞ս կարող ես դիմանալ նրանց գրկանքներին ու քեզ այստեղ, օտար այս ափերում երջանիկ զգալ: Դա հնարաւոր չի: Դա միայն անխիղճ, անսիրտ, եսապաշտ ու հայրենիքն ու մանկութիւններին արհամարող մարդկանց է յատուկ:

Նոր Տարուայ գիշեր է գալու... Լոս Անճելոսում ո՛չ ձիւն կայ, ո՛չ էլ գեղեցիկ ձմեռ: Տափակ ու անծայրածիր մի քաղաք, ուր

մարդիկ աւելի նիւթապաշտ են ու անհոգի: Նրանց ինչ փոյթ, թէ մեր փոքրիկ անուշահամ երեխաները, Հայաստանում-Զաւախքում կարող է նոյնիսկ տօնածառ էլ չունենան: Ուտելիք չունենան: Էլ ուր մնաց, որ ուրախանան:

Երկու հազար տաս թուական գալիք բարի: Ես հաւատում եմ իմ ոգուն իմ ազգի ոգուն, իմ Զաւախքու ոգուն, գալիք սերնդի ոգուն: Հայի ոգին ուրիշ է: Աշխարհում ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ չունի այն: Մեր ոգին մեր հաւատքն է: Մեր այսօրուայ եւ գալիք կեանքը չի արժանանալու Ս. Մովսէս Խորենացու ողբին: Այն լինելու է խաւարած լոյսի պայծառացում եւ տկարացած հոգիների ոգեղինացում:

Իմ Զաւախքիներ, ուր էլ լինէք աշխարհի որ անիւնիւմ էլ որ լինէք, մնացէք Զաւախքի հայ, ես ձեր հետ եմ: Իմ Զաւախքի հետ եմ:

Քանի որ հայ-թրքական արձանագրութիւններով Հայաստանի ներկայ իշխանութիւնը հրաժարուում է հայ դատից, մեր մէկ ու կէս միլիոն անթաղ մեռելներից, հրաշժարուած է մե գեղասպանութիւնից եւ առհամարում սփիւռքի հայերին, նշանակում է, որ այսօրուայ

իշխանաւորները անտեսում են նաեւ Զաւախքն ու Զաւախքահայութիւնը:

Իմ արծիւներ, բացէք ձեր թեւերը, մեր կրծքերով ենք պահպանելու մեր աչքի լոյսը, մեր Զաւախքը:

Շատ ցաւերի ենք դիմացել, էլի կը դիմանանք: Թող աշխարհի հայութիւնն էլ իմանայ, եթէ չլինի Զաւախքը, կը վերանայ նաեւ Հայաստան աշխարհը:

Ծնորհաւոր աշխարհում գտնուող բոլոր հայերի Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը: Ծնորհաւորում եմ իմ Զաւախքիցներին Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը եւ մի բաժակ գինիով խմում եմ ձեր կենացը Վահան Տէրեանի խօսքերով «Որպէս Փիւնիկ կրակից կ'ելնես, կ'ելնես որ, գեղեցկութեամբ ու փառքով վառ ու լուսաւոր: Կանգնիր հպարտ որպէս լոյս լեռն է մեր կանգուն, Արիացիր, սիրտ իմ, ե՛լ հաւատով տոկուն»:

Զաւախքահայ էի, ամուսնացայ պէյրուժահայ ուսանողի հետ ու նորից սփիւռքացայ, էլ աւելի սփիւռքացայ, ու էլ աւելի հայացայ:

Ճակատագիրս նման է Զաւախքի ճակատագրին:

ՏՕՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ
ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

<p>Տօնակար գիշեր Նոր օր, ամանոր, Ինչ յուշեր, յուշեր, Թողեցի այնտեղ՝ Դեռու մշուշում, Իրձեր, երազներ Մնացին կիսատ... Թերի, անաւարտ... Տօնակա՛ն գիշեր,</p>	<p>Նոր օր, ամանոր, Անցած յուշերս եմ Փորում, փորփում, Տխուր ու մոլոր, Փնտռում այս գիշեր, Անցած, գնացած Օրերս բոլոր՝ Ու նոր ամանոր, Մի նոր ամանոր...</p>
---	--



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՐՕ ԵՒ ԱՆԻ ՊԷՔԱՐԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2010

ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Շաբաթը անկուած էջ 24-էն

ու հանդէս կ'ըլլան՝ տխրութեան համար:

Պիտի փշրեմ սա հաւատքի բոյնով լեցուն սկիհր, որ աղօթքներու սուտ մրմունջներով օրեր կ'օրօրէ:

ու կը պառակտէ սուրբ ցանկութիւններ...

կը փետտէ անխիղճ մաքուր կարօտներ

Ձիւնի պէս ներմակ գառանցող իղձեր...

- Ու այսքան փոքր փառքի մը մէջ, ինչպէս կը բաւեն

ինչպէս կը շնչեն երկու այլ փառքի: (էջ 40)

Պ. Սիմոնեանի քերթողութեան մէջ յաճախ կը հանդիպինք բառակապակցութեամբ ստեղծուած թելադրիչ պատկերներու, - «Թշուառութեան մացառներ», «հաւատքի թոյնով լեցուն սկիհր», «պառակտող սուրբ ցանկութիւն» կամ «գառանցող իղձեր», որոնց գործածութիւնը, քերթուածին գեղարուեստական ընկալումին մէջ նոր էջ կը բանայ:

Ուրեմն, կը վերադառնանք քերթուածին, մեզի վերապահելով դանդաղ վերընթերցումն անոր, յամենալով բառապատկերներու ներքին բովանդակութեան վրայ: Արդ, մէջբերուած սա տողերուն ընթերցումի լոյսին տակ, չէ՞ք նկատեր հոգեկցութիւնը Լ. Վարդան-Պ. Սիմոնեան գոյգին մենախօսութեան եւ գայրոյթին, ուղղուած նոյն հասցեատիրոջ՝ «Աստուած-ձակատագրապաշտութիւն» անունին ներքեւ: Հոս եւս, ուրեմն Մարդ-Աստուած երկխօսութիւնը կը շարունակուի, կարկինի մը՝ յարաբերաբար աւելի նեղ շրջագիծէ մը ներս: Անունք որ Աստուծոյ մէջ ուզեր էին ողջունել գոյառումը «աստուածային անհատականութեան» ու դարերով սներ ու սնուցեր էին իրենց հերթին, այն հաւատքը՝ որ Ամենակարողը կը դարձնէր պատասխանատու աշխարհային բազմատեսակ արարքներու... միայն անոնք որ արձանագրելէ ետք իրենց անդառնալի գայրոյթն ու յուսախաբութիւնը, իրենց պոթկումին մէջ ջանացին վար առնել իրենց «ոգեղէն կուռք»ը իր պատուանդանէն ու վերադարձան իրենց սեփական ներաշխարհին: Նոյն երեւոյթը չպարզուեցա՞ւ, երբ 1988 Դեկտեմբեր 8ին հայրենաքանդ երկրաշարժի աղէտը խորհրդահայ բանաստեղծներուն առիթ ընծայեց որ ցարդ իրենց ժխտած աստուածութենէն հաշիւ պահանջեն... Թացիկ զգացականութեամբ մը համակուած:

Քիչ առաջ, ակնարկեցի ընդհանուր այն գիծերուն, երբ մեր քերթողներուն հոգեվիճակը, կը ներկայանար մեզի ցաւի ու ցասումի համանուն գոյներով, վրձինի նոյն շարժումներով: Արդարեւ, այսքան փոքր քաղաքի մը մէջ (Պէյրութ) ինչպէս կը շնչեն երկու այլ քաղաքներ, «ուր ջուրի տեղ կը խոխոջէ արիւնն անվերջ» պիտի աւելցնէր Յ. Գեղարդ, իսկ մարդիկ այնտեղ «գիրար (կը) յօշոտէին, ջարդէին ու (կը) դառնային արնախում ու վայրագ գէլ ու գագան» պիտի ամբողջացնէր պատկերը Լ. Վարդան, եւ այս՝ այն քաղաքին մէջ, ուր «ժամանեցին մեզ առուք չարչարանաց» ու «վայրագ գէլ ու գագան դարձած մարդիկ» քաղաքը պիտի վերածէին «մեղաւորաց եւ պղծոց, մարդասպանաց եւ պոռնկաց» վայրի

մը (Գ. Պըլտեան): Տագնապը բանաստեղծին՝ կը կրծէ սիրտը բոլոր համաքաղաքացիներուն, կը ճանկոտէ անոնց բարեկոյս երազները, կու գայ վարդաշրելու անոնց տառապանքը:

Նոյն այս տառապանքին արձագանգը կը գտնենք նաեւ Պ. Սիմոնեանի «Ես՝ հացակարօտ եւ լուսակարօտ առեւանգուած տղան» խորագրեալ քերթուածին մէջ, որ պատմութիւնն է տառապահար պատանիի մը, «...Մըջիւնի մը չափ անկարեւոր ենք եղեր, եղեռնալուր Պէյրութի մէջ...» (էջ 47) հացի եւ լոյսի համար իր թաքստոցէն դուրս գալ փորձող եւ մարդորսներու անարգ եւ անմարդկային արարքները վկայակոչող.

... «Անցայ հոգետրոփ կամուրջէն մահու, որ ամայացած մարդորսներու անտառ էր կարծես...»

իմամէ վրիպած գնդակը մահու փոստ էր գետին հացերը. ու սիրագործով...

ինչ գիտնամ, գուցէ հայր մը անձնագոհ...» (էջ 48)

Ու սարսափահար պատանին կը թակարդուի առեւանգիչներու վտճմակին ցանցին մէջ, մահասարսուռ վայր մը, ուր պատանին, դեռ կենդանի՝ կ'ապրի մահուան մղձաւանջը...

«Այնքան հիմա կը փոքրեն ահա... գլուխս մարմնէս կ'անջատուի իսկոյն...»

ձեռքերս կարծես իմս չեն այլիս... ու յուսապատար ոտներովս ալ կը մտածեմ ես...» (էջ 48)

Ահաւասիկ, այս միջոցորտին մէջ է որ 1975ի Դեկտեմբերին, լիբանանցի պիտի ողջունէր խաղաղութեան Իշխանին Մննդեան տօնը: «Եւ երկիր խաղաղութիւն 25 Դեկտեմբեր» խորագրեալ քերթուածին մէջ, բանաստեղծը դառնորէն կ'ողբայ խաղաղութեան խոստումը: Ինչպէս կարելի է ապրիլ Պէյրութի մէջ եւ տօնածառ հէքեաթին հետ չպատմել կաղանդ չունեցող, պատերազմին որբացած տղոց մասին: Այլեւս ինչո՞ւ դողանջէին Մննդեան տօնի գանգերը, երբ տակաւին ուժգնօրէն կը գոռային թնդանօթներ, իսկ հարթիչ գլաններ՝ «կը մաքրագործէին» ամբողջ աւան մը՝ իր թիթեղածածկ հիւղակներէն, տնակներէն ու մարդկային իր խլեակներէն:

«... Ինչ գիտնամ, գուցէ մեր մեղքիմ համար...»

... Ու կը պատուիրեմ, մարեցե՛ք այլեւս կեղծ խորաններէն կեղծիչ լուցկիով վառուած մոմերը...

ու հաւատքի նոր խորան կանգնեցե՛ք...

Ու կը պատուիրեմ, թող չհնչեն ալ, գանգակները ձեր վերակրկնելու, - որո՞ւ համար դեռ-

«Եւ երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»: (էջ 50)

Մարդկային կեանքին ամենէն բնորոշիչ յատկութիւնը, մարդ անհատին վրայ ունեցած մեր վստահութիւնն է, հաւատքը, զոր շահիլ պէտք է գիտնանք, ապա՝ պահել ու պահպանել մեր փոխ-յարաբերութիւններու ծիրէն ներս: Այս հաւատքը պէտք է խախտի, այլապէս՝ կը ստեղծուի խոշոր դատարկութիւն մը մեր հոգիներուն մէջ: Բանաստեղծին հաւատքը՝ միջ-քաղաքացիական ընդհարում-

ներուն, բախումներուն ու պատերազմին ընթացք տուող «մարդ»ներուն հանդէպ, ... խախտեր է: Ալ չի հաւատար անոնց պատարագին եւ աղօթքին, քանի որ անոնց քահանաներուն «սկիհներէն (ալ), մահուան նշխարը» կը բաշխուի ու «բուրվառներէն՝ (ալ), խունկերու տեղ, մահաշշուկներ կը բարձրանան վեր...»:

Պահելու համար Պէյպօ Սիմոնեանին գրական ստեղծագործութիւններուն ժամանակագրութիւնը այժմ ընթերցողին կը ներկայացնեն «Ծառին ձիւնը» քերթուածներու հատորը, լոյս տեսած 1991ի Յունուարի առաջին օրերուն: Գիրք մը՝ որ մեծ մասով կը պատասխարէ բանաստեղծին ճիշդ՝ գուգահեռ «Ծառի ձիւն»ին:

Սփիւռքահայու տագնապները, բազմախորհուրդ ու բազմածալ, կը շարունակուի քողագերծուիլ բանաստեղծին ներաշխարհին մէջ: Իւրաքանչիւր քերթուած վկայութիւնն է սփիւռքացած հայուն տառապանքին՝ միաձուլ՝ լիբանանեան ողբերգութեան հետ: Նոյն մենախօսութիւնն է որ կը շարունակուի իրմէ ներս, սկսած՝ «Կանաչներու Առապել»էն, «Ծուկն, Ծուկն Երիզներ»էն, «Մայրիներու Արմատներ»էն (վերջին երկուքը՝ արձակ) մինչեւ «Ծառին ձիւն»:

Թուականներու ստորագրութիւնը՝ 1980ի շրջանը կը վերակենդանացնէ մեր յիշողութեան մէջ: «Կեանքիս անցած տարիները հինգ» խորագրեալ քերթուածին մէջ, բանաստեղծը, դեռ անգիտակ գալիք տասնամեակի տակաւ անպատմելի չարիքներուն, կ'ափսոսայ թէ՛ ինչպէս...

«Բայց նզմուեցան, ինչքան ծաղիկներ...»

նազմակառքներու մահաշուր անցե՛ն...

կ'իմացան համակ ծառերն անբեր...

վախերու հովիտ...

Խոտերը դողող հողին տակ անցան

ի սպառ թաղուեցան...

Ու հողը դարձաւ անձէս մահաբեմ...» (էջ 23)

Կ'ընդգծեմ ու կը չակերտեմ «անծէս մահաբեմ» հողը ողջակիզող Լիբանանին, իբրեւ պատկեր՝ շարունակուելու կոչուած մեր հաւաքական յիշողութեանը մէջ այն սերունդին՝ որ մնաց իր հողին վրայ, անցնող երեք հնգամեակներու ընթացքին:

Բանաստեղծը ոչինչ կ'ափսոսայ՝ որ կրնար պատկանիլ մեր նիւթական կորստուններուն, այլ միայն՝ մեր «միակ գանձը անփոխարինելի» մեր «մարդ զգալու հարստութիւնը»: Կայ կորուստը... «Լեզուակը խղճին» այն տմարդ մարդերուն, որոնք Միջերկրականի այս խաղաղ փոխներս վերածեցին սանդաղամէտի:

«Պատերազմ է դեռ... ու խաղաղութիւն է պէտք» քերթուածը՝ ստորագրուած 1979ին, այն օրագիրն է, զոր կը կարդանք կամ կրնայինք կարդացած ըլլալ անցնող ամբողջ տասնամեակին, գրուած որեւէ ականատես-վկայի մը կողմէ: Օր մը, երբ կանգ առնէ պատերազմը, լուռ թէ՛ հահագնաղդորդ, ապագայ ուսանողը պատմութեան, այս էջերուն մէջ պիտի գտնէ ոչ թէ՛ տոմարակալական հաշուարկումները կորուստին, այլ՝ այն անվերադարձ եւ անկանգնելի Աւերակը, որ պատկերուած է լիբանանահայ գրողներու երկերուն մէջ: Երկարատեւ, աւելի քան 15ամեայ Աւագ Ուրբաթն է այս ժողովուրդի մը ամբողջ, շարարանքին ու թաղման անդադրում շաբաթներով հանգուցուած: Ու բանաստեղծը անգուսպ գայրոյթով կ'եղբերեզէ, կ'իմաստասիրէ կեանքի ու մահուան գոյգ խորհուրդները՝ պա-

Շաբ.բ էջ 23



ՇՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԷՈՐԳ ԵՒ ՄԱՐԱԼ ԹԱԻՈՒՔՅԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2010

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Շարունակում էք 24-էն

տերազմին առօրեային թելադրեալ, իրագործումովը գեղարուեստական ստեղծագործ պահերու: Իսկ այստեղ՝ Պէպօ Սիմոնեանին մօտ «Աւագ Ուրբաթս... կամ երկրիս շաբաթը լոռ շարչարնքի» քերթուածին մէջ կը կարդանք՝ «Իմ Աւագ Ուրբաթս, պահս երկունքի սկսաւ ցաւով Մայրիի Ծանիմ... հառաչանքներով իր սաղարթներում անյոյս ճիչերով իր արմատներում...» (էջ 55)

ասկէ խորագիրը սոյն հատորին («Ծառին ձիւղ») որ ձեւով մը, շարունակութիւնն է ան իր մենախօսութիւն-աղօթքին գորս սկսեր էր «Մայրիներու Արմատները» արձակ բանաստեղծութեանց հատորին մէջ: Պէտք է աւարտենք ընթերցումն այս ազատ տաղաչափեալ կտորին, ուր բանաստեղծը թուղթին է յանձնէր շատրուանումը իր անվախճան ցաւին ու ցասումին: Արդարեւ, մեր ներքին երկինքին մէջ պահեր կան, երբ թուրապ ամպեր կը կուտակուին ճակատագիրովը արագ անցումին, ապրումներ՝ շրջանակուած անկրկնելի պահերով գորս հարկ է յաւերժացնել... նոյնիսկ, այդ փորձը եթէ մեզի չէ վերապահած երջանիկ դողը «այն հովին» որ աւարտուն պտի դարձնէր երկնուող քերթուածը եւ առաջնորդէր փորձութեանը մատուցումի նուազ խստապահանջ իրագործումին:

... «Մարդը խաչելու ժամանակ չկայ... Բայց ոչնչութեան խաչերուն վրայ մարդը կը խաչուի ամէն պահ անոք... Ու ինչքան լաւ է ու նախընտրելի որ մարդը միայն, Գրիստոսին պէս մէկ անգամ խաչուի...» (էջ 58)

Մինչդեռ, լիբանանեան ողբերգութեան ամբողջ ժամանակահատուածին, Մարդը խաչուեցաւ ամէն օր, իր յոյսերն ու անաւարտ իղձերը մահացան ամէն օր... եւ՝ «ինչքան լաւ է ու նախընտրելի որ մարդը միայն մէկ անգամ քաղուի որպէսզի գայ մէկ անգամ միայն հրաշքն իրաւ յարութեան...» (էջ 58)

Կը վերադառնամ բանաստեղծին ալեկոծեալ ներաշխարհին, իր ներկայ հատորով ի լոյս աշխարհ բերած մարդկային հոգիին խուզարկումի աշխատանքին եւ իր եզրայանգումին: «Ծառին ձիւղ» համանուն քերթուածը, եւ որուն ընթերցումով կ'աւարտենք Պ. Սիմոնեանին այս մատենան որ կ'ամբողջացնէ հեղինակին գրական գիւմանկարը՝ մարդ ու քաղաքացի բանաստեղծին: Մտովի՝ կը վերարտադրեմ բովանդակութիւնն ու պատկերը Մ. Զարիֆեանի ԾԱՌԻՆ ու վերընթերցումով ներկայ հատորը եզրափակող այս բանաստեղծութեան գուգահեռաբար կը վերլուծէր սփիւռքահայու մեր տառապանքէն ծնած ու զարգացած մեր հոգեվիճակ-ճակատագիրը: Եթէ տասնամեակներու անջրպետ մը պարփակող այս գոյգ քերթուածները, պէտք է կարդալ իրենց պատմական խորհուրդին ընդմէջէն: Եթէ Զարիֆեանին մօտ անկացնահար եղած արեւմտահայութիւնն էր եւ անկէ ծլարձակուող Սփիւռքը... այստեղ՝ Պ. Սիմոնեանին մօտ, կը հանդիսանայ... «Տրամն Սփիւռքին» հայոց դաշտերուն ու կտուրներուն վրայ տեղացած սեւցած կամ կարմրած ձիւնէն» սկսող... որ՝ «... օտարացումի ու տարաշխարհի ակերն ցիրուցան որ կորստական ախոր էր դաժան...»

ու մնայուն, մշտական հարցումը՝ որ կ'ուղղուի «- Ինք դեռ միևնչեւ ե՞րբ զալարուի, տանջուի ամենատխուր տարանջատումէն իր արմատներուն...»: «ամէն տեղ մօտ ու հեռու որ տրամն հայու Սփիւռքին շարունակուելով շատագունելով գոհեր կը խլէ... Տարագիր ամէն մարդ իր երկրէն դուրս՝ պատարագ անձայն...»: (էջ 178-181): Կընդգծեմ դարձեալ ու կը չակերտեմ վերջին տողը մէջբերումին՝ գուգահեռաբար այն տողին («ու հողը դարձաւ անծէս մահաբեմ») ցուցանշելու համար բանաստեղծին գեղարուեստական մտահոգութիւնը, համահունչ՝ իր ներքին պարուծներուն ու քերթուածին յղացքին: Ծառին ձիւղ... երբ «տարագիր ամէն մարդ իր երկրէն դուրս՝ պատարագ (է) անձայն»: Լիբանանեան տաղնապին արձագանգը Պ. Սիմոնեանին գրական ստեղծագործութեան մէջ, անցնող այս արձագանգը 15-ամեակին, եղաւ յարաճուն այն խոռքը որ սկսած էր «Կանաչներու Առասպելը» հատորէն՝ զարգացաւ եւ ամբողջացաւ «Մայրիներու Արմատները» արձակ քերթուածներու հատորով եւ իր եզրայանգումը գտաւ «Ծառին ձիւղ» քերթողագիրքով: Իրմէ ներս կ'ողջունենք յղացքի ու մատուցումի խորքն ու ձեւը ներդաշնակող հայ գրականութեան նուիրեալը:

ԴԻՄՈՒՄ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ (ՀԱՏՈՒԱԾ) ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ


Արի՛, Նոր Տարի, Գալուստղբարի, Եւ արթնացրու քո թնդուն քայլերով Ուշ մնացածին, Քնով տարուածին. Տո՛ւր ապաքինում հոգով ցաւածին, Հիասթափուածին՝ նոր մի հիացում, Սիրաթափուածին՝ մի նոր միացում. Ձեռքից հաւատքը փախուստ տուածին, Իբրեւ Նոր Տարուայ բաղձալի նուէր, Տուր նոր հաւատի կապակուութեւր Մանկանը՝ մեծի մտքի լիացում, Մեծին՝ մանուկի անարատութիւն, Տ ա փ ա թ ա կ ն ե թ ի ն՝ Արարատութիւն, Իսկ Երկրագունդին՝ մի առատութիւն, Որ նրա վրայ քաղցը այսուհետ

Չունենայ ոչ մի կայսրութիւն ու գահ, Ու Սարսափն իրեն թագակիր զգալ. Որ ազատութիւնն իր բռն գունեղ շապիկը ճեղքած Տրուի ճախարանքի, Ու Մարդն ազատուի իր հին գերութեան նոր յաճախանքից, Ու Մարդն այսուհետ ոչ մի տեղ երբեք չգունաւորուի Եւ որ այլեւ ոչ մի ժողովուրդ, Ոչ մի ազգ ու ցեղ Պատմութեան քափից ու սեւ մրուրից չթունաւորուի, Դառնայ լիազօր, դառնայ լիիրաւ, - Ու մենք վերջապէ՛ս, հասկանանք իրար, Ամէնքս, բա՛ւ է, հասկանանք իրար: Նաեւ հասկանանք, Որ մեր իսկ արեան գնդիկը մանրը Այս երկիր կոչուած գնդիկից աւելի մեծ է ու ծանր...

ՆՈՐ ՏԱՐԻ ԱՒԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Նոր օր է գալիս, Նոր կեանք մեզ տալիս, Բերք, բարիք բերում, Առողջ կեանք բաշխում... Անուշ մանուկներ, Նա ձեզ է փնտռում, Սիրում է սրտանց, Յոյսեր ներշնչում... Ձիւն, անձրեւ բերում, Կեանք տալիս հողին

Ու պարարտ հողը Մեզ բերք նուիրում... Ողջո՛յն, Նոր տարի, Բեր մեր աշխարհին Օով խաղաղութիւն, Մէր, եղբայրութիւն... Մայր Հայաստանին Միշտ ամուր պահիր, Որ եռագոյնը Յաւերժ ծածանի...



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՅՈՎԻԿ ԵՒ ԱՐՄԻՆԷ ԼԱԶԻՆԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՔԱՐՏԵՐ ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ՎԱՂԱՐՏԱԿԵԱՆ

Կեանքի պայմաններն մեզ ստիպում են, Մոռանալ իրար, երբեք չը յիշել, Բայց նոյն կեանքի մէջ կայ մի ուրիշ բան. Որ մօտեցնում է մոռացուած սրտեր: Այդ տօներն են Սուրբ ծնունդն Յիսուսի Որի միջոցով մոռացուած սրտեր,


Շատ հեռուններից գալիս, մօտեցնում. Այնքան մօտեցնում ու գրուցում են: Եւ այդ գրոյցով յիշում են անցեալ. Որ երբեք-երբեք նա չի մոռացում, Փոխադարձ քարտեր, փոխադարձ յուշեր, Որ կրկնում են տարին մէկ անգամ.

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳ

**ՋԵՐՄԱՊԷՍ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ
«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆՋՆԱԿԱԶՄԸ,
ԻՆՋՊԷՍ ՆԱԵՒ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ,
ՄԱՂԹԵԼՈՎ ՈՐ 2010-Ը ԸԼԼԱՅ**

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ՅԱԳԵՑԱԾ ՏԱՐԻ ՄԸ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ

ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐՈՎ, ՀՈՒՓՍԻՄԷՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ



ԱՄԱՆՈՐ

Հնում տարբեր ժողովուրդներ նոր տարին տարբեր ժամանակ են նշել: Օրինակ, եգիպտացիների նոր տարին այսօրուայ տոմարով Օգոստոսի 29ին էր, պարսիկներինը՝ Մարտի 21ին, չինացիներինը՝ Փետրուարի 6ին, Հռոմէացիներինը Մարտի 1ին եւ այլն:

Հին հայերի նոր տարին Նաւասարդի մէկն էր, որը համապատասխանում է այսօրուայ տոմարի Օգոստոսի 11ին: Մեր նախնիները նոր տարուն ԱՄԱՆՈՐ են ասել: Ամանորը կազմուած է հայերէն ԱՄ (տարի) եւ ՆՈՐ բառերից: Ամանորն այնպիսի կարեւորութիւն ունէր մեզանում, որ նրան նուիրուած է եղել յատուկ աստուածութիւն: Ըստ մ.թ. չորրորդ դարի մեր պատմիչ Ագաթանգեղոսի հաւաստի վկայութեան, «Ամանորի ամենաբեր նոր պտուղների աստուածը հիւրընկալ վանաստուղն էր»՝ այգեգործութեան, պողաբերութեան ու բերքի հովանաւորը:

Վանաստուրը բնիկ հայերէն բառ է. նշանակում է՝ օթեւան տուղ, հիւրընկալ: Նրա գլխաւոր մեհեանը գտնուում էր Բագրեւանդ գաւառի Նպաստ լեռան ստորոտին կառուցուած Բագաւան քաղաքում, որը կոչուում էր նաեւ Դիցաւան, այսինքն՝ աստուածների աւան:

Վանաստուրի՝ հիւրընկալութեան աստուած լինելու մասին ուղղակի վկայութիւն ունի նաեւ քերթողահայր Մովսէս Խորենացին: Նա իր «Պատմութիւն Հայոց» աշխատութեան երկրորդ գլխի ԿԶ հատուածում գրում է. «Հայոց թագաւոր Տիրգրան վերջինը պատուել էր իր եղբօր՝ Մաթան քրմապետի գերեզմանը Բագաւանում, Բագրեւանդ գաւառում, գերեզմանի վրայ բազին շինելով, որպէսզի այդտեղի գոհերից վայելան բոլոր անցորդները եւ հիւրեր ընդունուեն գիշերելու համար»: Որոշակի անձի կողմից հիւրանոց կառուցելու մասին քերթողահայր այս տեղեկութիւնը համաշխարհային պատմագիտութեան հնագոյն փաստերից է:

Հայ մատենագրութեան մէջ եղած տեղեկութիւններից իմանում ենք նաեւ, որ վանաստուրը միաժամանակ հայոց գերագոյն աստուած Արամագղի մականունն էր:

Վանաստուրին եւ Ամանորին նուիրուած ամենամեայ բերքի տօնը սկսուել է Նաւասարդի մէկին՝ Ամանորին, եւ շարունակուել մինչեւ Նաւասարդի վեցը: Այդ տօները կոչուում էին «Նաւասարդեան տօներ», որոնց բնոյթին կը ծանօթանանք յաջորդ գրոցի մէջ:

Նաւասարդի մէկին հայոց թագաւորի գլխաւորութեամբ վանաստուրի տաճարի սրբավայրում ամէն տարի գումարուում էին նախարարների, բարձրաստիճան քրմերի, ազատների, գուղական աւագների ու շինականների աւանդական «աշխարհաժողովները»: Այս աշխարհաժողովների մասին հնագոյն յիշատակութիւնը գտնում ենք մ. թ. առաջին դարի հրեայ պատմիչ Յովսէպոս Փլաբիոսի աշխատութիւններում:

Պատմագիտական աղբիւրներից յայտնի է, որ աշխարհաժողովը համահայկական հաւաք էր, որտեղ քննարկուում էին պետական ու ազգային կարեւոր հարցեր, ընդունուում էին օրէնքներ ու կանոններ: Պատահական չէ, որ «աշխարհաժողովները» գումարուում էին վանաստուրի սրբավայրում: Հրաւիրեալները հիւրեր էին, ուստի նրանց ժողովատեղին ընտրուած էր հենց վանաստուրի տաճարում, որտեղ այդ

առիթով կատարուում էին տօնախմբութիւններ եւ զանազան թատերական ներկայացումներ:

Քրիստոնէական շրջանում աշխարհաժողովները մեծ մասամբ գումարուում էին հայոց թագաւորների բնակատեղերում՝ Շահապիվանում եւ Վաղարշապատում:

Գիտնականները պարզել են, որ վանաստուրն ու Ամանորը առանձին աստուած չէին: Ղ. Ալիշանի կարծիքով, վանաստուրն ու Ամանորը լատինացիների այգեգործութեան հովանաւոր վարտուածներն էւ Պոմոնա ամուսին աստուածների նման նոյնպէս ամուսիններ էին:

Ըստ պատմագիտական ու ազգագրական բազմաթիւ տուեալների, վանաստուրի եւ Ամանորի պաշտամունքի հետքերը ժողովրդի մէջ գոյատեւել են մինչեւ մեր դարի սկիզբները: Օրինակ՝ ազգագրագէտ Վարդ Բղոյեանի կարծիքով, վանաստուրի եւ Ամանորի պաշտամունքի ծիսական տարրերը պահպանուել են Նուրին-Պուրպատիկների ու «երկաթէ մարդ» կոչուող տիկնիկատիպ էակների մէջ: Հայկական ժողովրդական երգերում իգական նուրինների գգեստը նկարագուել է «շալէշապիկ, կարմիր գօտիկ» խօսքերով, իսկ արական նուրիններինը՝ «շալէ (բրդեայ) շապիկ, կեմէ (խոտից հիւտուած) գօտիկ» բառերով: Նուրիններն ու պուրպատիկները փաստօրէն հենց վանաստուր եւ Ամանոր ամուսին - աստուածութիւնների ձեւափոխուած անուններն են, որ ժողովուրդը պահել էր մինչեւ մեր դարի կէսերը: Նուրինները ցախաւելից սարքած խրտուիլական էին կամ մեծ չափի տիկնիկներ: Գիւղացի կանայք յաճախ ընտրում էին մի առջնակ, մարդ կործնում գլխին, սպիտակ ասնում ոտքից գլուխ ծածկում էին՝ նրան դարձնելով կենդանի նուրին: Կանանց թափօրը նուրիններին առաջներն առած, իսկ ցախաւելից պատրաստած լինելու դէպքում՝ ցախաւել-նուրիններին ձեռքերով գլխներին վեր պարզած, գիւղացիների դուներից անցնելով, մթերքներ եւ շարագեղէն էին հաւաքում: Իսկ երաշտի ժամանակ, նուրինները ձեռներին, զանազան ծիսական աղօթքներ ու երգեր ասելով թմբուկ խփում, աստուծոց անձրեւ էին խնդրում:

Մենք արդէն գիտենք, որ հնում տարբեր ժողովուրդներ ամանորը տարբեր ժամանակ էին տօնում: Այսինքն՝ միասնական նոր տարի չի եղել: Դա այդպէս էլ պիտի լինէր, որովհետեւ հին աշխարհի պետութիւնների միջեւ առեւտրա-տնտեսական, մշակութային ու գիտական կապերն այսօրուայ համեմատ շատ աւելի թոյլ են եղել: Ամէն մի ժողովուրդ պարփակուած էր իր կենցաղի, սովորոյթների ու հաւատալիքների մէջ: Ուստի, նայած երկրի աշխարհագրական դիրքին, հաւատալիքներին ու ապրելակերպին, նոր տարին տարբեր ժամանակ է տօնուել: Ամանորը առաջին անգամ Յունուարի 1ից սկսել են հռոմէացիները՝ Յուլիոս Կեսարի օրօք՝ մ. թ. ա. 46 թուին, (գիտնականների մեծ մասի կարծիքով, հռոմէացիք նոր տարին Յունուարի մէկից են սկսել աւել վաղ՝ մ. թ. ա. է. դարում՝ Նումա Պոմպիլիոս կայսեր հրամանով): Յուլիոս Կեսարի հրամանով կազմուած այդ նոր տոմարը նրա անունով էլ կոչուում է Յուլեան տոմար, եւ աշխարհի շատ ժողովուրդների ծառայել է մինչեւ 18-19րդ դարերը: Պատմական որոշ տեղեկութիւններ գիտնականներին թոյլ են տուել են-

թաղելու, որ հայերը Յուլեան տոմարին ծանօթ էին դեռեւս Յուլիոս Կեսարի ժամանակներից: Իսկ աւելի հաւաստի տուեալներով, հայերը սահմանափակ ձեւով (արքունիքում եւ քրմերի շրջանում) Յուլեան տոմարը պաշտօնապէս ընդունել են մ. թ. 122 թ.: Բայց Քրիստոնէական Հայաստանը Յուլեան տոմարին անցնելու մասին պաշտօնական որոշում կայացրեց միայն 1317 թ., Ատանայի եկեղեցական ժողովում: Սակայն այդ տոմարը շատ նեղ շրջանակներում է գործածուել, իսկ գործածուելիս էլ՝ անպայման հայոց տոմարի գուգադրութեամբ:

Յուլեան տոմարի տարին ունէր ոչ թէ 365 օր 5 ժամ, 48 րոպէ 46 վայրկեան, այլ 365 օր, 6 ժամ: Այսինքն՝ ճշգրիտ հաշուումներով որոշուած տարուց 11 րոպէ 14 վայրկեանով երկար էր: Անճշտութիւնը վերացնելու նպատակով Հռոմի Գրիգոր 13րդ պապը (ԺԶ. դար) Եւրոպայի նշանաւոր տոմարագէտներին հրաւիրում է Հռոմ, որպէսզի մշակեն նոր տոմար: Բազմաթիւ նախագծերից ընդունուում է իտալացի բժիշկ եւ աստղագէտ Ալիս Լիլիոյի նախագիծը, որը սկսուում է կիրառուել 1582 թ. Հոկտեմբերի 15ից: Քանի որ Յուլեան տոմարի 11 րոպէ 14 վայրկեանի սխալը մ.թ.ա. 46 թ. մինչեւ 1582 թիւը կուտակուել դարձել էր 10 օր, այսինքն՝ ժամանակը 10 օր ետ էր ընկել, ուստի սխալը ուղղելու համար որոշուեց 1582 թ. Հոկտեմբերի 4ից յետոյ ոչ թէ Հոկտեմբերի 5 ընդունել, այլ՝ Հոկտեմբերի 15:

Այսպէս սկսուեց նոր տոմարը, որը Հռոմի Գրիգոր պապի անունով



կոչուեց «Գրիգորեան»: Հայերը աշխարհի առաջին ժողովուրդներից էին, որ թէեւ խիստ սահմանափակ, բայց գործածեցին Գրիգորեան տոմարը: Հայ իրականութեան մէջ նոր տոմարի առաջինը իտալահայերն անցան (1584 թ.), ապա՝ Ամստերդամի (ԺԷ. դար) հայոց գաղթավայրի կաթողիկոսները, յետագայում՝ պոլահայ կաթողիկոսները, իսկ 1783 թուականից՝ նաեւ լեհահայերը:

Գրիգորեան տոմարը, մօտ 340 տարուայ ընթացքում, ընդունեցին աշխարհի գրեթէ բոլոր ժողովուրդները: Վերջինն ընդունեց Եգիպտոսը (1928 թ.), իսկ Ռուսաստանը նոր տոմարին անցաւ 1918 թ. Յունուարի 1ին: Քանի որ 1582 թ. մինչեւ 1918 թ., այսինքն՝ 336 տարում վերոյիշեալ նոր տոմարը հնից երկար էր ոչ թէ 10, այլ 13 օրով: Այստեղից է հին տոմարի 13 օրուայ տարբերութիւնը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՎԱՐԴԱՆ ԵՒ ԾՈՎԻԿ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ

ՄԱՍԻՍ - 2010

ԿԱՂԱՆԴԸ՝ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Հայ Երուսաղէմը տարբեր է իր ամանորեան եւ Ս. Ծննդեան տօնակատարութիւններով: Սակայն ի՞նչ կայ տարբեր... մանաւանդ երբ աշխարհ տօնած ու վերջացուցած կ'ըլլայ արդէն Նոր Տարին եւ Ս. Ծնունդը:

Յետոյ, չէ՞ որ նոյն Նոր Տարին է որ կը դիմաւորենք, նոյն Քրիստոսի Ս. Ծնունդը կը տօնակատարենք, նոյն երգերը, շարականներն ու աղօթքները կ'երգենք, նոյն ջրօրհնէքի արարողութիւնը կը կատարենք ամենուրեք:

Երուսաղէմ: Այո... տարբեր, տարբեր համար ունին սաղիմական տօները, իրենց հոգեւորոգ ու հոգեւոր քաղցրութեամբ մը լեցուն, տարբեր միւս բոլոր ամանորեան եւ Ծննդեան տօներէն:

Ու այս «մեծ կրօն»ներու փոքրիկ քաղաքին մէջ, ուր դարաւոր պատմութիւն մը կայ կերտուած Հայ Մշակոյթի, Հայ Եկեղեցու, Հայ Մտքի, Հայ Աւանդութեանց... ամանորի արեւը իր ճերմակ ճառագայթները Սիրոն լեռան վրայ կը փռէ Յունուարի 14-ին, ըստ հին տոմարի:

Թէպէտ նոյն քաղաքին մէջ ապրող, սակայն, Երուսաղէմի Հայոց Թաղի ամանորեան տօնախմբութիւնը տարբեր էր վանքի կամ քաղաքէն դուրս ապրող հայերու տնօրինութիւններէն:

Հայոց Թաղի բնակիչները՝ որոնք աւելի ծանօթ են որպէս «քաղաքացի»ներ անունով, դարեւ շարունակ ապրած ըլլալով այս Սուրբ Քաղաքին մէջ, պահած են իրենց տոհմիկ եւ իւրաքանչիւր հայկական սովորութիւնները:

Հայոց Թաղը որ ունի իր սեփական ակումբը, ծանօթ է որպէս Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութիւն:

Հայոց Թաղի բնակիչները առհասարակ բարեկեցիկ կեանք մը ունէին:

Միութեան վարչական անդամներէն ոմանք պաշտօնեայ ըլլալով միջազգային բարեսիրական կազմակերպութիւններու, ամանորի առթիւ յատուկ երկու ծրարներ կը բաշխէին Հայոց Թաղի իւրաքանչիւր մանուկի, առանց չարանուանական կամ գաղափարախօսական խտրութեանց:

Յունուար 13-ի երեկոյեան, Թաղի բնակիչները կը հաւաքուէին Բարեսիրաց ակումբը, ու անհամբեր կը սպասէին Կաղանդ Պապայի ժամանումին, որ քանի մը անգամ կը յայտարարուէր որ կու գար հեռու՝ հիւսիսային բեւեռէն, իր

հետ բերելով հարիւրաւոր ծրարներ փոքրիկներուն համար:

«Պալիա» կոչուած նուէրները հագուստեղէններ էին ամերիկայէն ուղարկուած, որ ըստ բախտի կը տրուէր իւրաքանչիւր մանուկի: Այս «պօղչա»ներուն հետ կը տրուէր նաեւ դեղին ծրար մը, որուն մէջ կ'ըլլայ գրեթե անկասկածաբար, սանտր, ակոսայի դեղ ու վրձին, օճառ եւ փոքրերու սիրած՝ ամերիկեան շոքոլան:

Այս ամանորի ուրախ գիշերուան առաջին արարն էր:

Թաղի հայ կանայք, օրեր առաջ կը պատրաստէին տեսակ տեսակ հայկական եւ արաբական քաղցրեղէններ:

Ընկալեալ սովորութիւն էր որ իւրաքանչիւր տուն ունենար գեղեցկօրէն զարդարուած ճոխ սեղան մը, որուն կեդրոնը գետեղուած կ'ըլլար, ամանորեան անուշապուրը, ու շուրջը աղանդեր, քաղցրեղէններ, պտուղներ, խմիչք եւ մանաւանդ՝ չիր ու չամիչ:

Երեկոյեան՝ նախքան Կաղանդ պապայի պտոյտը հայոց Թաղերուն մէջ, ամէն ոք տունէ տուն, շնորհաւորական այցի կ'երթար հարեւանին կամ բարեկամին ու համտեսելով ամանորեան սեղանի ուտելիքներէն, կը շտապէր դիմաւորելու Կաղանդ Պապային, որ երեկոյեան ակումբի վարչական խորհրդանշանէն ետք, ճամբայ կ'ելլէր հայոց Թաղերու աւանդական պտոյտին:

Կաղանդ Պապան՝ մէկ ձեռքին լապտեր ու միւսին երկար գաւազան մը, մեծ բազմութեամբ կ'անցնէր հայոց Թաղերէն:

Երիտասարդութիւնը ամանորեան եւ ժողովրդական երգերով ու նուագով կը մասնակցէր այս տարեկան թափօրին: Պատանի աղջիկ ու տղաք պար բռնած եւ տօնական ցնծութեամբ հրավառութիւններով կը դիմաւորէին հայոց ամանորը:

Մերթ ընդ մերթ խուռներամ այս թափօրը կանգ կ'առնէր հայ մեծատունի մը տան առջեւ, ու ներս հիւրասիրուելով ամանորը կարծես կը ժպտէր իւրաքանչիւր անձի, ուր ուրախութիւնը նոր թափ կը ստանար, ի տես բացուած ճոխ սեղաններու: Ի գուր չէր որ երիտասարդութիւնը յայնժամ կ'երգէր «Սեղանն է առատ, դիմացն Արարատ...» ու լեցնելով բաժակները, կենացներ կը խմէին, հայրենի հողին, խաղողին, հայրենի աշխարհէն հեռու... սակայն հայրենիքի կարօտը իրենց սիրտերուն մէջ, տարագիր հայութիւնն է այս, որ ուրախ ու զուարթ հայերէն երգեր կը հնչեցնէր օտար երկիրքի տակ, օտար մշակոյթի ու սովորութիւն-

ՆՈՐ ՏԱՐԻՆ

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

Մի՛ խաբուիր, միշտ նոյն հին տարին է եկածը, ա՛յն, որ դարերէ ի վեր կը տեւէ անայլաչլ եւ անփոփոխ:

Այն հին տարին, որուն մէջ ծնանք ու ապրեցանք ամէնքս ու ամենէ առաջ ալ նախորդ սերունդները:

Այն տարին, ուր կը թեւակոխենք, կրնաք ապահով ըլլալ թէ որեւէ տարբերութիւն պիտի չունենայ այն տարիէն, որմէ, իբր թէ, վերջնականապէս հեռացած ենք:

Նոր մեծ ձուկերը պիտի շարունակենք պատիկները կու տալ. նորէն տկարները յանուն Արդարութեան, Ազատութեան եւ Հաւասարութեան ոտնակոխ պիտի ըլլան. նորէն գեղեցիկ սկզբունքները տեղի պիտի տան նիւթապաշտ նկատումներու առջեւ:

Եւ աշխարհ պիտի շարունակէ քալել այնպէս, ինչպէս լարուած է դարերէ ի վեր:

Մարդիկ, եսամուր, հեշտասէր ու նիւթապաշտ, պիտի ճառեն այլասիրութեան, առաքինութիւններու, աննիւթական բարձրութիւններու մասին ու պիտի ջանան ամէն միջոցներով փառքի ու հարստութեան տիրանալ չազուրդ տալու իրենց ցանկութիւններուն:

Խաղաղութիւնը հաստատելու համար պատերազմները պիտի շարունակուին ու մարդկութեան, քաղաքակրթութեան, իրաւունքի յաղթանակին համար միլիոնաւորներ ջարդ ու փշուր պիտի ըլլան, շէն քաղաքներ աւերակներու պիտի վերածուին, ամբողջ ժողովուրդներ անօթութեան ճիրաններուն մէջ պիտի գալարուին:

Երկու հազար տարիներէ ի վեր, յորմէ հետ մարդկութիւնը քաղաքակրթութեան շաւիղներուն մէջ մտաւ, տարի չէ փոխուած:

«Սատանան կ'իշխէ այս աշխարհին», ըսած է Առաքեալը, չարիքին գերիշեան տիրապետութիւնը ցոյց տալու համար:

Եւ Հռովմայեցի կայսեր մը խօսքը մինչեւ այսօր ճշմարտութիւն մը կը մնայ.

- Կշտացուր բանակը, մնացածին խէրը անիծէ՛:

Ու այս բանաձեւն է, որ զանազան կերպերով կը գործադրուի մինչեւ այսօր:

Մի՛ խաբուիր, նոր տարին չեկաւ տակաւին: Պիտի գայ, անշուշտ, օր մը, ճշմարիտ նոր տարին, բայց ե՞րբ...

«Ճակատամարտ», 14-Ա.-1922

ներու ակամայ իր դարաւոր ենթարկուածութեամբ, թէկուզ քաղաքացիական հմայիչ եւ իւրաքանչիւր հնչիւններով:

Թէպէտ ժողովրդական այս տօնախմբութիւնը կ'աւարտէր առաւօտեան կանուխ ժամերուն, սաղմահայութիւնը յաջորդող օրերուն կը պատրաստուէր աւելի մեծ տօնախմբութեան, Քրիստոսի Սուրբ Ծնունդը յիշատակելու, Բեթղեհէ-

մի Սուրբ Ծննդեան Տաճարին մէջ, շուրջ միօրեայ յատուկ արարողութիւններով եւ երեք Սուրբ Պատարագի կատարողութեամբ:

Այսօր, թէպէտ նօսրացած է Հայութեան թիւը Սուրբ Քաղաքին մէջ, սակայն հայ ժողովուրդը կը պահէ դարերէն եկած աւանդութիւններն ու սովորութիւնները, կրօնական թէ ժողովրդական՝ միշտ համաձայն հին տոմարի:



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՍԱՀԱԿ ԵՒ ԼԻՒՍԻ ԹՈՒԹՅԵԱՆ

ԱՄՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՂԵՐ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Արի, քեզ հետ բեր սեր ու հաշտութիւն, Ու հանգիստ քայլի խաղաղ աշխարհում, Տոպրակներով բեր խաղալիք ու սեր Ու ջերմ համբոյրներ որբերի համար...

Արի, միշտ արի, դու անգօրի հայր՝ Ու անգիմ մայրը ամբողջ աշխարհի, Եւ նրանց սիրով խնդրի Աստուծոն Գուք դնի սրտին, կրակ վառողի...

Արի, քեզ հետ բեր խրատներ բար, Լցրու նենգ ոգում չարագործների, Կրակ չը վառեն չորս կողմն աշխարհի Արի, այս դաժան կրակը մարի...

Արի, դու արի խաղաղ նոր տարի, Յէզ բանաստեղծիս իղձը կատարիր, Կրկին քեզ հետ բեր խաղալիք ու սեր Ամբողջ աշխարհի սրտերը վառիր...

ՄԱՍԻՍ - 2010

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒՆԵՐԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Նոր Տարուան բացառիկին աշխատակցութիւնն ապահովելու համար «Արարատ»ի խմբագրութենէն ստացուած կարճ հրաւիրագիր մը երկար խորհրդածութիւններու մէջ միտքը կը պատճառահանդիսացաւ: Խորհրդածութիւններ եւ յուշեր, որոնք իմանալի մը ետ տարին զիս: Հայրս՝ Վահան Նազարեան, լիբանանահայ առաջին դպրոցին՝ Նուպարեան վարժարանէն հիմնադիրներէն մէկն էր, վեթերան հնչակեան մը, որ զիս տարաւ այդ օրերու «Արարատ»ի խմբագիր Ասատուր Էլճանեանին ներկայացնելու: Այդ տեսակցութիւնը յանգեցաւ համաձայնութեան մը՝ ստանձնելու համար օգնական խմբագրի պաշտօնը, որ թէեւ կարճ ժամանակ մը տեւեց, սակայն ես հրապարակագրական առաջին քայլերս «Արարատ»ի մէջ առած եղայ:

Տարին 1945-ն էր, համաշխարհային Բ. պատերազմը նոր աւարտած՝ անգլիական բանակը տակաւին Լիբանան կը գտնուէր՝ գործի լայն ասպարէզ բանալով անգլերէն գիտցողներու առջեւ: Սուրիան ու Լիբանանը իբրեւ ֆրանսական գաղութներ, անգլերէնը լայն տարածում չունէր այդ տարիներուն: Հասկանալիօրէն «Արարատ»ի համեստ թողարկի բազմապատիկ վճարումով ստանձնեցի անգլիական բանակատեղիի մը շուրջ 500 գործաւորներու վերակազմի պաշտօնը՝ անգլիացի սպայի մը իբրեւ օգնական եւ թարգման:

Կեանքիս յետագայ հոլովոյթը այնպէս դասաւորուեցաւ որ ես եղայ ռամկավար, միշտ ալ ջերմ համակրանք պահելով Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան հանդէպ: Բացի գաղափարական տեսական տարբերութենէ մը՝ մէկը սոցիալիստական իսկ միւս ռամկավարական սկզբունքով՝ այս երկուքին ազգային հիմնական քաղաքականութիւնը նոյնն էր գործնական գետնի վրայ, հայրենիքի եւ էջմիածնայ Մայր եկեղեցւոյն նկատմամբ: Խաբը կը վերաբերի Խորհրդային Հայաստանին, որուն 1920 Նոյեմբեր 29ին հիմնուած գրեթէ տարի մը ետք, 1921 Հոկտեմբեր 21ին հիմնուեցաւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնը, տարբերելով Ս. Դ. Հնչակեան Կուսակցութենէն Ռ.Ա. Կուսակցութեան Խորհրդային Հայաստանի հանդէպ համակիր կեցուածքը, գաղափարական խորք չունէր, այլ հիմնուած էր բնական ու գործնական այն համոզման վրայ որ Խորհրդային Հայաստանը հայութեան միակ կարելի հայրենիքն էր, որուն հանդէպ սէրն ու հաւատարմութիւնը պէտք է կախեալ ըլլան վարչաձեւէն: Հնչակեան եւ Ռամկավար կուսակցութեան հասարակաց այդ կեցուածքը կը հիմնուի այն իրապաշտ համոզման վրայ, որ վարչաձեւերը գնացուն են եւ հայրենիքն է մնացուն: Իսկ Հ.Յ. Դաշնակցութիւնը Խորհրդային Հա-

յաստանին հակադրուողն էր, իր այդ քաղաքականութեան պատճառաբանութիւնը գտնելով Խորհրդային Միութիւնով գլխաւորուած Արեւելքի եւ Մ.Նահանգներու գլխաւորած Արեւմուտքի հակամարտութեան մէջ, որ իր ժամանակին ազգավնաս բախումներու կողքին արգելք եղաւ նաեւ ներկայացած առիթներէն հայնապատ օգուտ քաղելուն:

Այսօր հիմնովին տարբեր է պատկերը: 1991ին Սովիէթ Միութեան քայքայումով անկախ դարձած Հայաստանը կը մնայ դարձեալ կարելի միակ հայրենիքը հայութեան, սակայն ոչ ցանկալի իշխանութեան մը ներքեւ, որ համահայկական համակրանք ու թիկունք չի վայելեր: Ուրեմն, չի հասնիր նաեւ այն բարձունքին եւ հզօրութեան, որ կրնար ունենալ համահայկական գործակցութեամբ: Հայաստանի անժողովրդական իշխանութիւնը փոխելու համար Հնչակեան, Ռամկավար եւ անկուսակցական մեծամասնութեան վրայ ներկայիս Հ. Յ. Դաշնակցութեան ալ յաւելումով շարժումը ստացած է համազգային բնոյթ՝ հակազդելու եւ չէզոքացնելու համար նախագահ Սարգսեանի Հայաստանի ճակատագիրը մթազնոյ նախաձեռնութիւնները, որոնց վախճանը եղաւ Զուլիգերիոյ մէջ Հոկտեմբեր 10ին ստորագրուած համաձայնագիրը արձանագրութիւններ անուան տակ:

Մեր պատմութեան մէջ հազուադէպ է որ ազգային հիմնական երեք կուսակցութիւնները այսքան համանման մտածեն Հայրենիքի անբաղձալի ներկայիս եւ աւելի մտահոգիչ ապագային մասին: Հետեւաբար, անոնց դեկավար մարմինները թանկարժէք այս պահը օգտագործելով հասնելու են անկեղծ եւ անշահախնդիր համագործակցութեան՝ դրապէս օգնելու համար հայրենի իշխանափոխութեան իրականացման:

Կը մաղթենք որ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ մեծցող դժգոհութիւններն ու բողոքները, որոնց մէկ մասին ականտես եղաւ Սերժ Սարգսեան, ճիշդ եւ անհրաժեշտ եզրակացութեան մղեն հայրենի իշխանութիւնները՝ վայրկեան առաջ հրաժարելով տեղ տալու համար ազգային փրկութեան կառավարութեան մը, նախքան ընդհանուր եւ արիւնալի յեղափոխութեամբ մը իրագործելու համար զայն:

Բաց շա՞տ է, կամ անիրապաշտ է այդքան զոհողութիւն ակնկալել իշխանաւորներէ, որոնք իրենց պաշտօնը ստանձնած պահուն երդում կատարած պէտք է ըլլան ամէն զոհողութեամբ պաշտպանելու հայրենիքի շահերն ու ապահովութիւնը: Եւ այդ զոհողութեան վերջին սահմանը հասած ենք արդէն:

Նոր Տարուան առթիւ ասկէ աւելի մեծ ու թանկագին նուէր չի կրնար ըլլալ հայ ժողովուրդին:

ԽՈՂՅԵՐ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Բոլորս ալ կը դիմաւորենք դժուարին պայմաններ, երբեմն յանձնուելով եւ մոռնալով մեր ներքին ուժը եւ կորովը:

Որքան դիւրին է յուսահատիլ եւ ընկճուիլ: Բարեբախտաբար մարդ արարածը ընդհանրապէս տոկացող է եւ յարմարող: Եւ հոս կը կայանայ անոր ուժը եւ իմաստութիւնը:

Կեանքի մէջ սորվելու տենչը եւ յարատեւելու կամքը մեր օրերը կը դարձնեն յարաճուն՝ համբերութեամբ, հաւատքով եւ սպասումներով լի: Կեանքի բոլոր պայքարները պարտականութիւններու կը նմանին որոնք մեզ կը կերտեն առաւել կարողականութեամբ եւ հաստատականութեամբ:

Մարդ արարածը հրաշալի էակ մըն է եւ անոր էութիւնն ալ հրաշքի համագոր: Ամենէն դժուարին պայմաններու տակ ան զիտէ պայքարիլ՝ պահելով իր հոգին եւ ոգեւորութիւնը: Ան կրնայ ամէն բան կորսնցնել, բայց կ'ապրի այդ բոլորը պատմելու, այն հաւատքով եւ համոզումով որ կեանքը կորուստ չէ, ոչ ալ յուսալքում:

Հաւատարիմ մնալով իր սկզբունքներուն եւ կառչելով իր համոզումներուն «Մարդ»ը այն արարածն է որ ժայռեր կրնայ ձեռքի դրապէս կ'ոգեւորեն եւ անոր հետեւ հորիզոնը կը դառնայ մօտակայ յաղթանակ:

Կեանքը եւ անոր գաղտնիքները կը պատկանին այն մարդուն որ զիտէ իր դժբախտութիւնները օգտաշատ առիթներու վերածել եւ իր վնասները՝ շահերու:

Սիրով եւ յարատեւութեամբ անկարելին կը դառնայ կարելի եւ «Մարդ»ը կը շարունակէ պայքարիլ եւ բարգաւաճիլ:

ԿԻԿԻՆ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Այս ուղիւն
ալ երբէք պիտի չանցնիս
դուն կրկին,
պիտի յամենայ
հրճուանքս անկրկնելի,
արձագանգը երեկի
պիտի մնայ
պատգամն ու շունչը սրտագին,
պիտի մնաս դուն
խաղաղ,
նորոգ,
ազատ...
Պիտի մնաս՝
ժպտալու, սիրելու,
ապրելու կեանք մը դարձեալ,
վերապրելու
անկորցելի
այս պահը կրկին...:

ԱՄԱՆՈՐ ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ՎԱՂԱՐՇԱԿԵԱՆ

Կ'ուզէի լինել
Քայլող եղելունի.
Ձարդարէիմ ինձ
Խաղալիքներով
Ու քաղցրեղէնով,
Եւ յուշիկ-յուշիկ
Ձգո՞յ՛ք քայլերով,
Ստնէի խրճիթները մութ
Ուր սպասում էիմ
Մանուկներն անմեղ
Թէ ի՞նչ կը բերի
Ամանորը մեզ:
Իմ մտնելուն պէս
Ժպիտ տեսնէի
Նրանց աչքերում
Թէկուզ մի վարկեան:



**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ԳԱԲՐԻԷԼ ԵՒ
ՄԱՐԻԱ ՄՈՂՈՅԵԱՆ**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ - 2010

ԱՄԱՆՈՐԵԱՆ ՎԱԼՍԸ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԵԱՆ

Դեկտեմբեր 31ի երեկոյ: Ընդամենը մի քանի ժամ էր մնացել, որ հին տարին, անցած գնացած դառն ու անոյշ յուշերի տոպրակը շալակն առած, գնար ու իր տեղը տար Նոր տարուն:

Գեղանի Նինան, նոր տարին դիմաւորելու համար օրեր ամբողջ զբաղուել էր տօնական պատրաստութիւն տեսնելով: Իր փոքրիկ ու տաքուկ տունը զարդարել էր ամանորեան զարդարանքով եւ կանաչ ու կարմիր լապտերներով լուսաւորուած տօնածառով:

Ընթրիքի սեղանը պատրաստ էր: Հնչում էր ռոմանտիկ երաժշտութիւն: Կարմիր գինին փրփրալով լցուեց երկու բաժակներին մէջ՝ պատրաստ վեր բարձրացնելու՝ ամանորեան մաղթանքներ չղելու իրար:

Վերջապէս, պատին կախուած ժամացույցի զանգակը դին-դան, դին-դանով ազդարարեց նոր տարուայ գալուստը:

Պահը խորհրդաւոր էր: Երկուսով կանգնեցին դէմ-դիմաց եւ գինու բաժակները զարկելով ու իրար շրթունքներից համբոյր քաղելով, Ամանոր շնորհաւորեցին:

Ժամերն արագընթաց սահում էին: Շատ քիչ ժամանակ էր մնացել տղայի մեկնելուն: Նա ժամանակաւոր գնում էր արտասահման, որպէսզի վերադառնար գալիք Ամանորին ու ընդմիջտ իր կողքին մնար:

Նրանք, փակուած իրենց տաքուկ ու փոքրիկ աշխարհում, արեւած սիրոյ քաղցրութեամբ ու գինու բուրմունքով, քաղցր յուշեր չիչեցնող երաժշտութեան ներքոյ պարում էին: Պարեցին մինչեւ լուսաբաց...

Վրայ հասաւ հրաժեշտի յուզիչ պահը: «Մնաք բարով» խօսքեր չասուեցին: Բայց առջկայ մով աչքերի հայելում, նրա ներաշխարհում թաքնուած, չասուած խօսքերի արտացոլում էր: Նրանք իրար զրկած կանգնել էին լուռ ու անխօս, եւ հայեացքներն իրար յառած խօսում էին առանց խօսքի: Յետոյ, գլուխ-գլխի տուած ու ձեռք-ձեռքի բռնած՝ համրաքայլ մօտեցան դրանը:

Նա գնաց...

Ժամանակը կանգ չէր առնում: Բայց աղջկայ համար՝ ամէն մէկ օրը՝ ամիս ու ամէն մէկ ամիսը՝ տարի էր թւում:

«Շուտով վրայ կը հասնի Ամանորը: Նոր տարուայ հետ, ըստ տուած խոստումին, կը գայ նաեւ նա», - մտորում էր աղջիկը:

Ժամկէտն իր աւարտին էր հասնում: Ո՛չ մի նամակ, ո՛չ մի հեռախօս եւ ո՛չ մի պատգամ: «Գալու օրեր են, էլ ինչ նամակ ու պատգամ», - տարակուսանքով մտածում էր աղջիկը:

Կրկին վրայ հասաւ Դեկտեմբեր 31ը: Նա իր փոքրիկ տնակում, մի աշխարհ սպասումով, կարմիր վարդերով ու վառ մոմերով զարդարուած՝ ամանորեայ ընթրիքի սեղան պատրաստեց:

Ժամացույցի սլաքը մօտենում էր 12ին: Նստել էր բազմոցին եւ աչքերը յառած ժամացույցին, սպասումի դանդաղ սահող բոպէներն էր հաշուում: Յանկարծ, նստած տեղից բարձրացաւ ու սկսեց ինքն իրեն

խօսել. «Ահա նա հիմա կը գայ, դուռը կը թակի ու ներ կը մտնի: Վեր կենամ, երաժշտութիւնը միացնեմ: Ախր բաժակներն իրար զարկելով ամանորը պիտի ողջունենք: Եւ... իրար զրկած պարենք, մինչեւ լոյս պարենք եւ մէկ տարուայ կարօտն առնենք»:

Դին-դան, դին-դան, ժամացույցի զանգակն Ամանորի մուտքն ազդարարեց:

Նա չեկաւ...

Երկրորդ Ամանոր, երրորդ Ամանոր եւ քանի-քանի ամանորներ եկան ու անցան ու նա չեկաւ...

Նա չեկաւ... Բայց աղջիկն սպասում էր եւ ամէն Դեկտեմբեր 31ը գիշերը ամանորեան ընթրիքի սեղան պատրաստում, նրա սիրած երաժշտութիւնը միացնում եւ աչքերը ժամացույցին յառած՝ սպասում...

Երբ ժամացույցը Նոր տարուայ գալուստն էր աւետում, նա տեղից վեր էր կենում եւ դողդոջ ձեռքերով գինու բաժակներն իրար զարկելով, ինչ որ խօսքեր մըմնջում...

Ամանորներն իրար ետեւից սահեցին ու անցան: Սահելու հետ մէկտեղ, նրա ողջ էութիւնը համակուեց մի անանց վախի անտարբերութեամբ: Եւ ամէն անգամ հայելուն նայելով, իր խամրած աչքերը, թորշոմած դէմքը ձիւնաթոյր մագերը եւ կորացած ուսերն այն նուէրներն էին, որոնց ստացել էր անցած-գնացած ամանորներին:

Կրկին անգամ նա կանգնեց Ամանորի սեմին:

Երէկուա 20-ամեայ եւ այսօրուայ 70-ամեայ աղջիկն, ըստ երկար տարիների սովորութեան, պատրաստել էր ամանորեայ ընթրիքի սեղանը:

Նրա առաջադրութիւնը կենդրոնացել էր պատի ժամացույցին: Եւ ահա՛... ժամացույցի զանգակը ուրախ ու զուարթ գրնգոցով, Ամանորի գալն աւետեց:

Նրա սիրած գոյնի հագուստը հագած աղջիկը մագերը յարդարել էր նրա սիրած ձեռով, ձախ ձեռքի մատանու մատը զարդարել էր նրա տուած մատանիով: Հանդարտ մօտեցաւ ընթրիքի սեղանին, նախ մոմը վառեց, ապա բաժակները լցրեց կարմիր գինիով, յետոյ միացրեց երաժշտութիւնը:

Տօնածառի մանրիկ լապտերները, միմից սփռուող աղօտ լոյսը եւ Շարաուսի՝ մագնիտոֆոնից լսուող դուրեկան ու ռոմանտիկ վալսը սենեակի մթնոլորտը դարձրել էին խորհրդաւոր ու դուրեկան, բայց...

Աղջիկը գինու բաժակները դողդոջ ձեռքերով եզր բարձրացրեց, մօտեցրեց շրթունքներին, եւ ինչ-որ անհասկանալի բառեր շնչալով, զարկեց իրար ու ըմպեց մինչեւ վերջին կաթիլները...

Գինին ըմպելուց յետոյ մօտեցաւ մագնիտոֆոնին, լսուող երաժշտութեան ձայնի ծաւալը չափից աւելի բարձրացրեց ու սկսեց պարել... Պարելով գնաց հասաւ հեռուները, ու նրա բազուկներին մէջ շարունակեց պարել եւ պարեց մինչեւ լոյս...

Լոյսը բացուելուն՝ ինքն էր ու ինքը...

Եւ... եւ դանդաղ վերջին վալսն էր...

ԱՄԱՆՈՐԻ ԳԻՇԵՐ ՆԵՐՍԷՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Նորից Նոր Տարի, Կաղանդի գիշեր, Բայց մէկը չեկաւ Որ դուռը բացեր, Նստեր սեղանին Ու պատառ կիսեր, Բարի խօսք ասեր... Էլ ի՞նչ Նոր Տարի, Էլ ի՞նչ Ամանոր, Երբ թողել ենք մեր Բունը կիսաւեր,

Ու դառել կռուկ, Անտուն, բնաւեր... Էլ ի՞նչ Նոր Տարի ու Կաղանդ գիշեր, Զգիտես որի՞ն, Եւ կամ ո՞ւմ յիշել, Երբ չկան արդէն Ընկեր տղերքը, Աւաղ, լռել է Կենսուրախ երգը... Էլ ի՞նչ Նոր Տարի

ՄԵԾ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆՈՒԷԻ ՊՈՅԱՄԵԱՆ

Վերջին գանգերն են դողանջում ուժգին Եւ աւետում են վերջը այս տարուայ, Երանի նրան, ով այս տարին Անցկացրեց ուրախ եւ էլ անփորձանք:

Եկող Եւ թող ոչ մէկի լոյսը չմարի, Թող բերի իր հետ սէր, երջանկութիւն Մեծ խաղաղութիւն համայն մարդկութեան:

Անցած տարին դարձաւ մեծ երազ Երազ, որ երբէք էլ ետ չի գալու, Փոխարէնը՝ տարաւ իրեն հետ Մեծ պատրանքների մի ամբողջութիւն:

Եւ թող աշխարհի մայրերը բոլոր Միշտ ժպտան ուրախ, բարի ժպտով, Ու մանուկները, ժիր ու կենսուրախ Մեծանան անհոգ եւ ուրախ կենանքով:

ԺԱՄԱՆԱԿԸ ԳԱԼՈՒՍՏ ԽԱՆԵՆՑ

Տինկ-տանկ, տինկ-տանկ, Ժամանակը չի կանգնելու... Ցերեկները յաջորդում են գիշերներին, Եւ յաճախ էլ գիշերները մնում, Ու չեն անցնում...:

Հասնենք կայարանին, Հասնենք պայծառ իմացութեան, Մեր շուրջ լինի միշտ լուսավառ, Կեանքի ճամբին ու սրտից սիրտ Ծիածանը կապի կամար: Տինկ տանկ, տինկ տանկ, Ժամանակը կարճ ու թանկ...:

Ժամանակը մեզ վիճակուած, Կարճ է ու թանկ, Շարժուենք, շարժուենք, որ չուշանանք,



ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ՍԱՀԱՐԱ ՃԱՇԱՐԱՆԻ ՏԷՐԵՐ ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ

ՄԱՍԻՍ - 2010

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԴԱԳԱՂԸ ԵՐԿՅԱՐԿԱՆԻ ՉԷ ԵՂԱԾ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ (Շարունակում Երևանի քիւնէն)

Ահա և սալիկ Չօպանեանի նամակին այս բաժինը։

«Ասիկա (Կոմիտաս Վարդապետին մարմնին Հայաստան փոխադրութիւնը) ամենամեծ հաճոյք պիտի պատճառէ արտասահմանի հայոց: Այստեղ մեր եկեղեցւոյն մէջ թաղման հանդիսաւոր արարողութիւնը կատարուեցան արդէն անցեալ տարի, անկից ի վեր, մարմինը՝ գմբուսած՝ եկեղեցւոյն նկուղին մէջ կը հանգչէր, կան դեռ՝ իր վերջնական հանգստավայրը գետեղուելէ առաջ՝ հուսկ աղօթքներ, որ պէտք է առնուին: Այսօր գրեցի ընկեր Արսէն Եսայեանին այդ մասին, խնդրեցի, որ կառավարութիւնը թոյլ տայ, որ դադարը էջմիածնի կայարանը վարելոցուի (չոգեկառքէն), եւ Մայր Աթոռի միաբանութիւնը հոն պատուիրակութիւն մը զրկելով կատարէ այնտեղ հարկ եղած արարողութիւնը եւ կամ դադարը փոխադրուի էջմիածին, Մայր տաճարին մէջ կատարուի արարողութիւն եւ յետոյ ինքն իսկ տանի դադարը յանձնել կառավարութեան»: (Հայաստանի ազգային արխիւ, ֆոնտ 409, ցուցակ 1, գործ 5495):

Աղասի Խանճեան ստեղծուած այս ծանր կացութիւնը լուծելու համար, վարդապետին աճիւնին Երեւան թաղման ամբողջական պատասխանատուութիւնը կը յանձնէ «Հայաստանի Խորհրդային Երգահանների Միութիւն»ին:

Խանջեան, որ ինչպէս տեսանք, մեծ ճիգ թափեց այս գործին յաջողութեանը համար, դժբախտաբար, ինք չկարողացաւ ներկայ ըլլալ անոր, որովհետեւ յանկարծ ստիպուած էր եղած այդ օրերուն քաղաքէն հեռանալու:

Եթէ երբեք բացակայութեան պատճառը իստագոյն հրահանգ մը չըլլար, շատ վստահաբար Խանջեան իր ժողովուրդին հետ պիտի մասնակցէր թաղումին:

Խաչիկ Բաղդիկեանի յօդուածին մէջ այս մասին նշուածը, գորտորեւ կը մէջբերեմ, ճիշդ եւ տրամաբանական է.

«Միւս օրը Ալազան գնում է Կենտրոն ու իր համերկրացի Խանջեանին (երկուսն էլ ծնուել են Վանում) պատմում երեկուայ խայտառակ արարքի մասին: Խանջեանն անսահման յուզուել է ու Ալազանին ասել, որ կարելոր գործով քաղաքից բացակայելու է (գուցէ Բերիան էր կանչել) եւ խնդրում է, որ մեծ շուքով թաղեն պայծառ Կոմիտասին»:

Այսպիսով Աղասի Խանջեան չկարողացաւ իր յարգանքը արտայայտել նման հազարաւոր հայորդիներու, որոնք երկու օր, իրենց գլուխները խոնարհած անցան հանճարի դադարին առջեւէն:

«Հայաստանի Խորհրդային Երգահանների Միութիւն»ը նախընթացը չունեցող, մեծաշուք կերպով կը կատարէ Կոմիտաս վարդապետին յուղարկաւորութիւնը:

Պաթումի նաւահանգիստէն ներգաղթողները փոխադրող շոքեկառքը սուրալով դէպի Երեւան, անցնելով էջմիածնի կայարանը կը հասնի Երեւանի այժմեան Սասունցի Դաւիթ կայարանը, ուր բազմազար ժողովուրդը դիմաւորութեան եկած էր: Կոմիտաս վարդապետին դադարը կը յանձնուի (Խորհրդա-

յին Երգահաններու Միութիւն»ի ներկայացուցիչներուն: Կանխօրօք պատրաստուած ծրագրին համաձայն ծովածաւալ բազմութեամբ վարդապետին դադարը ուսամբարձ կը տանին Աբովեան փողոցին սկիզբը գտնուող թիւ 1 շէնքը, որ այժմու «Առնօ Բաբաջանեան» կամ «Համերգային փոքր Դահլիճ»ն է: (այդ օրուայ Կուլտուրայի տան սրահը):

Այստեղ մի քանի քստմնելի եւ զագրելի դէպքեր պատահած են Չեկայի գործակալներու կողմէ: Այս մասին հեղինակաւոր վկայութիւններ եւ փաստեր չունենալով չեմ կրնար ըստ-ըստները ներկայացնել հանրութեան: Իսկ, անոնք որոնք այս կէտին մասին ունին վաւերական վկայութիւններ կամ շօշափելի ապացոյցներ կ'արժէ արտայայտուիլ այլեւս:

Ինչպէս նկատեցիք, ազնիւ բանասէրին՝ Արշակ Չօպանեանին բարի բաղձանքներն ու արտասահմանի հայերուն յայտնած փափաքն ու խնդրանքը դարձան «ձայն բարբարոյ յանապատի»:

Խորքին մէջ, հարցը այն չէ թէ՛ Կոմիտաս վարդապետին դադարը Ս. էջմիածին տարուեցաւ կամ ոչ: Այլ՝ ցաւալին ու վշտալին այն է որ, խեղճ վարդապետին թաղման կարգը կիսատ մնացած էր, զայն չաւարտած զինք հողին յանձնեցին:

Այո, համայնավար մտածողութեան համար այս երեւոյթը անիմաստ ու անարժէք կը նկատուի, եւ վստահաբար ալ կարգ մը տգէտ կամ անգիտակ հայերու համար եւս տարբերութիւն չ'ըներ այս հարցը: Սակայն, հայ քրիստոնեային համար ննջեցելի մը թաղման արարողութիւնը կիսատ թողնելու գայն հողին յանձնելը ցաւալի ու անընդունելի արարք է: Եկեղեցականօրէն մեղք գործել է:

Այսօր, տասնըինը տարի է որ, տապալած է համայնավարական վարչակարգը: Փափաքելի է եւ ցանկալի որ, անմահանուն Կոմիտաս վարդապետի այս 140-ամեակին առթիւ, էջմիածնայ Միաբանութիւնը, համազգային տարողութեամբ, յատուկ ուխտագնացութեամբ մը երթայ «Պանթէոն», կիսատ մնացած Կոմիտաս վարդապետի թաղման կարգին արարողութիւնը մեծվայելչութեամբ ամբողջացնէ եւ գերեզմանը կնքէ:

Հայ քրիստոնեային համար որպէս խղճի պարտականութիւն եւ հոգիի անդորրութիւն Կոմիտաս վարդապետի թաղման արարողութեան ամբողջացումն ու գերեզմանին կնքումը բացրձակ անհրաժեշտութիւն է:

Կոմիտաս վարդապետի դադարը տեսութեան համար երկու օր մնալէ յետոյ Կուլտուրայի տան սրահը, մեծ պատկառանքով եւ շուքով կը տարուի «Պանթէոն», ուր համբաւաւոր դէմքեր, ինչպէս Մանուկ Աբեղեան, Աւետիք Իսահակեան, Դերենիկ Դեմիրճեան, Հրաչեա Աճառեան, Փանոս Թերլեմեզեան եւ վարդապետին սաներէն դամբանականներ խօսելէք ետք, ինչպէս նաեւ մէջ ընդ մէջ Կոմիտասեան երգչախմբային գործեր երգուելէ յետոյ, լացող երկնքի անձրեւային արցունքներուն տակ, մեծ երգչուհի՝ Հայկանուշ Դանիէլեանի վարդապետին «Անձրեւ եկաւ շաղալէն» երգին կատարումովը հողին կը յանձնուի վարդապետին յոգնաբեկ աճիւնը:

Պատմութիւնը, սակայն, այսօր քանով չի վերջանար: Շարունակենք:

Փարիզի ժողովուրդը անտեղեակ այս բոլոր իրադարձութիւններէն, մեծ ոգեւորութեամբ իր երախտագիտական զգացումները կը յայտնէ ներգաղթի գործով զբաղողներուն կազմակերպելով շքեղ ճաշկերոյթ մը:

Ահա թէ ինչ կը գրէ ՀՕԿ-ի վարչութեան նախագահ Տօքթ. Գալճեան.

«Քանի մը օր ետք, պաշտօնական ընդունելութիւն մը եւ ճաշկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ Ֆրանսացի եւ օտար անձնաւորութիւններու՝ որոնք իրենց գործօն մասնակցութիւնը բերած էին ներգաղթի կազմակերպման աշխատանքներուն: Այս ընդունելութիւնը տեղի ունեցաւ իր ցանկութեանը վրայ, Հայ Կարմիր Խաչի նախագահ Տօքթ. Պ. Քօլօլեանի բնակարանին մէջ, մեծավայելուչ շքեղութեամբ մը: Հրաւիրուած էին Ֆրանսացի Արտաքին, ներքին եւ Ֆինանսական նախարարները, Փարիզի Սով. դեսպանութեան պետը, Խորհրդային Հայաստանի ներգաղթի լիազօր ներկայացուցիչ Դանուշ Շահվերտեան, Ազգերու Դաշնակցութեան կից գործող Նանսէնեան Կեդր. Գրասենեակի նախագահը, Հայ Գաղթականաց Կեդր. Յանձնաժողովի նախագահը, ինչպէս նաեւ Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական եւ Ֆրանսայի ՀՕԿի Կեդրոնական վարչութեան ղեկավարները:

Այս ցանկը ուզեցի դնել այստեղ ցոյց տալու համար կատարուած գործին տարողութիւնը:

Դանուշ Շահվերտեան գործերը յաջողութեամբ աւարտած ըլլալով մեծ գոհունակութեամբ Յուլիսի վերջաւորութեան կը վերադառնայ Հայաստան:

Խօսքը կրկին տամ Տօքթ. Գալճեանին.

«Ընկեր Շահվերտեանը փա-

րիզէն մեկնեցաւ Յուլիսի վերջերը: Անոր մեկնումէն շաբաթ մը վերջ հասած «Խորհրդային Հայաստան» պաշտօնաթերթին մէջ յուզումով ու զարմանքով կարդացինք Աղասի Խանջեանի «անձնասպանութեան» անակնկալ ու տարօրինակ լուրը եւ մանաւանդ այդ լուրին ընկերացող խիստ անվայել ու վարկաբեկիչ խորհրդածութիւնները՝ Ա. Խանջեանի նման անբասիր ու անձնագոհ Մարքսիստ-Լենինիստ յեղափոխական տեսաբանի մը հասցէին: Արտակարգ նիստի մը հրաւիրեցի ՀՕԿ-ի Կեդր. վարչութիւնը՝ խորհրդակցելու համար ստեղծուած այս ծանրակշիռ կացութեանմասին: Յետ խորհրդակցութեան՝ որոշեցինք հեռագիր մը տալ եւ լրացուցիչ տեղեկութիւններ ուզել ՀՕԿ-ի Գլխ. վարչութեանէն:

Մեր հեռագիրը եւ զայն հաստատող պաշտօնական նամակը անպատասխանի մնացին»:


Ներգաղթէն յետոյ եւ Կոմիտաս վարդապետին աճիւնը թաղելէ ետք, շատ չանցած, Լ. Բերիա, Աղասի Խանջեանին կրկին անգամ ժողովի համար Թիֆլիս կը կանչէ: Խանջեան երբ 1936, Յուլիս 4ին ժողովատեղին կը հասնի, Բերիա անոր թիկնապահին՝ Վանային (Յովհաննէս) շէնքէն դուրս կը զրկէ. որմէ ետք ատրճանակով Խանջեանի գլխուն կը կրակէ ու սենեակէն դուր կ'ելլէ: Աղասի Խանջեան տեղն ու տեղը կը մահանայ:

Այս էր եղած նողկալի դէպքը, որ սկիզբը պետական ձեւաւորումով որպէս «անձնասպանութիւն» յայտարարուեցաւ. սակայն շուտով երեւան ելաւ «սպանուած» ըլլալու ճշմարտութիւնը:

Տօքթ. Գալճեան ծանօթագրութեամբ մը կ'ըսէ, թէ եւ շատ աւելի ուշ.

«Հարկ պիտի ըլլար քառօրը

Շաբ.ը էջ 31



**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ
ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱՅՆ
ՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱՂԹԵԼՈՎ ՀԱՄԵՐԱՇԽ ՈՒ
ՆԵՐԴԱՇՆԱԿ ԲԱՐԵՔԵՐ ՏԱՐԻ ՄԸ
ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

ՄԱՍԻՍ - 2010

ՎԱՏՆՈՒԱԾ ՏԱՄՆԱՄԵԱԿԸ

Շարունակում է լք 5-էն

րը, այսօր իրենք նեղը ինկած են ու պարտաւորում կը զգան ընդունելու նուազագույնի պայմանները:

- Ինչո՞ւ համար 15 միլիոն տոլարով կարելի եղաւ Գորիս-Ստեփանակերտ «Կեանքի ճանապարհը» կառուցել ու Արցախը կապել Հայաստանին, բայց աւելի քան հարիւր միլիոնով ոչ Հիւսիս-Հարաւ «ողնաշար» ճանապարհը աւարտել եւ ոչ ալ գէթ Քաշաթաղը (Լաչին) վերաբնակեցնելով (դեռ չհաշուած Մարտակերտն ու Շուշին) մեր դիրքերը ամրապնդել մեր հողին վրայ:

- Ի՞նչ արդիւնքի հասան Հայաստան-Սփիւռք եւ այլ մեծանուն գիտաժողովներու շարանները:

- Ինչո՞ւ համար հարիւրաւոր միլիոն տոլարներ ծախսուեցան Երեւանի կեդրոնի «էլիթար» շէնքերու կառուցման վրայ, փոխան աղէտի գոտիի անմխիթար վիճակի բարելաման եւ գիւղական շրջաններու քանդումին ու հայաթափ-

ման կասեցման:

- Ինչո՞ւ համար Հայաստանի դատարաններուն մէջ իրենց դատը կորսնցուցած մարդիկ արդարութեան կը հասնի Եւրոդատարանին մէջ:

- Ինչո՞ւ համար իշխանութեանէն դուրս գալէ ետք է միայն որ բարձրաստիճան պաշտօնեաներ կ'արտայայտուին իշխանութեան բացթողումներուն եւ սխալներուն մասին:

- Նոյնիսկ երբ հաշուի չառնենք բոլոր օլիգարխներու կեղեքած գումարները, միայն Ռ. Քոչարեանի եւ Ս. Սարգսեանի կողոպտած հարիւրաւոր միլիոններով բաւարար չէ՞ր վերաբնակեցնելու իրենց հարազատ Արցախը եւ գործնականօրէն նպաստելու Արցախեան հիմնահարցի հայանպաստ լուծման:

Անցած տասնամեակի վերելի «նուաճումները» նկատի ունենալով, այս ընթացքով ո՞ւր հասած կ'ըլլանք յաջորդ տասնամեակի աւարտին:

ԳԱԼԻՔ ՏԱՐԻԱՅ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ

Շարունակում է լք 21-էն

դիմութեան ամէն տեսակ կարելիութիւններ կան, պէտք է որ մեր երեխաները իրենց ուսման համար ճիգ ու ջանք չխնայեն, Ամերիկայի կեանքը այնպէս է ծրագրուած, որ ամէն ինչու մասնագիտութիւնը առաջնահերթ տեղն է գրաւում: Յոյսով մեր երեխաները իրենց մեծերի յորդորներին ու խրատներին ունկնդիր ու ուշադիր չեն վրանայ իրենց պարտականութեանց մէջ՝ դէպի վեհին ու վսեմին, բարձին ու գեղեցիկին ձգտելու:

Գալով մեր հասարակական կեանքը աշխուժացնելու գործում սերնդափոխութեան կարիքն է զգացում բոլոր բնագաւառներում, խրախուսենք երիտասարդներին դրամական վճարումներով եւ պատասխանատուութիւն յանձնարարելով նրանց, թող գան եւ ստանձնեն ազգային հասարակական աշխատանքները: Մեր միութիւնները դարձել են ծերանոցներ, մեր վարչութիւնները ծերերի հաւաքածոներ են: Ճիշտ է նրանք անփորձ են, սակայն փորձառութիւն ձեռք կը բերեն եւ հասարակական կեանքը մեծերի հակողութեան ներքոյ կ'աշխուժանայ:

Յաճախ նկատողութիւններ ենք լսում, թէ երիտասարդները անտարբեր են ազգային հասարակական ծառայութիւններին նկատմամբ, նրանք անտարբեր չեն, այլ իրենց ուսումնական եւ այլ ծախսերը հոգալու համար ստիպուած են նաեւ աշխատել: Այդ ուսանողները փոխանակ իրենց ազատ ժամերում գնան (Shopping center)-ներում աշխատելու, թող ազգային հաստատութիւններում ներգրաւեն, այսպիսով երկուստեք կը շահեն: Գիտակից երիտասարդներին պէտք է հովանաւորել, ֆինանսաւորելով նրանց ուսման ծախսերը նրանց կը պատրաստենք հայ դատի աշխատանքների համար, ուրեմն պէտք է դրամ ծախսել մեր երիտասարդներին համար ապագայ հայ դատի ծառայութեան մէջ ընդգրկելու եւ ուծացման դէմն առնելու համար: Հեռուստատեսային սփռումները դաստիարակչական առումով

չեն գոհացնում մեր սպասելիքները մանաւանդ դպրոցական աշակերտների պարագային, թող պատասխանատուները առաւել նախանձախնդիր լինեն մեր մշակութի արժէքներով: Մենք շուրջօրեայ ձայնասփիւռի կարիքն ենք զգում, որ մեքենաներից լաւի նրա ձայնը ողջ Քալիֆորնիայի տարածքում եւ այլուր, ռատիոյի գոյութիւնը մեծապէս օգտակար կը լինի, թող այս ցանկութիւնը լսեն մեր սրտցաւ հայերը, Սարգի Մուրադեանի պէս մարդիկ, եւ այս գործի համար աշխատանք տանեն:

Այն ինչ գրուած է թերթերում մտաւորականների կողմից՝ առաջարկներ, խորհուրդներ եւ մտահոգութիւններ մատող սերնդի հայեցի դաստիարակութեան համար կարծես մնում է ձայն բարբառոյ յանապատի: Հայապահպանման աշխատանքները թոյլ են եւ ոչ բաւարար, հետեւողականութեան կարիքն է զգացում: Փոյթ չենք դարձնում երեխային թէ նա տանը, դպրոցում եւ փողոցում հայերէն չի խօսում, աչքաթող ենք անում եւ լուռ: Շատ կարեւոր է, որ երեխաներին ցոյց տանք, որ մենք անհանգիստ ենք իրենց մայրենի լեզուով չխօսելուն եւ չգրելուն հետ: Որպէսզի երեխաների եւ աշակերտութեան մէջ մեր լեզուի նկատմամբ հետաքրքրութիւն առաւանջ, առաջարկում է պատասխանատուներին՝ մանկական, պատանեկան ձրիաբար գրքեր եւ հոլովակներ ցրել աշակերտութեան մէջ, այո՛, այս գործի համար դրամ պէտք է ծախսել, եթէ մտահոգուած էք:

Հայապահպանման համար կարեւոր է շարունակ փիւռքից աշակերտական խմբակներ ուղարկել Հայաստան, ինչ որ մասամբ արւում է: Ինչ հրաշալի կը լինէր Հայաստանում սփիւռքահայութեան կողմից գիշերօթիկ դպրոց կառուցելը սփիւռքահայ աշակերտների համար նուազագոյն 1000 աշակերտով, տարրականից մինչեւ միջնակարգ դասընթացներ Հայաստանի կրթական համակարգի ծրագրով, ապա նրանց ներգրաւել Հայաստանի բուհերում: Սա յուսալի սպեղանի է լինելու վէրքը բուժելու համար, հասկանալի է

ԿԱՂԱՆԴՊԱՊՈՒԿԻ ՕՐԱԳՐԷՆ

Շարունակում է լք 10-էն

Իշխանութիւն - Ալի պապա եւ իր քառասուն աւագակները՝ եւրոպական կոստումներով, սահրուած ձուածեւ գլուխներով, աջ կամ ձախ ծուած քիթերով ու վերջին նորածեւութեամբ վարդագոյն փողկապներով: Այս բոլորը՝ Մերսետէսներու մէջ կամ Մոնթէթարլօներու բախտախաղերուն առջեւ:

Համազգային միասնութիւն - ձոնշալի սալ մը որ «ներագգային» տարերային ուժերու կողմէ կը քաշկուտուի չորս հակառակ ուղղութիւններով: Ուրեմն կրնայ շարժիլ միայն դէպի վեր կամ վար: Բայց քանի ծանրաբեռնուած է ազգին ցաւերով ու երազներով, շարժելու իրական միակ ուղղութիւնը կը մնայ դէպի վար՝ մինչեւ երկրի կեդրոնը:

Հայաստան - Կը նախընտրեմ լուել: Ի վերջոյ, Յոյսը վերջին մեռնողը կ'ըլլայ:

Հայ-թրքական սահման - Աշխարհագրական միջօրէականի նման երեւակայական բայց շարժուն գիծ մը ներկայ Հայաստանի միջեւ որ այժմ զարմանալիօրէն թուրքիա կը կոչեն: Այս սահմանը պատմութեան մէջ բազմիցս տեղափոխուած է դէպի արեւելք: Սահմանը շարժելու, բանալու, փակելու, շրջափակելու կամ ջնջելու մենաշնորհը ամբողջութեամբ վերապահուած է թուրք գարտաշ իշխանաւորներուն: Ներկայ մոմենտին, շարժունակութիւնը եւ բացման աշխատանքները յառաջ կը տարուին Չանգեզուրի, Մեղրիի եւ... անուղղակիօրէն, Արցախի ուղղութեամբ:

Ղարաբաղ - Ըստ վերջին հայ-իշխանական վարկածի մը՝ հայ արիւնարբու ազատամարտիկներու կողմէ ապօրինաբար գրաւուած տարածքներ: Որպէս պատիժ, ազատամարտիկները ազատագրուած են՝ նորովի մտածող հայ բարեպաշտ ու դրացիասէր ոստիկանութեան կողմէ:

Պատմական ենթայանձնաժողով - Տեսակ մը դիւանագիտական

օրօրոց որու պատմական բոլոր հարթութիւններուն կը պատրաստուին խմբովին ճօճիլ հայ, թուրք, շուէյցարացի (գուլցերիացի) եւ միջազգային այլ փորձագէտներ (everyone welcome!) օդին մէջ միասնաբար երգելու համար Յեղապանութեան ու երգիչները (հոգեհանգիստը):

Սահմանադրական դատարան - Ժողովուրդի նվաճողներուն սահման դնող թատերական ներկայացում որուն գլխաւոր առաքելութիւնն է գուարձացնել նախագահական պալատի արքայազունները:

Սահմանադրութիւն - Նախագահական նրբին - ու կոշտ - քմայքներու անասման դրութիւնը ամրագրող մի «տակումենտ» (փաստաթուղթ):

Սարդարապատ - Ռազմադաշտ ուր կուռոդները շուարած են՝ պայքարը արտաքին թէ՞ ներքին թշնամիներու դէմ է:

Սփիւռքի նախարարութիւն - Ի՞նչ ըսիք: Սփիւռքի... Ի՞նչ...:

Յեղասպանութիւն - Առասպել կամ յուշ դարձած հնադարեան գրոյց մը որ առնչուած է ներկայիս սփիւռքահայ յորջորջուած գնչու ժողովուրդի մը հետ: Արձանագրութիւնները (Protocols) վերջնականապէս լուծելու վրայ են այս խնդիրը՝ հաստատելու համար թէ իրապէս առասպել մըն էր եղածը: Ապացոյց՝ պատմական յանձնաժողովը:

Քաջութիւն - Ժամանցուած յատկութիւն մը որ մերօրեայ Սերժիտանի մէջ փոխարինուած է կեղծիքի, շողքորթութեան, մեղկութեան ու նենգութեան շնորհներով ձեռք բերուած քաղաքական սահրագլուխներով: Այս վերջիններուն առջեւ կամ ծունկի կու գան, կամ կ'ազատագրուին հայ ազգին անուղղայ քաջերը:

Ֆուլթոլային դիւանագիտութիւն - Իրական աղուէսներու եւ կեղծ գառնուկներու միջեւ իւրաքանչիւր խաղ մը ուր երկու թիմերն ալ գնդակը պէտք է խուփ տան երրորդ բերդի մը մէջ որ... իրական գառնուկներուն է՝ հայ ժողովուրդին լքեալ բերդը:

տակնութեամբ կայուն ու կանգուն եւ ազգային ռազմավարութեամբ քաղաքական նպատակակէտ, ժողովրդավար ու ազատ, հանդէպ երկրի քաղաքացիներին սրտցաւ ու պատասխանատու, թոյլին եւ տկարին հոգատար:

Շնորհաւոր Ամանոր, շնորհաւոր Ս. Ծնունդ, մեր սրտազին մաղթանքն է՝ բոլորս միասնաբար լծենք հայրենիքի վերելքի աշխատանքներին, որպէսզի մեր գաւաակները խաղաղ եւ ապահով կեանք ունենան, նաեւ զօրակները մեր սփիւռքեան գաւաակներին հայապահպանման առաքելութեան:

ՕՐԵՐՈՒ ՍԱՀԱՆՔԻՆ ՀԵՏ

Շարունակում է լք 16-էն

Անցնող օրերը մտահոգիչ օրեր դարձան տնեցիներուն ու հարազատներուն համար: Այդ լուսցող գիշերուան միջադէպէն ասդին Քեռին չգտաւ ինքզինք: Իր մէջ բոյն դրած ջերմախտը չի լքեց գինք բնաւ: Թոքերու ուժեղ բորբոքում մը անկողնին դամբեց գինք, որ օր մըն ալ անակնկալօրէն շիջեցաւ, Մարտի տեղատուապի անձրեւտ օր մը:

Ինչպէս բոլորին, նոյնպէս եւ

վահիկին համար անսպասելի կորուստ մը դարձաւ Քեռիին մահը, որ որպէս մնայուն մղձաւանջ, հալածեծ գինք տիւ ու գիշեր:

Անգամ մը, իր մէկ անմխիթար վիճակին երբ այցելեց Քեռիին ու յուզումնախառն հոգեվիճակին մէջ հարցուց անոր, թէ ինչո՞ւ այդպէս անժամանակ ու անակնկալ եղաւ Քեռին մահը՝ Քեռիինը հազիւ կրցած էր յուշել իր ականջին.

- Որովհետեւ, Քեռին շատ սիրեց քեզ:

ՄԱՍԻՍ - 2010

ԱՐԵՎԻՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ Ա. ԾՆՆԴԻԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Շարունակում է 12-էն

Ժամանակներու յարուցած վտանգները գոհողութեան բացառիկ չափերով:

Յիսուսի Ծնունդը տօնախմբել կը նշանակէ մեր վրայէն թօթափել մարդկային տկարութիւններն ու մեղքը եւ ընտրել բարի ու արդար կեանքի ճանապարհը: Ահաւաստիկ այս հանգամանքն է մասնաւորաբար, որ հոգեւոր ուրախութեամբ կը լեցնէ մեր հոգիները, մեր միտքն ու սիրտը: Յիսուսի Ծնունդը կը բացայայտէ Աստուծոյ սէրը մարդկութեան նկատմամբ եւ այս ճշմարտութիւնը մեր մէջ կը հաստատէ այն գիտակցութիւնը, որ մենք գաւազներն ենք Աստուծոյ, եւ ունինք կարողութիւնը Աստուծոյ հետ հարգակցութեան մէջ մնալու, որովհետեւ Աստուած ինք մարդկութիւնը սիրեց եւ դարձուց իր սիրոյն նպատակը, որուն պատճառով ալ Աստուածային սէրը իր արտայայտութեան որպէս բարձրակէտը ունեցաւ Աստուածորդու պատարագումը խաչին վրայ, որով երաշխաւորուեցաւ մարդ եւ Աստուած յարաբերութեան յաւիտենականութիւնը:

Ահաւաստիկ այս իսկ պատճառով մեզի տրուած ճշմարիտ գնահատականը չի կրնար կայանալ այն բանի մէջ, թէ մենք ինչպէ՞ս կ'ընկալենք մեր հոգեւոր արժէքները, իրագործումները: Ճշմարիտ գնահատականը մեզի պարզեւորող Աստուած ինք է: Հետաւեալ, էականը այն է, թէ ինչքանո՞վ Աստուծոյ հաշիւն ընդունելի եւ հոգեւորապէս հարուստ է մեր կեանքը:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ, Լեցուցէ՛ք ձեր կեանքը Աստու-

ծոյ սիրոյ շունչովն ու իմաստութեամբ: Մանուկ Յիսուսի Սուրբ Ծնունդը Աստուածային շնորհքի ու նոր կեանքի հրաւերն է, որուն առջեւ խոնարհող մարդկութիւնը իր մէջ անկասկած պիտի զգայ լեռները շարժելու չափ հաւատքի գորութիւնը:

Յիսուսի Ծնունդը տօնախմբենք ստեղծագործ կեանք մը արձանագրելու գիտակցութեամբ եւ մեր կեանքը նուիրելով համայն աշխարհի խաղաղութեան, ծառայելով հիւրընկալ այս երկրին՝ Միացեալ Նահանգաց, հոգու մեր պարտքը կատարելով պապենական մեր Մայր Երկրի՝ Հայաստանի ու ազատագրեալ Արցախի նկատմամբ, միշտ վառ պահելով մեր սրտերուն մէջ երազը նահատակներուն, նուիրումի ու գոհողութեան բարձր գիտակցութեամբ լայնօրէն բաց պահելու մեր եկեղեցիներու, դպրոցներու եւ մշակութային հաստատութեանց դռները, բայց ամենէն աւելի անխախտ պահելու հայ ընտանիքը իր բոլոր անանդութիւններով ու սրբութիւններով, որպէս ճշմարիտ պատգամ հայ նորահաս սերունդին: Կեանքի այս օրինակով ճանապարհ կը բանայ Յիսուսի Ծնունդը մեր առջեւ, որպէսզի ապրինք Աստուծոյ ծառայութեամբ, ծառայութիւն մը, որ կեանքի ուղեգիծ է վերագծուած մեր առօրեայի մէջ: Տօնախմբեցէ՛ք մանուկ Յիսուսի Ծնունդը, որպէսզի ձեր հոգիներն մէջ զգաք նոր կեանքի ծնունդը ի Քրիստոս:

Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիք՝ Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ. Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի: ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ԾԵՄԻՆ

Շարունակում է 11-էն

Ազգային ժողովում՝ արգիլել Հայաստանի անշարժ գոյքն ու կալուածքները վաճառել օտարերկրացիներին, լաւագոյն դէպքում վարձով տալ՝ նկատի ունենալով հարցեր առաջանալու դէպքում այն օրէնքի ուժով ետ վերադարձնելու համար:

Թուրքիան արձանագրութիւնների վաւերացումը իր խորհրդարանում բաց է բաց կապում է Արցախի հարցի լուծման հետ, որի մասին յայտարարեց Թուրքիայի վարչապետ Ռեջեօ Թայիփ էրդողանը նաեւ սոյն թուի Դեկտեմբերի 7-ին ԱՄՆ-ի նախագահ Պարաք Օպամայի հետ հանդիպումից յետոյ տրուած մամուլյա տուժիտում. «...ԵԱՀԿ Մինսկի խումբը պէտք է լուծէ Լեռնային Ղարաբաղի հարցը, որմէ յետոյ կը կարգաւորուի յարաբերութիւնները Հայաստանի հետ: Ան աւելցուցած է, որ հակառակ Հայաստանի հետ յարաբերութիւններուն վերաբերող փաստաթուղթը արդէն ներկայացուած է Թուրքիոյ խորհրդարանին, բայց եւ այնպէս, քանի դեռ Ղարաբաղի ինդիքը լուծուած չէ, Թուրքիոյ համար բարդ կ'ըլլայ լուծել հայերու հետ ինդիքները» (տե՛ս «Օպամա-էրդողանի հանդիպումին» «Մասիս», Շաբաթ, Դեկտեմբեր 12, 2009, էջ 4): Փաստօրէն Հայաստանը յայտնուել է ծուղակում: Ձոն Հոպկինսի համալսարանում էլ լրջութի ժամանակ նա յայտարարել է նաեւ, որ «Իմ նախնիները ցեղապանութիւն չեն գործած»: ԱՄՆ-ն Արցախի հարցը չի կապում Հայաս-

տան-թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման հետ: Նա կարող է ճնշում գործադրել Թուրքիայի վրայ արձանագրութիւնները վաւերացնելու գործում, դարձեալ շահարկելով Հայերի ցեղասպանութեան հարցը՝ սպառնալով, որ ԱՄՆ-ի կոնգրեսը կարող է Հայերի ցեղասպանութեան ճանաչման որոշում ընդունել:

«Քալիֆորնիա Քուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Յարութ Սասունեանն առաջին արձագանքողներից եղաւ Թուրքիայի վարչապետի Ուաշինգթոն այցին, որն իր «Ցեղասպանութիւնը Ժխտող էրդողանը Սպիտակ Տանը անարժան հիւր» յօդուածով (տե՛ս «Նոր Հայաստան», Ուրբաթ, Դեկտ. 18, 2009, էջ 8) եւ մանրամասն վերլուծութեամբ ելոյթ ունեցաւ էրդողանի այցի մասին ԱՄՆ-ում USArmenia հեռուստաձրագրով՝ քննադատելով նրա անբարոյական կեցուածքն, անյարգալի ու անարգալից արտայայտութիւնները Հայերի ցեղասպանութեան վերաբերեալ և այլ հարցերում:

Եթէ Թուրքիան միտումնաւոր ձգձգի արձանագրութիւնների վաւերացումը խորհրդարանում, ապա հնարաւոր է, որ Հայաստանը հրաժարուի իր ստորագրութիւնից այդ փաստաթղթի տակ՝ հանգստացնելով համայն հայ ժողովրդին և աւելի ամրապնդելով Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները, որը կը լինի 2010 թ. Նոր Տարուայ նուէրը հայ ժողովրդի:

Լաւատեսութեամբ՝ Շնորհաւոր Նոր Տարի և Ս. Ծնունդ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԴԱԳԱՂԸ

Շարունակում է 28-էն

դար սպասել՝ պաշտօնապէս իրագեկ ըլլալու համար ճշմարտութեան: Արդարեւ 1961ին էր որ Սով. Միութեան վարչապետը Խրուչչէվ 22րդ համագումարին մէջ կը յայտարարէր թէ Հայաստանի Կոմկուսի Ա. քարտուղար Աղասի Խանջեան սպաննուած էր հակայեղափոխական եւ արիւնարբու լրտես վրացի Պերիայի ձեռամբ»:

Ճիշդ այդ օրերուն կը փոխուէր նաեւ Երեւանի ՀՕԿ-ի նախագահը:

«Նոր նախագահը, կ'ըսէ Գագնեան, ընկ. Մանուչարեան հագուարէպօրէն կը պատասխանէր մեր նամակներուն: Նոյնը կրնամ ըսել նաեւ ընկ. Տիգրան Զաւէնի համար որ այդ օրերուն կը պահէր տակաւին Գլխ. Վարչութեան քարտուղարի պաշտօնը: Իրմէ ստացուած ամենավերջի նամակը կը կրէր 7 Մարտ 1937 թուականը: Անկէ չետոյ բացարձակ լուր չիւն: Քսան-մէկ տարի ետք, իբրեւ թուրիսթ հայրենիք այցելութեան միայն պիտի իմանայի թէ բանտի մէջ կացի-նահար մեռցուած է (Ապրիլ 1938ին) հայատեաց ճիւղի Պերիայի հայ գործակալներու ձեռամբը»:

Դանուշ Շահվերտեանին նամակագրութիւնն ալ ատեն մը վերջ կը դադրի: Վերջին գրած նամակը կը կրէ 8 Փետրուար 1937 թուականը:

Տօթ. Գագնեան կ'ըսէ. «Դարձեալ 1958ին միայն պիտի տեղեկանայի թէ Երեւանի բանտին մէջ մեռած էր, չկրնալով դիմանալ գրկանգներուն եւ ենթակայ եղած խոշտանգումներու»:

Գագնեանի այս տեղեկութիւնը

թերի ու պակասաւոր է, ինչպէս նաեւ անճիշդ:

Կոմիտաս վարդապետին մարմինը առանց պետական վերին արտօնութեան փարիզէն Հայաստան ղրկուելու համար, Դանուշ Շահվերտեանի ստացած պատիժին մասին աւելի ստոյգ ու ամբողջական տեղեկութիւնը կը գտնենք Գալիֆորնիոյ «Նոր Կեանք»ի Փետրուար 22, 2007 թիւին մէջ, Ս. Դանիէլեանի ներկայացուցած «Կոմիտասի Երեւանի թաղումին մասին փաստաթուղթ մը» անուն յօդուածի վերջաւորութեան, այսպէս.

«Չնայած Կոմիտասի յուղարկաւորութիւնը թոյլատրուեցաւ, վերոնշեալ հեռագրի (կ'ակնարկուի Խանջեանի այն հեռագրին գորդկած էր Լ. Բերիային) պատճառով 1937 թ. Դ(անուշ) Շահվերտեանի ընտանիքը եւ եղբայրները ձերբակալուեցին եւ գնդակահարուեցին»:

Հայ երաժշտութեան Արարատին, հանճարեղ Կոմիտաս վարդապետի ծննդեան 140-ամեակին առթիւ, յուսամ այս համեստ ուսումնասիրութեամբս վարդապետին աճիւնը հայրենի հողին մէջ թաղելու համար Մայիս 9, 1936ին Փարիզէն Հայաստան փոխադրութեան եւ թաղման առեղծուածին վրայ կարողացայ լոյսի նշոյլ մը ձգելով յատակացնել եւ ճշմարտութեան մցնելով հաստատրէն ըսել թէ՛ Կոմիտաս վարդապետին դագաղը երկարկանի չէ եղած, եւ զայն առանց բարձրագոյն արտօնութեան Հայաստան ղրկողը՝ Դանուշ Շահվերտեան անպատիժ չէ մնացած:

(Վերջ)

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՀԵՌՈՒՍՏՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ (ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ) GLOABCAST SATELLITE ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎԱՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՅԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ: Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125 Վարձման գներն են՝ Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400 Long Weekend-ների համար՝ \$ 500 Մէկշաբաթուայ համար՝ \$ 675 Մէկ ամսուայ համար՝ \$ 1450

ՄԱՍԻՍ - 2010

ՎԵՐՆԱՏՈՒՆԸ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ 1898-1904

Ստեղծագործական աշխատանքին զուգընթաց թուամանեանը մասնակցում է մի շարք գրական-հասարակական ձեռնարկներին, որոնք նպաստեցին նրա գեղագիտական ըմբռնումների խորացմանը, նախապատրաստեցին նրա տաղանդի այն բուռն վերելքը, որը տեղի ունեցավ դարասկզբին: Այսպէս, 1898-99 թթ. նա գրուց դասախօսութիւններ է վարում թիֆլիսում կազմակերպուած «Ծիածան» աշակերտական ընկերութեան պարապմունքների ժամանակ, նիւթ ունենալով տասնիներորդ դարի հայ գրականութիւնը, մանաւանդ բանաստեղծութիւնը: Իսկ 1898ին սկսւում են իշխանուհի Մարիամ թուամանեանի տանը կազմակերպուող գրական «Հինգշաբթիները», որոնց ակտիւօրէն մասնակցում էր նաեւ բանաստեղծը:

Սակայն շատ աւելի կարեւոր

դեր խաղաց 1899 թ. կազմակերպուած «Վերնատուն» գրական խմբակը, որին, բացի թուամանեանից, որպէս մշտական անդամներ մասնակցում էին Ղազարոս Աղայեանը, Լեւոն Շանթը, Աւետիք Իսահակեանը, Դերենիկ Դեմիրճեանը, քննադատ Նիկոլ Աղբալեանը: Բացի նրանցից, «Վերնատուն» պարապմունքներին տարբեր առիթներով մասնակցել են նաեւ ժամանակի ուրիշ ականաւոր գրողներ, մշակութային գործիչներ: Մինչեւ 1904-1905 թթ. կանոնաւոր գործած այդ խմբակների հաւաքներին ընթերցւում է քննարկուում էին նրա անդամների նոր ստեղծագործութիւնները, համաշխարհային գրականութեան եւ ժողովրդական բանահիւսութեան նշանաւոր երկերը՝ հին յունական ողբերգակներից մինչեւ հերոսական էպոսի յուշարձանները, Շեքսպիրից ու Գեօ-

թէից մինչեւ բայրոն, Պուշկին, Լերմոնտով, մինչեւ աւելի նոր հեղինակներ: Այդ շրջանում արդէն թուամանեանի գրական նախասիրութիւնները վերջնականապէս կողմնորոշուած են դէպի Շեքսպիրն ու Պուշկինը, առաջինը գրաւում էր նրա իր համապարփակ լայնութեամբ, մարդկային հոգեբանութեան ամենանուրբ ծալքերը թափանցելու վիթխարի ուժով, իսկ երկրորդը՝ պարզութեան եւ խորութեան բնական միասնութեամբ, ժողովրդականագոյցին ոգու հանճարեղ մարմնաւորումով: Ստեղծագործական այդ բարձր յատկանիշները որոշակիօրէն բեկուեցին դարասկզբին թուամանեանի գրած կամ վերամշակած երկերի մէջ: «Ինձ միշտ թուացել է, - յիշում է «Վերնատուն» ակտիւ մասնակից Դ. Դեմիրճեանը, որ նա (թուամանեանը) ստեղծագործութեան գաղտ-

նիքները վերցնում էր Շեքսպիրից եւ գործադրում Պուշկինի նման»:

Նոր դարի սկզբին թուամանեան արդէն թեւակոխում է իր գեղարուեստական զարգացման երկրորդ՝ ըստ ամենայնի բարձր ու կատարեալ շրջափուլը: Այդ շրջափուլի առաջին փայլուն արտայայտութիւնը եղաւ այն, որ 1901-1902 թթ. թուամանեանը բարեկամների (Փ. Վարդապարեան, Մ. թուամանեան եւ ուրիշներ) օգնութեան շնորհիւ հնարաւորութիւն ստացաւ ժամանակաւորապէս կտրուելու առօրեայ հոգներից եւ նուիրուելու ստեղծագործական աշխատանքի: Յատկապէս արդիւնաւէտ իր 1902 թ. «Աբասթուանի աշունը», երբ նա աւարտեց «Անուշ»ի, «Դէպի Անհուն»ի վերամշակումը, գրեց թմկաբերդի Առումը ու «Փարանա»ն, աշխատում էր «Մասունցի Դաւիթը» եւ «Հին կուրը» պոէմների վրայ:



Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association



A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205

ԵՐՔԵՔ ՈՒԾ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax : -----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ
 ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
 (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

.ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՐՁՈՒ
ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Avenue
 Pasadena, CA 91107

Գրասենյակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 10:00-ից 12:30
 Կլէմսէյի 280-րդ կայանից



**ԼԱԻԱԳՈՅՆ
ՄԱՂԹԱՆՔՆԵՐՈՎ՝**

**ՇՆՈՐՀԱԻՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ**

**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՎԻԳԷՆ ԵՒ
ՍԱԼԲԻ ՄԱՆԿՐԵԱՆ**

MISSION

WINE & SPIRITS

***Merry Christmas &
Happy New Year***

Pasadena

**1801 E Washington Blvd.
Pasadena, CA 91104
626-797-0500**

Glendale

**825 W Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
818-242-0683**